

ՍԿԵՍՈՒՐՆԵՐԻ
ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒՄԸ
ԵՎ ՍԵՌՈՎ
ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ
ՀՂԻՈՒԹՅԱՆ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ
ԸՆԴՀԱՏՈՒՄՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

*Գոհար Շահնազարյան,
Սիրան Հովհաննիսյան, Սյուզաննա Գրիգորյան*

ԵՐԵՎԱՆ 2017

ՀՏԴ 316

ԳՄԴ 60.5

Շ 212

Շահնագարյան Գ.

Շ 212 Սկեսորների դերակատարումը և սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումները Հայաստանում/ Գ. Շահնագարյան, Ս. Հովհաննիսյան, Ս. Գրիգորյան.- Եր.: Ասողիկ, 2017.- 70 էջ:

ՀՏԴ 316

ԳՄԴ 60.5

ISBN 978-9939-50-373-8

Բովանդակություն

Ներածություն	4
1. ՀԱՐՍ-ՍԿԵՍՈՒՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՆԱՀԱՊԵՏԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ	6
2. ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ	14
2.1. Մանկություն, ծնողական ընտանիք	15
2.1.1. Պատժի դրսևորումները և դրա գենդերային առանձնահատկությունները	18
2.2. ԿրթնութՅՈՒՆ ԵՎ ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	21
2.3. ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ԿԱՐԻԵՐԱ	25
2.4. ԻՆՔՆԸՆԿԱԼՈՒՄ, ՀԱԶՈՂՈՒԹՅՈՒՆ, ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆ	29
2.5. ԱԶԱՏ ԺԱՄԱՆԱԿ	36
2.6. ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԴԵՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	38
2.7. ԿՆՈՋ ԻԴԵԱԼ	47
2.8. ԱՄՈՒՄՆԱԿԱՆ ԿՅԱՆՔ	49
2.8.1. Ապագա ամուսնուն ծանոթանալու գործընթացը	49
2.8.2. Ակնկալիքներ ամուսնական կյանքից և հարաբերություններ ամուսինների հետ	51
2.8.3. Հարաբերություններ սկեսուրների հետ	53
2.8.4. Տղա ունենալու ճնշում	57
2.8.5. Ամուսնու ընտանիքում հարմարվելու ռազմավարությունը	59
2.9. ՍԿԵՍՈՒՐ-ՀԱՐՍ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	63
2.9.1. Բռնություն հարսի սկստամամբ	63
2.9.2. Սկեսուրների ինքնաընկալումը և դերը տղայի ընտանիքում	66

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ավանդական մտածողության հասարակություններում և սոցիալական ուղղվածության տեսական մոտեցումներում ընտանիքը դիտարկվում է որպես մարդկության զարգացման, սերունդների վերարտադրման և մշակութային արժեքների փոխանցման հիմնական միավորը: Ավանդական հասարակարգերում է, որ ընտանիքի՝ որպես միակ և բարոյապես ընդունելի միավորի սահմաններում, զարգանում և ամրապնդվում են մարդ էակի համար այդքան նշանակալի հանդիսացող մտերմիկ հարաբերությունները, ջերմությունը և անվտանգությունը: Հատկապես այս հարաբերությունների տեսանկյունից հետաքրքրական է տարբեր հասարակություններում ընտանիքի կառուցվածքի և դրանում գործող հարաբերությունների տիպերի ուսումնասիրությունը:

21-րդ դարում ընտանիքի մասին խոսելիս անհրաժեշտություն է առաջանում նաև անդրադառնալ դրա առանձին տարրերին՝ մասնակիցներին և նրանց կենսաբանական ու սոցիալական բնույթագրիչներին: Ընտանիքի հիմնական տարածված ձևերին անդրադառնալով, կարող ենք առանձնացնել նուկլեար և ընդարձակ՝ երկսեռ ծնողներից կազմված ընտանիքները, որոնք հնարավորինս ստույգ են նկարագրում այսօրվա ընտանեկան իրականությունը:

Հայաստանյան իրականությունում, որում առանձնահատուկ տեղ ունեն ավանդապաշտության կողմնակիցները, ընտանիքը հիմնականում ունի իր դասական տեսքը (չնայած նրան, որ գնալով ավելանում են նուկլեար տիպի ընտանիքները)՝ ամուսնական ծնողական զույգ, երիտասարդ ամուսնական զույգ, երեխաներ (թոռներ), ինչ-որ դեպքերում՝ այլ ազգականներ: Թվարկված առաջին երկու սերունդների դեպքում միանշանակ է երկու սեռերի առկայությունը՝ կենսաբանական տղամարդ և կենսաբանական կին, ովքեր, ենթադրվում է, որ բնական վերարտադրության արդյունքում նոր սերունդ են ստեղծում: Այլ հարց է, թե ինչպիսին է կրտսեր սերնդի՝ երեխաների և թոռների սեռային կազմը:

Բացի այս գործառնայից հետաքրքրական է նաև լոկալ հիմքեր ունեցող ընտանիքներում գոյություն ունեցող հիերարխիան: Ո՞վ է ընտանիքի գլուխը, ինչո՞վ է պայմանավորված այս կամ այն սեռի ներկայացուցչի՝ գլուխ լինելը կամ դառնալը, ինչո՞ւ է կարևոր վերահսկողությունը ընտանիքում կանանց մոբիլության և նրանց վարքի նկատմամբ. հարցեր, որոնք առաջանում են ոչ միայն ընտանեկան բռնության բազմաշերտ և բազմակողմանի դրսևորումների արդյունքում, այլ նաև Հայաստանում մեծ տարածում ունեցող և երկիրը զգալի ժողովրդագրական հիմնախնդիրների և դրանից բխող հետևանքների առջև կանգնեցնող անվերահսկելի պրակտիկայի՝ սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների (ՄԳՀԱԸ) արդյունքում:

ՄՊՀԱԸ-ն իրենից ենթադրում է մի գործընթաց, որի ընթացքում տեղի է ունենում հղիության արհեստական ընդհատում (արքորտ)՝ պայմանավորված պտղի՝ արական կամ իգական սեռի պատկանելիության հանգամանքով: Լինելով սեռով պայմանավորված ընդհատում՝ գործընթացը և այն գործի դնողները ամբողջ աշխարհում թիրախավորում են հիմնականում աղջիկ երեխաներին: Նշված հանգամանքն ունի մի շարք պատճառներ, որոնք չնչին տարբերություններ ունեն աշխարհի տարբեր երկրներում՝ ԱՄՆ, Միսգապուր, Նեպալ, Ալբանիա, Չինաստան, Կորեա, Հնդկաստան, Հայաստան: Պատճառների շարքում կարող են հանդես գալ ոչ միայն ընտանիքի սոցիալ-տնտեսական անապահով վիճակը, ընտանիքում նախընտրելի երեխաների թվի առկայությունը, միգրացիոն արագ աճող հոսքերը, կոնֆլիկտային իրավիճակները, այլ նաև՝ մի շարք մշակութային ավանդույթները և կարծրատիպերը, որոնք տղա երեխային՝ որպես մարդկային էակ և վաստակի ու ֆինանսական ապահովության հիմնական միջոց, վեր են դասում աղջիկ երեխայից: Ավանդական և կարծրատիպային դիրքորոշումները շատ հաճախ ստիպում են կնոջը դիմելու հղիության արհեստական ընդհատման անմիջապես երեխայի սեռը իմանալուց հետո՝ ի հեճուկս օրենքի սահմանափակումների և հաճախ առանց ընտանիքի մյուս անդամներին դրա մասին տեղյակ պահելու, քանի որ հատկապես բռնության և ճնշման մթնոլորտում կնոջ պատկերացմամբ վերջինս ընտանիքի մյուս անդամների կողմից իրենից ակնկալվող միակ ընդունելի որոշումն է: Այս պարագայում հարցեր են առաջանում, թե ինչպիսի՞ ազդեցություն և դեր ունեն ՄՊՀԱԸ երևույթի առկայության դեպքում հատկապես սկեստուրները, և ինչպե՞ս սկեստուրը՝ որպես ընտանիքում զգալի հեղինակություն ունեցող կին, կարող է նպաստել կամ խոչընդոտել երևույթի զարգացմանը:

«Սկեստուրների դերակատարումը և սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումները» հետազոտության նպատակն է ոչ միայն հասկանալ սկեստրոջ կողմից հնարավոր ազդեցությունը երեխայի սեռի ընտրության վրա, այլ նաև հասկանալ այդ դերակատարման պատճառահետևանքային կապերը կենսագրական պատմությունների հավաքագրման միջոցով: Խորին կենսագրական բնույթի հարցազրույցներից ստացված տվյալների բազմազանությունը ապահովելու համար՝ փորձ է կատարվել նաև ապահովել մասնակիցների բնակության վայրերի բազմազանությունը: Այսպես, հետազոտությունը իրականացվել է Երևան քաղաքում, որի 12 վարչական շրջաններից ներկայացված են 7-ը՝ *Աջափնյակ, Ավան, Էրեբունի, Կենտրոն, Նոր Նորք, Շենգավիթ, Քանաքեռ-Զեյթուն*: Հետազոտության ընտրանքը հիմնվում է կրթության չափանիշի վրա՝ միջնակարգ, միջին մասնագիտական և բարձրագույն: Բացի այդ, ընտրանքում ներառվել են միայն աղջիկ, միայն տղա, ինչպես նաև և՛ աղջիկ, և՛ տղա թոռներ ունեցող կանայք՝ սկեստուրներ: Իրականացվել է թվով 30 հարցազրույց: Հաշվետվությունում անդրադարձ է կատարվում նաև նահապետական հայկական ընտանիքում և հայ գրականության մեջ հարս-սկեստուր հարաբերությունների ուսումնասիրությանը:

1. ՀԱՐՍ - ՍԿԵՍՈՒՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՆԱՀԱՊԵՏԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ

Հարս-սկեսուր հարաբերությունները միշտ եղել են հայկական նահապետական ընտանիքի առանձնահատկություններից մեկը և արտացոլել են հայ հասարակությունում գերակշռող գենդերային հարաբերությունների ողջ շրջանակը:

Ինչպես նշում է Ռ. Նահապետյանը իր «Կինը հայոց ավանդական ընտանիքում» հոդվածում, միայն տարիների ընթացքում հայ կինը ձեռք էր բերում որոշակի ազատություն և իրավունքներ: «Ի նշան հարգանքի, երբ բազմազավակ տարեց կին էր անցնում, ջահել տղամարդիկ ոտքի էին կանգնում և խոնարհվում, դադարեցնում էին ամեն կարգի կոիվ ու վիճաբանություն, երբ միջամտում էր նա: Զգալի տարբերություն կար լեռնային ու հովտային շրջաններում կնոջ կյանքի ձևերի ու տնտեսության մեջ կնոջ ունեցած դերերի միջև: Տանտիկինը նաև վճռորոշ դեր էր խաղում որդիների ամուսնության հարցերում՝ հատկապես ապագա հարսի ընտրության, ինչպես նաև տանտիկնոջ պարտականությունն էր որդիների ընտանիքների միջև տնտեսական հավասարության ապահովումը»:¹

19-րդ դարի վերջին և 20-րդ դարասկզբին հայկական նահապետական ընտանիքում, որտեղ մայրական տոհմի քայքայումից հետո հասարակական կյանքի այլ բնագավառներից բացի տղամարդն իր ձեռքն էր վերցրել նաև ընտանիքի ղեկավարությունը, կանանց փոխհարաբերությունները հիերարխիկ բնույթի էին. ամենաստորին աստիճանին գտնվում էր նորահարսը, ամենավերին աստիճանին՝ սկեսուր-տանտիկինը՝ Մեծ Նանեն: Ըստ այդ աստիճանակարգության էլ որոշվում էր կանանց դերն ու տեղը ընտանիքում: Մեծ տիկինը գերդաստանի լիիրավ տիրուհին էր և բաժանում էր աշխատանքը կանանց ու հարսների միջև: Նա գլխավոր կենտրոնն էր, որի շուրջը համախմբվում էր ամբողջ ընտանիքը: Տանտեր նահապետը չէր խառնվում նրա գործերին: Առանց տանտիկնոջ թույլտվության ոչ ոք ոչինչ չէր կարող նախաձեռնել: Նրա ձեռքում էին գտնվում մատանի բանալիները: Նահապետի կնոջը կարող էր փոխարինել մեծ հարսը, որին սկեսուրը դեռ իր կենդանության օրոք նախապատրաստում էր այդ դերին: Երկրորդ հարսը օգնում էր գորգ, կարպետ գործելուն, երբորդը լվացք էր անում, զբաղվում տան ու բակի մաքրությամբ և այլն: Ամենավատ դրության մեջ գտնվում էր տան փոքր հարսը, որն արթնանում էր ամենաառաջինն ու անկողին մտնում ամենաուշը: Ուշագրավ է, որ

¹ Ռ. Նահապետյան, «Կինը հայոց ավանդական ընտանիքում», [http://hpj.asj-oa.am/2621/1/2009-1\(71\).pdf](http://hpj.asj-oa.am/2621/1/2009-1(71).pdf)

փոքր հարսը կատարում էր տնային գործեր, լվացք անում, բայց իրավունք չուներ լվանալու իր ամուսնու հագուստները, սեղան էր գցում, սակայն դարձյալ իրավունք չուներ ճաշ մատուցելու ամուսնուն. դրանք տան ավագ հարսների իրավունքներն էին:²

Տ. Մեղավորյանն իր «Ազգագրական և իրավաբանական ուսումնասիրությունը հայկական ընտանիքի և ամուսնության վերաբերյալ» աշխատությունում նշում է, որ «Տանտիկիներ և մյուս ամուսնացած կանայք հայկական նահապետական ընտանիքում ավելի բարձր տեղ էին գրավում, քան նրանց նախնիները հռոմեական կամ հունական ընտանիքում: Տանտիկիները բացարձակորեն անկախ էր տնային գործերում: Տնտեսապես նա ներկայանում էր որպես ազատ անձնավորություն և նույնիսկ շատ գործերում ամուսինը դիմում էր նրա խորհուրդներին ու շատ հաճախ լսում նրան...»:³

Կնոջ սկստմամբ արգելքները, թեև ոչ այնքան խստությամբ, սկսում էին կիրառվել դեռևս փոքր տարիքից, հարսնության շրջանում չափազանց խստանում էին և աստիճանաբար նվազում, երբ կինը դառնում էր մի քանի երեխաների մայր, հատկապես երբ հայտնվում էր ընտանիքի ղեկավարի, տան խոստղի՝ նահապետի կնոջ կարգավիճակում, որով իր ձեռքն էր վերցնում գերդաստանի բոլոր կանանց ղեկավարությունը: Փոքր աղջիկների դաստիարակությունը ընտանիքի բոլոր հարսների ու կանանց հսկողության տակ էր, հատկապես՝ մեծ տանտիկնոջ: 4–5 տարեկանից սկսած նրանց սովորեցնում էին մաքրել տունն ու բակը, լվանալ ամանեղենը, կատարել մեծերի հանձնարարականները: 7–8 տարեկանում սովորեցնում էին լվանալ աշխատանքից վերադարձած տղամարդկանց ոտքերը: Այդուհանդերձ, այդ տարիքում աղջիկ երեխաներին ծանր աշխատանքներ չէին հանձնարարվում՝ ասելով. «Աղջիկ երեխա է, մեղք է, պորտը տեղից կընկնի»: Նրանք կարող էին ազատորեն խաղալ տղաների հետ, սակայն զրկված էին դպրոց հաճախելու հնարավորությունից և իրավունքից: 8–12 տարեկան աղջիկների դպրոց հաճախելը սովորույթի ուժով արգելված էր՝ «Աղջիկ երեխան ինչ, ուսումն ինչ»:⁴

Նահապետական ընտանիքում հարսից ակնկալվում էր նաև անպայման տղա երեխա ունենալը: Այսպես, օրինակ, աղձնիքահայերի գերդաստանում առավել ցանկալի ու խրախուսելի էր արու զավակի ծնունդը: Նոր ծնվող երեխայի սեռը որոշելու համար կիրառվում էին զանազան գուշակություններ. կար այն պատկերացումը, թե կինն ամուսնու աջ կողմը քնելու դեպքում արու զավակ կունենար, իսկ ձախ կողմը քնելիս՝ աղջիկ երեխա: Եթե հղի կնոջ երեսը պայծառ լիներ, ակնկալվում էր տղա, իսկ եթե տխուր լիներ՝ աղջիկ: Եթե լողանալուց հետո փոքր մեծանում էր տղա էր,

² Նույն տեղում

³ Ա. Պարսամյան, «Հայ ազգագրության և իրավունքի մարքսիստական ուսումնասիրման առաջին փորձը», [http://lraber.asj-oa.am/4186/1/1981-10\(33\).pdf](http://lraber.asj-oa.am/4186/1/1981-10(33).pdf)

⁴ Ռ. Նահապետյան

հակառակը՝ աղջիկ: Եթե հղի կնոջ կրծքագեղձի պտուկը սև էր՝ արգանդի պտուղը աղջիկ էր, իսկ եթե կարմիր էր՝ տղա: Կամ եթե հղի կնոջ պորտը դուրս է ընկած՝ տղա է ծնվելու, եթե ներս է ընկած՝ աղջիկ: ⁵

Տղա ծնվելիս նրա անկողինը շրջապատում էին տարեց կանայք, որոնք գործադրում էին իրենց մոզական գիտելիքների ամբողջ պաշարը՝ մոր և նորածնի կյանքը «չարքերից», «չար աչքից», «ղևերից» անվնաս պահելու համար: Եթե նորածինը տղա էր ծնվում, ուրախանում ու «աչքալուսանք» էին անում, իսկ եթե աղջիկ էր՝ համբերություն էին մաղթում ընտանիքի տարեց անդամներին: Եթե տղա էր ծնվում, մայրը դեմքը չէր թաքցնում շրջապատողներից, իսկ հորը կամ գերդաստանի նահապետին շնորհավորելով՝ ասում էին. «Թող մեկը դառնա յոթ»: Ունևոր ընտանիքներում նորածին տղայի պատվին մեծ տոնախմբություններ էին կազմակերպում, իսկ աղջիկներ ունեցող հարսներին հաճախ անիծում էին, ասելով՝ «ծնունդդ չորանա, էլի աղջիկ բերիր», քանզի «աղջիկը՝ լավ ու վատ, խղին պատ» էր համարվում: Առավել նվաստացուցիչ պայմաններում էր հայտնվում այն հարսը, ով իրար հետևից աղջիկներ էր ունենում: Նման պարագայում գերդաստանի անդամները իրեն մաղթում էին. «Թող քո ճանճ էղնի, պատին կպած էղնի, թաքի տանը տղամարդ էղնի», կամ «մի քոռ տղան լավ է յոթ առողջ աղջկանից»: ⁶ Տղան միշտ ընկալվում էր որպես «տան ներսի պատ, իսկ աղջիկը՝ դրսի»: «Աղջիկը քարը չղջիկ է, մկան պոչիկ, կատվում տոտիկ», մինչդեռ տղան «խան է, խանգատա, օսկե ջղա է, սուփրի մազա, շորը թագա»: ⁷

Աղջիկներին հարսնության էին նախապատրաստում որոշակի վարքականոնների համաձայն. լինել աշխատասեր՝ «հարսը պարապ չի մնա», առանց մոր կամ տանտիկնոջ իմացության որևէ տեղ չգնալ, միշտ լինել պատրաստակամ հանձնարարականների կատարմանը, պահպանել չխոսկանության, խուսափման սովորությունները: Մինչև հարս գնալը աղջիկը որքան շատ հմտացած լիներ տնային գործերում, որքան շատ բան իմանար ու սովորեր, այնքան ավելի ընդունված կլիներ: Հարսն էլ իր հերթին իր հաջորդին էր ավանդում այն, ինչ սովորել էր մորից և մյուս կանանցից: Այսպիսով, իր հայրական տանը աղջիկը ստանում էր այնպիսի դաստիարակություն, որն ապահովեր նահապետական ընտանիքի ավանդական նորմերը: Նա հենց իրենց տանը եղած հարսների օրինակով արդեն որոշակիորեն պատկերացնում էր իր անելիքներն ու պարտականությունները հարս գնալուց հետո: Նա երբևէ չէր դժգոհում տիրող օրենքի ուժ ստացած սովորոյթներից, որոնք խոր արմատներ էին գցել կենցաղում ու հոգեբանության մեջ: Եվ քանի որ աղջիկները շատ շուտ

⁵ Եր. Լալայան, «Մուշ Տարօն», ԱՀ.գ. XXXI, Թիֆլիս, 1916, էջ 176-177

⁶ Ռ. Նահապետյան «Աղձնիքահայերի մանկան ծննդի և խնամքի ավանդական սովորոյթները և ծեսերը», Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2011

⁷ Ռ. Գրիգորյան. «Հայ ժողովրդկան օրորոցային և մանկական երգեր», Երևան, 1970, էջ 12:

էին ամուսնանում, ապա 9–14 տարեկան հասակում, ընկնելով նոր ընտանիք, հեշտությամբ հնազանդվում էին այնտեղ տիրող կենցաղավարությամբ: «Աղջիկը հոր տանը կծկած կծիկ է, կեսրանց տանը հոր տան կծիկը կքանդեն, նորից կկծկեն, պիտի դիմանաս, քանի անգամ էլ կծկեն: Աղջկա հերն ու մերը կեսրանց տան դռան հետևը դրած են, ինչքան էլ վատաբանեն ու հայհոյեն, դու դիմացի: Աղջկա հերն ու մերը հիմի կեսուրն ու կեսրարն են»: Ըստ երևույթին, նաև սրանով են պայմանավորված եղել վաղ տարիքի ամուսնությունները, որոնք լիովին համապատասխանել են նահապետական գերդաստանի պահանջներին՝ ոչ միայն աշխատող ձեռքերի պակասը լրացնել, այլև հլու, հնազանդ հարս ունենալ:⁸

Ամուսնական ծիսաշարի սկզբնական փուլից՝ աղջիկուեսից սկսած, մանկամարդ աղջկա վարքագիծը կտրուկ փոխվում էր: Նրան այլևս արգելվում էր խաղալ տարեկիցների հետ, հաճախակի երևալ հասարակության մեջ: Նշանած աղջիկն օրվա մեծ մասն անցկացնում էր կանանց և իր դիրքի աղջիկների ու հարսների շրջապատում: Նշանադրության ողջ ծիսակարգի ընթացքում աղջիկը մարդկանց մեջ էր դուրս գալիս տարեց անձանց ցանկությամբ ու պահանջով միայն և այդ դեպքում էլ ներկայանում էր հուշիկ ու անձայն՝ ջանալով ըստ ամենայնի պարկեշտ, հեզ և խոնարհ երևալ ապագա ամուսնուն ու նրա հարազատներին: Անհանդուրժելի արարք էր համարվում, եթե հարսը նստեր ավագների ներկայությամբ, մնար տղամարդկանց ու տարեց կանանց շրջապատում, նայեր նրանց դեմքերին, կերակրեր երեխային ուրիշների ներկայությամբ ու առանց սկեսրոջ հրամանի և այլև: Նորահարսի առաջին տարվա գործունեությունը սահմանափակվում էր տնային տնտեսության նեղ շրջանակներում: Նորահարսը իրավունք չուներ ճաշ եփելու, հաց թխելու, խմոր հունցելու, տան շերեփը վերցնելու ձեռքը, առանց սկեսրոջը հարցնելու մատան մտնելու կամ որևէ բան տալու հարևանին: Դա ամենամեծ հարսի իրավունքն էր: Նա նաև չէր մասնակցում դաշտային աշխատանքներին:⁹

19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարասկզբին աղձնիքահայերի ընտանիքներում հարսի նկատմամբ վերահսկողությունը արտահայտվում էր նաև նրա կրած հագուստի նկատմամբ վերահսկողության միջոցով: Օրինակ, սասունցի կնոջ հագուստի և արտաքին հարդարանքի հանդեպ այնպիսի սահմանափակումներ էին կիրառվում, որոնք կապված էին տարիքային տարբերությունների և սոցիալական մի խմբից ու կարգավիճակից մյուսին անցնելու հետ: Հագուստի և արտաքին հարդարանքի մեջ արգելքներ կիրառվում էին հատկապես նորահարսի, մասամբ նաև՝ տարեց կանանց նկատմամբ: Տարիքային բոլոր խմբերին բնորոշ էր այն, որ նրանք հագնում էին երկար թևքերով, կրծքամասը փակ, մինչև կրունկները հասնող զգեստ: Կնոջ մերկ թևերը, ոտքերը, չպետք է երևա-

⁸ Ռ. Նահապետյան, «Կինը հայոց ավանդական ընտանիքում»

⁹ Ռ. Նահապետյան, «Կինը հայոց ավանդական ընտանիքում»

յին: Հագուստի մեջ կարելի է առանձնացնել նաև այրի կնոջ հագուկապը, որն աչքի էր ընկնում մուգ գույներով և գարդերից գուրկ լինելով:¹⁰

Ըստ իրինդեցի բանասաց Խաչատուր Խափլանյանի՝ Խուրթի Դաշտադեմ և հարևան հայաբնակ գյուղերում կանայք բերանները պարտադիր ծածկում էին գլխաշորով՝ անգամ իրենց հասակակից տղամարդկանց ներկայությամբ, իսկ հարսները մինչև առաջին երեխան ունենալը երեսներին քող էին կրում: Նամուսը թույլ չէր տալիս ջահել կնոջը բաց դեմքով երևալ տղամարդկանց, հատկապես սկեսրայրին ու քավորին: Եթե սկեսրայրը տանն էր լինում, հարսը պետք է ձեռքերը թաքցներ գոգնոցի տակ: Եթե կնոջ վերաբերյալ ասեին՝ «երեսը բացված կին է», նույնն է, թե ասեին՝ «լիրբ»: Հաճախ եթե հարսը լինում էր «գոթի» (տգեղ) կամ «ծաղկի սրնոտ» (ծաղկատար), ապա այդ մասին իմացվում էր միայն երեխա ունենալուց ու քողը երեսից հանելուց հետո: ¹¹

Ամոթալի ու անպատվաբեր էր համարվում հարսին հերարձակ, ինչպես նաև ոտնաթաթն ու կրունկը բաց տեսնելը: Հարսի դեմքը բացելու արարողությունը հայտնի էր որպես «երեստեսնուկ»: Երիտասարդ աղջիկներին և կանանց ընդհանրապես արգելվում էր կտրել մազերը, ներկել աչքերը, միայն ձեռքերն էին հինա դնում, որը կանանց մարմնի խնամքի միակ թույլատրելի և ընդունելի ձևն էր: Երիտասարդ հարսներն իրավունք չունեին մազերը սանրել ավագ տարիքի մարդկանց ներկայությամբ: Եթե հարսը սանրվելիս լիներ և սկեսուրը ներս մտներ, ապա պարտավոր էր անմիջապես ծածկել գլուխը: Մազերը թաքցնելու սովորույթի հիմքում ընկած է այն մտայնությունը, թե հերարձակ, գլխաբաց կինը կարող է նաև դժբախտության պատճառ դառնալ:¹²

Առավել խիստ էին հարսի խուսափումները ամուսնու ծնողներից և մերձավորներից: Նստելիս պետք է դեմքը քողարկեր գլխաշորով, մեջքով չնստեր դեպի մարդիկ: Մեծերի՝ հատկապես սկեսրայրի ներս մտնելիս հարսն արագ պետք է ոտքի կանգներ, գլուխը խոնարհեր, ձեռքերը պահեր գոգնոցի տակ կամ արագ հեռանար. չէր մտնում այն հարկաբաժինը, ուր գտնվում էր վերջինս, չէր նայում նրա երեսին, հարցերին պատասխանում էր գլխի շարժումով:¹³

Նորահարսը օրվա մեծ մասն անցկացնում էր իր անկյունում, պարտավոր էր ամբողջ ժամանակ լռել: Ամուսնու հետ նա խոսում էր գաղտնի, երբ երրորդ անձ ներկա չէր լինում: Չխոսկանությունն ընտանիքի տարբեր անդամների հետ ժամանակային տարբեր սահմանափակումներ էր ընդգրկում: Խուսափումն առավել թույլ էր արտահայտվում հարսի ու ավագ տեգրերի միջև և էլ ավելի թույլ՝ հարսի ու սկեսրոջ միջև՝ կապված

¹⁰ Ռ. Նահապետյան «Դաշտային ազգագրական նյութեր», տետր 11, էջ 9-10

¹¹ Նույն տեղում

¹² Հ. Թումանյան, «Անիծած հարսը», Երկեր 10 հատորով, հ.3, Երևան, 1990, էջ 107-10

¹³ Ռ. Նահապետյան, «Դաշտային ազգագրական նյութեր», տետր 11, էջ 11-12

տնտեսության համատեղ վարման հետ: Այս դեպքում էլ արգելքների վերացումը կատարվում էր սկեսրոջ առաջարկությամբ: Հարսը տեգրերի հետ չէր խոսում մինչև 2-3 երեխա ունենալը, տալերի հետ՝ մինչև ամուսնության մեկ տարին լրանալը, սկեսրոջ հետ՝ սովորաբար առաջին երեխան ունենալուց հետո, բայց հուշիկ և գլուխը խոնարհած: Հարսը քավորի և նրա ընտանիքի հետ ոչ միայն խոսելու իրավունք չուներ, այլև նրանց ներկայությամբ երևալը մեղք էր համարվում: Նոր հարսները պարտավոր էին նաև հարևան տղամարդկանց, հատկապես ծերերի նկատմամբ, իբրև հարգանք, չխոսկանություն պահպանել մինչև 2-3 երեխա ունենալը: Բացարձակ չխոսկանության փուլում հարսը ընտանիքի անդամների հետ հաղորդակցվում էր ժեստերի լեզվով կամ դեռահաս երեխաների միջոցով: Երբ չխոսկանություն պահպանող հարսը ցանկանում էր ինչ-որ բան հաղորդել, ապա տվյալ անձի ներկայությամբ դիմում էր իր երեխային կամ երեսը շրջելով դեպի պատը՝ լսելի ձայնով հաղորդում էր ասելիքը: Խոսելու առաջարկով դիմում էր տան ավագը, խոստանալով նրան որևէ նվեր կամ ասելով՝ «Այս տանն ամեն ինչ քոնն է, խոսիր»:¹⁴

Երիտասարդ կանանց մասին սովորաբար ասվում էր. «Կնիկմարդ ձեռաշոր է», «Կնիկմարդ պետք է փակ լինի, իրավունք չունի օտար կամ դրացի մարդու թև ընկնի», «Ամուսինը կնոջ թագավորն է», «Տղամարդ որ կա՝ գլուխ է, կնիկ որ կա՝ ոտ է» և այլն: Կինը պարտավոր էր լինել ամուսնուն հավատարիմ, ենթակա նրա ծնողներին ու մերձավորներին, անտրտունջ կատարել իր վրա դրված պարտականությունները:¹⁵

Ընտանիքում և հասարակության մեջ առանձնապես պատիվ չուներ ամուլ կինը: Նրան վերաբերվում էին իբրև անպտուղ ծառի, «չոր կոճի»: Տղամարդկանց հավասար ծանր ու դժվարին աշխատանքներ կատարելու համար այդպիսի կինն ընտանիքում նաև արժանանում էր կարելցանքի ու խղճահարության: Մինչդեռ, որքան շատ արու զավակ ունենար կինը, այնքան կշիռ և իրավասություն էր ստանում ընտանիքում ու հասարակության մեջ:¹⁶ «Ես տասը տղամարդու մայր եմ», – լսվում էր շատ անգամ նրանից:¹⁷ Բազմազավակ կանանց գլխաշորը դիտվում էր որպես սրբություն և տվյալ ընտանիքի պատիվը: Դրա միջոցով հաճախ հաշտեցնում էին կովող կողմերին: Հարս-սկեսուր հարաբերությունների մասին կարելի է հանդիպել նաև հայ գրականության մեջ:

Վաթսուսիկնեց տարիներ ուներ Հոփիսիմն տուտուն յուր ուսերուն վրա. Կկասկածեր Աստղիկեն. ամեն անգամ որ վարժապետին տուն գա-

¹⁴ Ռ. Նահապետյան, «Դաշտային ազգագրական նյութեր», տետր 1, էջ 14, 84, տետր 9, էջ 41

¹⁵ Նույն տեղում, տետր 3, էջ 47, տետր 4, էջ 37, 107, տետր 9, էջ 33, 41

¹⁶ Ռ. Նահապետյան «Աղձնիքահայերի մանկան ծննդի և խնամքի ավանդական սովորույթները և ծեսերը», Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2011, էջ 99

¹⁷ Րաֆֆի, Հայ կինը, Երկերի ժողովածու, Հատոր 11, Երևան, էջ 99-159

ցած էր, միշտ գրքով մը զբաղված տեսեր էր Աստղիկը, հասկցած էր, գիտեր թե Աստղիկ Սաղմոս չէր որ կըբաղոր, ու իրեն համարամեն գրքի մեջ, որ աղոթագիրք չէր, սատանա կար, սատանա. Չէր սիրեր Հռիփսիմն տուտուն «գրող-կարդացողը» և Ռուբեն Աղային աղջիկը՝ Սիման, նախապատիվ էր իրեն համար, անվամբ ալ արդեն հաճելի էր սա իրեն, մինչև անգամ, որ Աստղիկի անունը կարտասաններ՝ քիթը բերանը կծոնուկեր, և դեռ անցյալները, շաբաթ մը առաջ, երբ այցելության գացած էր Ռուբեն աղային տունը, տեսեր էր, որ Սիման յուր եղբարց շապիկները «պուզի պես քոլա» մ'էր ըրած...«տանտիկին էր, տանտիկին»:¹⁸

* * *

— Ա՛յ քեզ... *այ, այ, այ...*

Այս խոսքերով նախ երկու ձեռքով պինդ խիտց հարսի գլխին, հետո ծայրահեղ կայրադրությամբ արամները սեղմած՝ սկսեց սուր-սուր եղունգներով կմշտել նրա դեմքը, ձեռքերը, կողերը— ուր որ պարսպեր. ընդամին, ամեն մի կմշտոցի հետ եղունգների մեջ բռնած կաշին ոլորում էր և ձիգ փայխա:

— Ը՛ր...— *ցավից մղկտաց Անանը և, երկու ձեռքով ամուր գրկելով երեխային, խոնարհվեց նրա վրա:*

— *Առանց ինձ չայ էլ ես խմում, հա՛... Այ քեզ... փառ կրոր շաքարից ութն ես թողել, ութ կրոր դառնաս դու... այ քեզ, այ, այ... շար էժան ենք առնում, հա՛, որ քոռ ու փուչ ես անում, քոռանաս ու փչանաս դու... այ քեզ, այ, այ...*

Ու սուր եղունգները դանակի պես ակոսում էին Անանի վրիպ մարմինը:

— *Վրի՛, վրի՛...— մղկտում էր Անանը ցավերից գալարվելով, և նրա ձեռքերը մեքենայաբար ավելի ու ավելի էին սեղմում երեխային, և նա ավելի ու ավելի էր խոնարհվում երեխայի վրա: Իսկ երեխան ասարիկ ճշում էր նրա գրկին:*

Գիժ-Հոռոմսիմի կայրադրությունը գնալով սասարկանում էր: Երկու ձեռքերի սուր եղունգները կարծես անգոր էին նրա բոլոր բարկությունը թափելու: Նրան կայրադեցնում էր առանձնապես այն հանգամանքը, որ Անանը համարյա թե ձայն չէր հանում. կարծում էր, թե ուրեմն հարսը բոլորովին ցավ չի զգում, մինչդեռ սիրտը հովացնելու համար ուզում էր, որ Անանը ճշար, աղաղակեր, լաց լիներ, օգնություն կանչեր, ուստի աշխարհում էր խիտել կամ կմշտել նրա մարմնի այնպիսի մի նրբագուց տեղ, որ հարսը սրիպված էրներ վերջապես բարձրաձայն արտահայտել իր ցավը: Բայց չէ, Անանը համառորեն ձայնը փորն

¹⁸ Տ. Կամարական, «Վարժապետին աղջիկը»: Երկեր, Սովետական գրող հրատարակչություն, 1984 էջ 28-265

էր գցել և, նրա առջև խոնարհիված, գապած հառաչանքներ էր միայն արձակում, որ գիժ-Հոռոմնիմը հազիվ թե լսում էր իր կապադաճ ծկրթոցների և երեխայի լացի մեջ:

Տեսնելով, որ խփելով և կմշտելով ոչինչ չի լինում, գիժ-Հոռոմնիմը պոկեց հարսի գլխից սպիտակ աղլուխը, բռնեց նրա ցանցառ մազերի երկու հյուսերից մեկի ծայրից և ձեռքի ուժգին թափով ձիգ փվեց հանկարծ:

— Ասնասա... — երկար ու սուր ճչաց Ասանը և, սաստիկ ցավից աչքերը փակելով, եր ընկավ մեջքի վրա: Երա թողացած ձեռքերը բաց թողին երեխային: Երեխան նրա գոգից գորովեց ընկավ գետրին և սկսեց ավելի ճչալ:

Հարսի սուր ճիչը, վերջապես, փոքր-ինչ հովացրեց գիժ-Հոռոմնիմի սիրտը. նա թողեց հարսի մազերը, վերցրեց երեխային և, շարունակելով անեծքներ թափել, հոգնած նստեց թախարի վրա ու սկսեց ձեռքերի մեջ օրորել երեխային, որ սուս կացնի: Երա պարիկ, չար աչքերը դեռևս պլպլում էին խելագարի կարաղոթյամբ, քրտինքը վրա էր փվել նեղ ճակարհին. նա հեռում էր՝ երկար փեղ վազած մարդու նման:

Իսկ Ասանը, աչքերը փակ, ընկած էր հարսակին մեջքի վրա և նվում էր միախար, հազիվ լսելի ձայով:¹⁹

Խոտքը չվերջացավ պատավի բերանում. գժված գունջի պես ներս ընկավ մի ահագին մարդ, այնքան ահագին, որ ներս ընկնելուն պես կասես լցրեց իրենով այդ փոքրիկ խրճիթը: Ասանի մարդն էր, դրոգասպան Յագորը, իր դրոգի պես կոպիտ ու անբաշ, իր հսկա ձիու պես խոշոր ու ջլասիկնդ:

— Վոյ, չիփես, Յագոր ջան... հոգուդ մեռնեմ, չիփես, ջանս ցավում ա,— աղաչեց Ասանը գլուխը երկարացրած և երկու ձեռքով պինդ գրկած իր ոսկրացած ուսերը:

— Չիփեմ, չիփեմ,— որոտաց Յագորը կարաղի աչքերը փայլեցնելով նրա վրա:— Բա ինչ անեմ: Աչքերդ պաչեմ, որ էս պատասիքը քնած՝ թաքուն վեր ես կացել, էկել, փունն անտեր թողել: Փախել ես, հա՛, փանից: Ջառը-ջհանդամը, թե փախել ես.— շար էլ դարդ չեմ անի քեզ հմար, էս էրեխի՞ն ուր ես բերել: Հը՛: Խո չեմ ուզում էս սհաթին ճիվը ճվիցդ հանեմ, ճիճվի պես ճիվեմ ուրիս փակը: Հը՛: Ինձ չես ճանանչում: Ըրը՛, ես քու...

Եվ մի ահագին բռունցք, կարծես երկաթից ձուլված, ծանր ու դանդաղ, հորիզոնական ձևով գնաց ու եկավ դիպավ կնոջ կողքին:

Ասանը մինչև անգամ չճչաց, այլ միայն հանկարծ բերանը բաց արեց, ներս ծծեց օդը մի փարփոհնակ հեքով, այն-

¹⁹ Եւոյն տեղում:

պէս, ինչպէս ջրից հաճած ձուկը, հետո օրորվեց և կամաց, փայտափ պէս, վար ընկավ գետին:

— Ա՛, քու սիրտը չմեռնի, էդ ինչ արիր,— ճշաց Հեղնարը... սարսափած և վազեց օգնության:

Յագորը մի բուսե թավամնազ հոնքերի փակից նայեց իր ուրքերի առջև թավալված կնոջ չոսած աչքերին, հետո, շարունակելով հայիոյանքները, մոտեցավ երեխային, որը շարունակում էր կրծել ձմերուկի կլեպը, վերցրեց և առանց շփապելու դուրս գնաց:

Պատավ նանը խոնարհիվեց Անանի վրա և սարսափից քարացավ:

Անանն ընկած էր գետնին՝ որկորը փարփոհնակ կերպով վեր ցցած. չոսած աչքերը նայում էին առաստաղին ապակու բութ փայլով. բաց բերանից արյուն էր հոսում, հեքը կարծես քարացել էր այնպէս:

Կնոջն սպանելու համար մեղադրվող դրոգապան Յագորը նահանսական քննության ժամանակ դատական քննչի հարցուփորձին պատասխանելով՝ ասաց.

— Մի մուշտի փվի, էլի, ուրիշ բան խո չեմ արել:²⁰

2. ՍՈՅԻՈՒՈՒԿԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

«Եթե կեսուրը լավ ընդունեց հարսին՝ աղջիկ կվաստակի, եթե վար՝ կկորցնի իրա փողուն էլ...: Ուրեմն ինչի՞ ես կորցնեմ իմ փղաներին, եթե ես կարամ մի հասր էլ աղջիկ ունենամ»: (մեջբերում հարցազրույցից)

Սկետուրների դերակատարումը և սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումները հետազոտության շրջանակներում փորձ է արվել անդրադառնալ կանանց (սկետուրների) կյանքի տարբեր փուլերին և դրանց ընթացքում կենսագործունեության ոլորտներին՝ մանկություն, հայրական ընտանիքում կյանք, կրթություն, մանագիտություն, աշխատանք, կարիերա, ազատ ժամանակ, ամուսնական կյանք, մասնակցություն որդու/ների ընտանեկան կյանքում: Ընդհանուր առմամբ անդրադարձ է կատարվել նաև սկետուրների ինքնընկալմանը, արժեքներին և գեղեցիկին դիրքորոշումներին:

²⁰ Նար-Դու, «Մեր թաղը» նովելաշար, «Թե ինչ եղավ հետո, երբ շաքարամանից երկու կտոր շաքար պակասեց», Երևան, 1889-90, էջ 4-5

2. 1. ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԾՆՈՂԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔ

Հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել է մանկության տարիներին ծնողական ընտանիքում անցկացրած ժամանակաշրջանը՝ պարզելու համար սկեսուրների/կանանց կյանքի ընթացքում տեղ գտած գենդերային խտրականությունը և նրանց նկատմամբ վերաբերմունքը:

Բարձրագույն կրթություն ունեցող կանայք շեշտում են, որ մեծանալով տեսել են աղջիկ և տղա երեխաների միջև տարբերությունը, բայց որը ակնհայտ ու բացահայտ չի եղել: Հաճախ այն եղել է ոչ բառացի, ինչը, նրանց կարծիքով շարունակվում է մինչ այժմ: Միևնույն ժամանակ, շեշտադրելով, որ իրենց նկատմամբ վերաբերմունքը տարբերակված է եղել, այս կանայք հիմնականում չեն կարողանում կամ ենթադրաբար **չեն ցանկանում հստակ տարբերակումը մատնանշող շեշտադրումներ անել:** «Չէ, որ ասեմ րենց նույն վերաբերմունքն էր... Ոնց ձևակերպեմ, որ ճիշտ լինի... Ես անտարբերության մեջ չեմ եղել, ինձ ամեն ինչ արել են, ես ոչ մի բանի պրոբլեմ չեմ ունեցել նյութական, բայց ինձ՝ որպես աղջիկ, շատ երես չեն փվել: Էփ երևի մեր ավանդական բանից ա զալիս, էփ գյումրեցիների բանից, որ փանդ մեջ կարևորը փղամարդու խոսքն ա...» (բարձրագույն կրթությամբ կին)

«Տղաներին էլ, բայց դե փղաները հեփո եկան, շատ ավելի փոքր էին, ու հեփո էն ժամանակվա մրաժողության համաձայն՝ փղաներին շատ ավելի երես փված, 4 աղջիկներից հեփո 2 փղա ծավեց... Բայց էլի, երես փված՝ ոչ թե անկարգ, այլ աղջիկների համեմատ երես փված, որովհետև էն ժամանակ մրաժում էին, որ աղջիկը էս գործը պիտի անի, էն պիտի անի: Տղաները շատ ավելի ազատ էին, հեփո մեզանից որ իրանք փոքր էին ավելի, էդ փարիքային փարբերությունն էլ էր պատճառը երևի, որ էդ պահանջկարությունը փղաների նկատմամբ շատ փոքր էր»: (բարձրագույն կրթությամբ կին)

«Հա զգացել եմ... Թեկուզ և եղբորս հեփ եթե միճեիք, միշտ շեշտում էին, որ ես մեծն եմ, ես պետքա զիջեմ, այսինքն, իմ վրա էին խոսում առանց լսելու, թե ինչ ա կարարվել. ասում էին, որ դու աղջիկ ես»: (բարձրագույն կրթությամբ կին)

«Եղբայրս ավելի լավ էր սովորում, քան ես ու միշտ ինձ ասում էին քոյորը, ծնողներս էլ, որ ես իրա նման չեմ սովորում: Նույնիսկ դպրոցում կամ մի րեղ, որ լսում էին, որ ես ախպորս քոյրիկն եմ՝ զարմանում էին: Հա, ասում էին. «...Ո՞նց, դու Վ.-ի քոյրիկն ես...բայց ինքը շատ լավ ա սովորում...»: Ես էլ ասում

էի. «...Դե հիմա ես էլ էղբան եմ սովորում...»: Տենց հիմնականում, փարբերություն չեմ կարա ասեմ, որ դրվել ա, բայց որպես փղա հիմնականում, դե փղային ամեն ինչ կարելի էր, աղջկան՝ էղբան չէ: Բայց ընդհանուր որ ես զգացած լինեմ, մենակ էր»: (միջնակարգ կրթությամբ կին)

Միջին մասնագիտական կրթություն ունեցող կանայք ևս փաստում են հայրական ընտանիքում երեխաների նկատմամբ խտրականություն և տարբերակված վերաբերմունքի մասին:

«Մի աղջիկ եմ եղել, 3 ախպեր են եղել, միշտ մամասա փղերքին ա սիրել, աղջկանը չի սիրել: Ծնողներս շատ խիստ են եղել, ես իրավունք չեմ ունեցել, փաստը բոլոր պիտի ուշանայի, փաստը բոլորում պիտի հասնեի գործարանից մինչև փուն՝ ճանապարհը էղբան էր»: (միջին մասնագիտական կրթությամբ կին)

«Բայց ախպերներիս հանդեպ ազատ են եղել, ամեն իրավունք ունեցել են, ուղղակի մամասա իրա քուրերին ա շատ սիրել, առաջին փեղում իրա քույրիկներն են եղել, հետո՝ ես որպես աղջիկ»: (միջին մասնագիտական կրթությամբ կին)

«Տարբերությունը մենակ էն առումով եղավ, որ դե փղերքը բարձրագույն ավարտեցին բոլորով, մենք՝ չէ, ու, որ բոլորս էլ լավ սովորող ենք եղել»: (միջին մասնագիտական կրթությամբ կին)

Հատկանշական է, որ անգամ հարաբերական էգալիտար (երկու ծնողների հարաբերական հավասար դաստիարակությամբ) ընտանիքներում մեծացած կանայք փաստում են երեխայի սեռի խտրական ընտրության վերաբերյալ տարածված կարծրատիպերի մասին. «Մեր դասփարակությամբ երկուսն էլ հավասար գրադվել են, երկուսից էլ մեր մեջ շատ բաներ կան փայլորված: Երեք քույր ենք մենք, ես երրորդն եմ, որին հայրս սպասել ա որպես փղա... Մամասա միշտ պատմում էր, որ վախենում էր՝ հանկարծ աղջիկ չլինեմ: [ուղեկցվում է ծիծաղով] Հա, ծիծաղում ենք չէ՞ հիմա, բայց փենց ա եղել: Ես ծնվել եմ, հետո պատասա հասկացել ա, որ ուրեմն փենց ա վիճակված իրան, որովհետև մամասա ինձ ունեցել ա մեծ փարիքում արդեն»: (բարձրագույն կրթությամբ կին)

Միևնույն ժամանակ, եթե կանայք չեն զգացել գենդերային հիմքով տարբերություններ վերաբերմունքի առումով, ապա ենթադրություններ անում են, որ դրանք կարող էին գոյություն ունենալ: «Ես շատ երջանիկ եմ, որովհետև ես եղբայր չեմ ունեցել, ու ոչ մի կերպ չեմ զգացել դա: Բայց փոքր քույրս ինձից փաստը փարով փոքր է, և ես ենթադրում եմ, որ հայրս էլ, մայրս էլ ցանկացել են փղա ունենալ, քանի որ երկու աղջիկ արդեն ունեին՝ բնական է: Բայց երրորդ քույրս էլ աղջիկ եղավ»: (բարձրագույն կրթությամբ կին)

Իրենց կյանքում ամենամեծ ազդեցություն թողած մարդկանց մասին խոսելիս արդեն սկետսորի կարգավիճակում գտնվող կանայք նշում են հիմնականում տղամարդկանց (հիմնականում հայրը, բայց առանձին դեպքում նաև ամուսնու հայրը՝ սկեսրայր): Հոր՝ տարբեր պատճառներով բացակայության դեպքում ավելի ազդեցություն թողնող կերպար հանդիսանում է մայրը, առանձին դեպքում՝ դայակը, ում հետ մանկության շրջանում ավելի երկար ժամանակ են անցկացրել: Անկախ կրթությունից կանայք նաև շեշտում են իրենց տատիկի՝ հիմնականում իրենց հոր մոր ազդեցությունը իրենց կյանքի վրա: «Տարբեր բաների համար փարբեր մարդկանց կնշտի ես...Օրինակ փարբիկս որպես ինտելիգենտ կին, պապաս՝ որպես իրա ընտանիքի համար հայթհայթող, ընտանիքը իրա արքայությունն էր...»: (միջին մասնագիտական կրթությամբ կին)

Անգամ այն դեպքերում, երբ կանայք նշում են, որ երկու ծնողներն էլ հավասարապես ազդեցություն են թողել իրենց կյանքի և որոշումների վրա, միննույնն է, հնարավոր է առանձնացնել որոշակի գենդերային առանձնահատկություններ մոտեցման վերաբերյալ: «Ծնողներս երկուսն էլ՝ մաման էլ, պապան էլ: Մաման ավելի աղջկական հարցերում, պապան ավելի հեյո, ուսումը շարունակելու, ասենք էդ հարցերում»: (բարձրագույն կրթությամբ կին)

«Որպես կնոջ կերպար՝ մայրս, իսկ որպես զարգացման բանով՝ պապաս» (բարձրագույն կրթությամբ կին)

Ազդեցիկ և ազդեցություն թողնող մարդկանցից են նաև տատիկը՝ որպես շատ դեպքերում ընտանիքի մյուս անդամների վրա ազդեցություն և իշխանություն ունեցող կերպար, հազվադեպ նաև մորաքույրը, քեռին: Մորաքրոջ և քեռու՝ ազդեցիկ լինելու ֆենոմենը մեծ մասամբ կապված է վերջիններիս աշխատանքային և սոցիալական կարգավիճակի հետ: «Մորաքույրս դե ասեցի արդեն, որ նախարարությունում էր աշխատում, իսկ պապիկս եղել ա պատերազմի վերերան, ու հիշում եմ, թե ոնց էի անհամբերությամբ սպասում Մայիսի 9-ին, որ պապիկիս հեյո գնայինք պարադին: Բսկ կյոր փարիներին, ինքը միշտ գնում էր Լենինգրադ, Լենինգրադի պարավաժոր քաղաքացի էր, բայց իրա հեյո փանում էր միշտ եղբորս»: (բարձրագույն կրթությամբ կին)

Հետաքրքիր է, որ բացի ծնողների ընդլայնված շրջապատի հեղինակություններից կանանց համար մեծ նշանակություն են ունեցել իրենց այս կամ այն առարկայի ուսուցիչները, ովքեր իրենց կարծիքով կարողացել են ցուցադրել հարգանքի արժանի կերպար: «Հերո իմ փարբական դասարանի ուսուցչուհին, ով որ ինձ էր դաս փայիս, շար անվանի ուսուցչուհի էր, շար փայլուն գիտելիքներ ուներ, էր կինը մեր համար ոնց որ իդեալ լիներ, շար սիրված էր մեր ընտանիքի կողմից...»: (բարձրագույն կրթությամբ կին)

Այն հարցին, թե ընտանիքում ում հետ են ունեցել ամենամտերիմ հա-

րաբերությունները, կանայք նշում էին, որ քանի որ աղջիկ են եղել, կին, մայրը իրենց կարծիքով բնական է, որ պետք է լիներ ամենամտերիմ անձնավորությունը, ինչպես նաև աղջիկ լինելու հանգամանքից ելնելով նաև իրենց խնամողը/ մեծացողը: Բացառություն չեն նաև դեպքերը, երբ իրենք՝ սկետորները հայրերի հետ մտերիմ են եղել ավելի, քան ընտանիքի մյուս անդամների հետ:

2.1.1. Պատժի դրսևորումները և դրա գենդերային առանձնահատկությունները

Ըստ հարցազրույցներին մասնակցած կանանց խոսքերի պատժի դրսևորումները հանդես են եկել հիմնականում սահամանափակումների տեսքով: «Կարող աս և պատժել են... Բայց ես քանի որ փոքրն եմ եղել, ես մենակ հիշում եմ լավը... Ծեծ չեմ տեսել... Մամասս խիստ էր... Հիշում եմ, 8-րդ դասարանում մայիսի մեկին (էն ժամանակ պրազդնիկ էր) ես ուզեցա առաջին անգամ փանկելուկա կոշիկ հագնելի, մամասս ասեց. «Իսկ դու իրավունք չունես հագնելու դեռ...»: Ես առաջին իմ կարլուկները հագել եմ փասներորդ դասարանում: Այ տեսց քաներ եղել աս... Բայց աչքերս սկել եմ քսելը 10 դասարանից, երբայրս չէր թողնում՝ ոտծեծ-ում քսում էի, գնում էի ինսպիրուր»: (բարձրագույն կրթությամբ կին)

Չսայած հարցազրույցների ընթացքում հանդիպեցին դեպքեր, երբ կանայք նշում էին մանկության տարիներին հոր հետ մտերիմ հարաբերությունների մասին, սակայն նրանց մեծ մասը նշում է, որ իրենց հայրերն առանձնացել են հատուկ խստությամբ: «Պապասս քավականին խիստ է եղել, մամասս չէ, մամայի հետ ընկերություն եմ արել, իսկ պապայի հետ սկսեցի արդեն, երբ ինսպիրուր ընդունվեցի, դրանից հետո շատ ավելի մրերմացանք պապայի հետ, դրանից հետո շատ ավելի խիստ աս եղել ինքը: Երեկոյան, երեկոներին երբ որ պետք աս հավաքվեինք, ինքը շատ ուրիշ ձևով էր վերաբերում, շատ հաճախ կարող է չթողներ, որ երեկոներին մասնակցեմ, բայց ցերեկները շատ սկսելով եմ եղել, չափազանց սկսելով կարելի աս ասել, նու դարոցում՝ կազմակերպող... չգիրեմ... այ էդ ձևով» (բարձրագույն կրթությամբ կին)

«Որպես աղջիկ եղել աս նման քաներ պապայի կողմից մի քիչ, որ ինչ-որ սահմանափակումներ դնի: Իսկ երբ որ ամուսնացա, շատ խիստ փարբերություն կար ընտանեկան: Ամուսինս, դե հա, ընդեղ էլ կիսուրս էր, ահավոր խիստ կին էր, ու անգամ, եթե ես աշխատում էի, 10 րոպե եթե ուշանայի, դա արդեն ինդիր էր...»: (բարձրագույն կրթությամբ կին)

Միջին մասնագիտական կրթությամբ կանայք նույնպես պատժի դրսևորումների մասին պատմում են՝ ներկայացնելով հոր հետ ունեցած

հարաբերությունները և նորից վերջինիս խստությունը: «Աղջիկը իրավունք չունի... Էր ա իմ հոր դիրքը եղել... Աղջիկը իրավունք չունի րեղ գնա, այ էդ ձևի... Իրավունք չեմ ունեցել րեղ գնամ, օրինակ հիմնա իմ աղջիկս ուզում ա մի րեղ գնա, ընկերների, ընկերուհիների հետ հանդիպում ա, ազատ գնում ա, ես թույլ եմ րախիս, րայց ես ուղղակի իրավունք չեմ ունեցել, դե 74 թվին եմ ամուսնացել, կարող ա էդ վախար աղաթները րենց ա եղել: Ես չեմ կարա էլի դարեմ իմ ծնողներին, որ իսկ եմ րենց եղել»:

«Հիշում եմ, որ կային րաներ, որ առանց պապայի իմացության մենք իրավունք չունեինք անեինք, օրինակ ժամը 6-ից հետո իրավունք չունեինք մենք ոչ մեկս րնից դուրս գալու կամ 6-ից հետո րուն գալու: Մի րանի անգամ րենց ա եղել, ասենք թե գնում էի մի րեղ, չէի հասնում րուն գայի 6-ին, հաջորդ անգամ էլ չէի գնում: Հա, մեզ շար իսար եմ պահել մամաս, պապաս: Պապաս շար աշխարում էր, րանը շար չէր լինում, րայց իրա էր իսարության շունչը մենք միշտ գգում էինք...»:

«Հիշում եմ Բարու «Գիքորը» եկել ա կինն, հայերը սաղ գնում եմ, որ րենասն, սաի. «...nana, pazreuu da a moxe noidy, սաղ դասարանը գնում ա», րար կոպեկ էր էդ վախար րանը, ասեց՝ կմորթեմ... Ես իրավունք չունեմ մենակ կինո գնամ... Գե կարող ա Ադրբեջանում ա ապրել, դրանից ա, հայ երեխա եմ եղել... Ես ամեն րեղից կրքված եմ եղել...»:

Պատժի առարկա կարող էր հանդիսանալ ընտանիքի այլ անդամի նկատմամբ պաշտպանողական վարքի ցուցադրությունը և ըստ այդմ՝ սպասելի գեղերային դերերին չհամապատասխանելը: «Բակում բորորը ստում էին Մ.-ի ախպեր ինձ՝ իմ ախպոր ախպեր: Մի անգամ պապան ինձ շար ուժեղ պարժեց, որ ախպերս դե ինձանից մեծ, կոիվ էր արել ինչ-որ դպրոցում, ես գնացել էի րետր էի վերցրել ու գնացել էի էր կոլի ժամանակ իբր թե իրան պաշարպանելու... Հիշում եմ, որ դրա համար էին շար ուժեղ շղայնացել վրես»: (բարձրագույն կրթությամբ կին)

Ընտանիքում ի սկզբանե դրված, ինչ-որ տեղ նաև պարտադրված կանոններին համապատասխանելը դիտարկվում է որպես նորմ/նորմա, որը հետաքրքիր արտահայտում ունի հատկապես պատժի համատեքստում: Շատ հաճախ է հնչում այն կարծիքը, որ փոքրուց կանայք գիտեին, թե ինչի վրա կգայրանային ծնողները և ինչի համար կպատժեին, դրա համար արդեն իսկ չէին խոսում այդ մասին, օրինակ՝ երեկոյան ուշ ժամերին տանից դուրս գալը, ինչ-որ տեղ առանց թույլտվության գնալը և այլն:

«Ո՛չ պարժել եմ, ո՛չ՝ իրախուսել... Հասա: Չեմ պարժել, որովհետև ինչոք եմ եղել, չեմ էլ իրախուսել, որովհետև ըրենց պրի լիներ»: (բարձրագույն կրթությամբ կին)

«Ասեմ, որ ես եղել եմ բավականին խելոք երեխա, երբեք թույլ չեմ փվել, որ անգամ մանկական փարիներին ինձ դիրտ-դոթություն անեին: Մայրս պատմում էր, որ եղբայրներին խնամքը ինձ էր հանձնարարել ու ես մոր նման եմ զբաղվել իրենց հեպ: Ու ես երբեք թույլ չեմ փվել էնպիսի արարք, որ պարծի արժանանայի. միայն հայրիկիս հայացքը բավական էր, որ մենք երեխաներով արդեն իմանայինք՝ ինչպես դրսևորել մեզ»: (բարձրագույն կրթությամբ կին)

«Մանրամասն երևի չեմ հիշի, բայց մենք բոլորով էնքան կազմակերպված, խելացի երեխեք ենք եղել, որ դժվար թե մեզ մի բանի համար պարծած լինեին»: (միջին մասնագիտական կրթությամբ կին)

«Ես ամենափոքրն եմ եղել ու ինձ ասել են փաշտակներիկ, ուլիկ, այծիկ, եղնիկ, այսինքն րենց դրանով ինձ շատ սիրել են: Ես չեմ զգացել ինչ-որ փան հոգս, մաքրություն անեմ, ես մենակ մաման պապան ուր գնում էին՝ ինձ հեպր փանում էին պարփարդիր: Ինձ սիրել են որպես փոքր ու որպես երես առած: Բայց էփ ամեն ինչի հեպ ես խելոք եմ եղել, րենց երես առած չեմ եղել: Եթե ասենք դպրոցում մի բան էր, հավաքվում էինք, պապան ասում էր էս ինչ ժամին փունը պրի ըլնեմ, ուրեմն պրի ըլնեի»: (միջին մասնագիտական կրթությամբ կին)

Պատժի և սահմանափակումների շրջանակներում կարևոր է նաև, բացի առանձին ձեռքբերումներից (կրթական, աշխատանքային, այլ հաջողություններ), ավանդական գենդերային դերերին և դրանցից սպասելիքներին համապատասխանելը: «Ես շատ շնորհքով եմ եղել, մեծամփություն չհամարեք... Ե՛վ կարում էի, և՛ խոհանոցում էի մասնակցում, և՛ լավ էի սովորում: Ծ-րդ դասարանից մաման մեր նոր փարվա խմորեղենները ինձ էր վարահում: Օրինակ հիմա, կոպիտ ասեմ, իմ աղջիկը ինսպիրտորում էլ սովորում էր, չէի վարահի նոր փարվա խմորեղենները»: (բարձրագույն կրթությամբ կին)

Միջին մասնագիտական կրթություն ունեցող կանանց մի մասը պատժի մասին խոսելիս նշում է, որ ավելի շատ տղաներին են պատժել, քան աղջիկներին: «Պարծել ըրենց չեմ հիշում, ավելի րդերքին էին շատ պարծում, որ գնում էին կորում էին, սաղ գյուղի մամաները ընգնում ման էին գալիս...»:

«Ինձ չեն պարծել, բայց եղբայրներին պարծում էին միշտ լավ չսովորելու համար, ցածր գնահատականների համար»:

Հետազոտությանը մասնակցած կանանց կյանքի պատմություններին ծանոթանալով դուրս են բերվել նաև նրանց ծնողների՝ իրենց հետ անմիջականորեն կապ ունեցող հիշողությունները, որոնց հիման վրա

կարելի է նաև մասնավոր դատողություններ անել կնոջ՝ սեփական մարմնի և վերարտադրողական կյանքի նկատմամբ որոշումներ կայացնելու սահմանափակության վերաբերյալ: «Մամասս իմացել աս, թե դաշտանադադար աս եղել, հեկո իմացել աս, որ հղի աս: Բժշկուհին գանգել աս պապա-յիս, ասել աս. «Համայակ Մարգարովիչ, Ձեր կինը եկել աս արորս անելու...»: Պապաս ասել աս սպասեք, մերենան նսրել աս, եկել աս, ասել աս. «Ինչ արորս, բոժած հաճո»»: (բարձրագույն կրթությամբ կին)

Բացի այդ նրանք պատմում են նաև իրենց ծնողների՝ հատկապես մայրերի և վերջիններիս սկեսուրների միջև հարաբերությունների իրենց հասանելի մասը. «Մամասս միշտ ասում էր. «...մաման (մոր սկեսուրը) սենց ասեց, մաման նենց ասեց...», փափս էլ պարմում էր լավ բաներ, մի անգամ պարմում էր, որ էդ դժվար փարիներին մորս թեկուզ մի հար լավաջ են բերել (դե բուժաշխարհող աս եղել, 3 գյուղ աս սպասարկել), մամասս փարել աս փուն, կեսուրին ասել աս. «դե բաժանի՝ ուրենք...»»: Հետաքրքրական է նաև աշխատող («վաստակող») և ինքնուրույն որոշումներ չկայացնող կնոջ կերպարի նկատմամբ գնահատանքի դրսևորման ձևը. «Տարս միշտ ասում էր. «Էդ անասարված աղջիկը լավաջը մի հար չէր բացում մի կրոր կրրեր ուրեր...»»: (բարձրագույն կրթությամբ կին)

2.2. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության նպատակներից մեկն էր պարզել նաև, թե որքանով է հարցվող կանանց բարձրագույն կրթություն ստանալու վրա ազդել նրանց ծնողների կրթական մակարդակը: Չնայած հստակ կորելիացաներ ունենալու հնարավորության սահմանափակությանը, կարելի է վստահորեն նշել, որ մասնակից բոլոր բարձրագույն կրթություն ունեցող կանանց ծնողները նույնպես ունեցել են բարձրագույն կրթություն:

Կյանքի ավելի վաղ շրջանում՝ հարցմանը մասնակցած կանանց մանկության և երիտասարդության տարիների ընթացքում, կրթությունը իրենց կարծիքով ավելի գնահատված արժեք է եղել, ինչու ոչ՝ նաև պարտադրված: Դա հատկապես փաստվում է նրանով, որ շատ խրախուսվել է գիրք կարդալը: «Գիրք կարդալու համար էին շարս խրախուսում մեզ, ամեն շաբաթ-կիրակի, մի գիրք քննարկում էինք, ու պեղք աս էր կարդացած լինեիր, որ կարողանայիր մասնակցեիր»»: (բարձրագույն կրթությամբ կին)

«Մեկ էլ մեր փանը շարս խիար էր դրված սովորելու խնդիրը, մեր փունը պապայիս ընկերները գալիս հանգարանում էին, ես պեղք աս մրնեի զուգարան ու դաս անեի, որ վաղը գնայի դպրոց»:
(բարձրագույն կրթությամբ կին)

Միևնույն ժամանակ գիրք կարդալը և սովորելը խրախուսելը նաև միջին մասնագիտական կրթություն ունեցող կանանց ընտանիքներում է տարածված եղել: «Մեր փանը, շար լավ հիշում եմ, խրախուսվում էր գիրք կարդալը, միշտ փանը երեխանքով մրցում էինք, թե ով ավելի շար գիրք կկարդար էս արձակուրդին... Դրա համար ոգևորված կարդում էինք, որ հետը, կարող ա մեզ որպես պարզև, փանեին կիսո նայելու, էս ժամանակ էր պարզև էր, որովհետև սենց հնարավորություն չկար»: (միջին մասնագիտական կրթությամբ կին)

Բարձրագույն կրթություն ունեցող կանայք մեծ մասամբ շեշտում են, որ կյանքի ավելի վաղ տարիներին այլ մասնագիտությամբ են ցանկացել սովորել, սակայն, ընթացքում տարբեր «հեղինակավոր» մարդկանց կարծիքի ազդեցությամբ, ինչպես նաև ավելի «հեշտ սովորելու» հնարավորությունը բաց չթողնելու հանգամանքով, փոխել են իրենց կարծիքը (հիմնականում ընտրելով հումանիտար ուղղվածության մասնագիտություններ, օրինակ՝ մանկավարժ, լեզվաբան): «Փոխելու էրպես չէ, բայց հիշում եմ, որ միշտ լավ էի սովորում նաև քիմիա, ֆիզիկա, կենսաբանություն առարկաները ու հոգուս խորքում ուզում էի բժիշկ դառնայի, բայց դե բժիշկ դառնալը շար երկար ա ու դժվար, դրա համար միտքս փոխեցի:»

Կանանց շրջանում ստացած կրթության և ցանկացած/երազած մասնագիտության միջև անհամապատասխանությունը նաև ունեցել է գենդերային հիմքեր: Կրթության և կյանքում հաջողությունների հասնելու տեսանկյունից շատերի խոսքում նկատվում է չիրականացված նպատակների և երազանքների նկատմամբ ավստասանքը: Երբ կրթությունը կարողացել են շարունակել բարձրագույն ուսումնական հաստատությունում, ձգտել են փոխել մասնագիտությունը, իսկ հնարավորության բացակայության դեպքում ցանկացել են ուղղակի ունենալ որևէ կրթություն: «Սկզբից ուզել եմ լինեմ յուրիսը, բայց էր փարին, որ ես համաձայն էի փաստաթղթերը, էր փարին աղջիկների փաստաթղթերը յուրֆակ չէին վերցնում, Բնչու: Երա համար, որ ինստիտուտը ավարտելուց հետո աղջիկներին նշանակում էին ուսյուններ, և աղջիկները չէին գնում, դրանից ելնելով՝ էր փարին և երկու փարի դրանից հետո աղջիկներից չէին վերցնում, սրիպված ես րվեցի ֆիլֆակ»: (բարձրագույն կրթությամբ կին)

«Կրթությունից գոհ եմ, բայց կրթությունը իրա նպատակին չծառայեց՝ որպես օրար լեզվի... Կուզեի, որպես օրար լեզվի մասնագետ դրսում լինեի, երկիր րեսնեի, աշխատեի»: (բարձրագույն կրթությամբ կին)

«Ես ավարտել եմ ռուսական դպրոց, շար լավ սովորում էի, բայց չսրացվեց բարձրագույն գնայի, որ երեխեքս իրար հետևից ունեցա: Թե չէ ձգտումը շար էր, ես ինքս շար էի ուզում սովորեի, բայց չսրացվեց»: (միջնակարգ կրթությամբ կին)

«Կրթության չրվեցին ինձ...Դպրոցը ավարտեցի ու եկան ինձ ուզելու...Պասիկիս գյուղից էին, իրանք էլ րեդապիոսիվել սրեղ էին սպրուս: Պասպական հարուստ ընտանիք էին, ոսկու արհեստով էին զբաղվում, մերոնք էլ համաձայնվեցին...Մի քանի ամիս հետո, ամուսնացանք... Դպրոց եմ ավարտել մենակ»:
(միջնակարգ կրթությանը կին)

Որպես մասնագիտական «անհաջողությունների» պատճառ նշվում է նաև անհամարձակությունը և բարդոյթներ ունենալը՝ պայմանավորված գյուղական համայնքում մեծանալու ընթացքում շփումների պակասով: *«Մերը նոր ֆակուլտետ էր, մի քանի տարվա բացված մատենագիտություն, որտեղ օտար լեզու չկար, տե՛սց գործերս րվեցի: Հետո պարմությունից 5 սրացա, Պարմության դեկան էր հանձնաժողովի նախագահը, որ տեսավ տե՛սց բոլոր աշից-ձախից հարցերին պատասխանեցի, ինձ ասեց. «Ին քո տրամաբանությամբ ու հիշողությամբ պարմական պետք ա սովորես... Հետո կմտնեսս ինձ, գործերդ... կփոխենք բաժինդ...»: Բայց ասենք ես էլ գյուղում մեծացած, քիչ շփում ունեցած, կոնպլեքսներից չազարվեցի, որ գնայի, էդ դեկանին ասեի. «Ես էն մարդն եմ, որ ասել էիք...»: Մինչև ես ուշքի կգայի, մի քանի ամսից էդ մարդը մահացավ... ու տե՛սց մնացի էդ բաժնում: Չգիտեմ, պարմական գնալն էր ճիշտ, թե էս բաժնում մնալը...» (բարձրագույն կրթությամբ կին)*

Կախված ընտանիքում հոր և մոր կրթության նկատմամբ դիրքորոշումից կանայք ավելի խրախուսվել են սովորել ոչ հումանիտար մասնագիտությամբ: *«Ես ավարտել եմ Պոլիտեխնիկը: Էն ժամանակ էր երեք-չորս համալսարանն էր, ես գնացի պոլիտեխնիկ, ինչս թե դպրոցում հանրահաշիվ էի լավ սովորում ու սիրում: Բայց էլ ինչ հանրահաշիվ՝ երկրորդ կուրսից ընդեղ լրիվ ֆիզիկա էր, ու ես հասկացա, թե ուր եմ ընկել, որ սխալ տեղ եմ ընկել: Էր ժամանակ մեղադրում էի մերոնց, ասում եմ. «Ուրիշ հարցերում կգոռեն իրանց կարծիքը, թե ինչի՞ չստիպեցին գնայի մանկավարժական...»: Մեծ քրոջս ուղղորդեցին, որ Բոյոսով, ասում էի թող ինձ էլ տանեին Մանկավարժականի ոռուսական բաժինը, ոռուսերենից էլ էի լավ: Բայց էլ ինչ անեի, հո թագա չէի գնա ընդունվեի, ըրե՛սց ստիպված ավարտեցի, բայց դե գոհ չեմ, որովհետև էր էն ժամանակ գործարաններ էին սարքում, պետք էր, մոդա էր էր ինժեների մասնագիտությունը, հիմն ու՛մ ա պետք՝ էն էլ կնոջ համար»:* (բարձրագույն կրթությամբ կին)

Ոչ հումանիտար մասնագիտություններ ընտրելու պատճառները երբեմն կրում են նաև զավեշտալի բնույթ: *«Պարմեմ ուրեմն էր պարմությունն էլ, արդեն էր վախարերն էր, որ պետք ա ընտրեիք արդեն որտեղ ընդունվեիք, մեր ծանոթ-բարեկամ մեկը եկավ մեր տուն ու պարմում էր, որ ինքը Պոլիտեխնիկ ա սովորում ու, որ իրանց կուրսում ընդամենը 3 կամ 5 աղջիկ կան, ու, որ իրանց Մարտի 8-ին տղաները ոսկի են նվիրել: Պետք*

ա անկեղծ լինեմ ու ասեմ, որ Պոլիպեխնիկ ընդունվելու վրա ամենամեծ ազդողներից դա ա եղել: Տենց էր հեղափոխությունը շարք փոստերի մեջ լինելու, սովորելու, ոսկի նվեր սրահսալու»: (Բարձրագույն կրթությամբ կին)

Մասնագիտության ընտրության հարցում ինքնուրույն որոշումներ կայացնելու վերաբերյալ խորին հարցազրույցներին մասնակցած կանանց խոսքերում առկա են հակասություններ: «Ձէ, արդեն նշեցի, որ իմ ընտրությունն է եղել: Ճիշդը որ ասեմ, այ ես հիմա հիշեցի, որ փոքր հասակում ուզում էի իրավաբան դառնալ, պապան էդքան էլ չուզեց, որ մի քիչ փոխական ա, զգիլեմ ինչ ա, բայց հետո ես ինքս որոշեցի, որ պետք ա մանկավարժ դառնամ, բայց մաման դասվար ա, ես արդեն մաթեմատիկայի ուսուցիչ»: (Բարձրագույն կրթությամբ կին)

Կրթություն ստանալու հնարավորությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ շատ հաճախ այս կանանց ուղղակիորեն արգելվել է կրթություն ստանալը պայմանավորված մի շարք հանգամանքներով՝ գենդերային կարծրատիպեր (աղջիկ երեխա լինելը և հետագայում կրթական կապիտալը օգտագործելու անհնարիությունը, դրա հետ կապված «անիմաստ» ծախսերը), ընտանեկան հանգամանքներ (տվյալ ժամանակահատվածում մտերիմ մարդու կորուստ, ում հետ կապված են եղել մի շարք նպատակներ), ուսումնական հաստատության գտնվելու վայրը (եթե մարզում են ապրել Երևանում միայնակ ապրելու խնդիրը), ինչպես նաև այդ ժամանակաշրջանում առաջարկվող կրթական ուղղությունները և ըստ այդմ հետագայում «հարմար» աշխատանք գտնելու հնարավորությունները:

«Հա, հետո որ գնացի ընդունվեցի, բան, թղթերը բերեցի, փարփկա իշխանություն ա ունեցել մեր փանը, մեր փանը փարփու ա եղել որոշողը, ասի .«Հայկանուշ բարո, ընդունվել եմ փեխնիկում, պապայի հեղ խոսա էլի...»: Ձեռը սեղանին փխվալ, ասեց պրի L.-ն դասի գնա: Մի փարփի գնացի, երկու փարփի գնացի, հետո զգացի, որ մամաա չի հասցնում, զցեցի հեռակա, ու սկսեցի խանութում աշխատելը, որ մամային օգնեմ: Այ էդ ձևի: Տարս եթե չլինեմ, կարող ա և չթողեմ պապան սովորեի, հետո ժամ կար, ես ժամով պիտի գնայի, ժամով պիտի փանը լինեի»: (միջին մասնագիտական կրթությամբ կին)

«Մենց չկար է հիմիկվա նման 1000 մասնագիտություն՝ մի 4-5 բան էր, ես էլ ընտրեցի խոհարարը, որը գիլեա, որ հետո էլ քեզ հասարար պետք կգա՝ դաժե եթե չաշխատես...»: (միջին մասնագիտական կրթությամբ կին)

«Պապան, որ աշխատում էր փոստում՝ որպես բաժնի վարիչ, իրա հաշվապահը ինձ խորհուրդ փվեց, ավելի ճիշդ՝ պապային ասեց. «Թող փա հաշվապահական, կրեթենք մեր մոյ փոստում՝

կաշխարի որպես հաշվապահ...»: Ես չեմ սիրել, ես ինքս չեմ ընտրել էր մասնագիտությունը, էրի պապայի խորհրդով: Ես շար սիրել եմ մանկավարժություն, երեխաներ, մեծ հաճույքով դպրոցում կաշխարեի, մանկապարտեզում: Իհարկե, էրի չստացվեց նման ձևով»: (միջին մասնագիտական կրթությամբ կին)

Կրթությունից գոհ լինելու վերաբերյալ հարցին ի պատասխան դուրս են բերվում նաև կրթությունը շարունակելու նկատմամբ սահմանափակումները, որոնք հիմնականում հիմնվում են գեղերային դիրքորոշումների և կարծրատիպերի վրա: «Դպրոցը ավարտելուց հետո ընդունվեցի երաժշտական քոլեջ, բայց չավարտեցի, էր ընթացքում ամուսնացա ու կեսրարս չթողեց էլ գնամ դասի, ասեց. «Հարսը պրի երգչուհի չլինի մեր... Երգչուհիները բարոյական չեն...», ու տենց էլ Ա.-ն (ամուսինս) չթողեց գնամ ավարտել»: (միջին մասնագիտական կրթությամբ կին)

«Գոհը մի կողմ, ես չեի սիրում, չսիրելու պատճառով ես չշարունակեցի: Ես որ ավարտեցի, սովորում էի, մեր բժիշկներից մեկը ասեց. «Բու ախտս ես՝ քույր աշխարես, արի դասավորեմ գրո կուրսով Բժշկական ինստիտուտ նստի...», ու ես ինչ ա չեմ սիրել, համ էլ ասում էի, որ ամուսնացա՝ էլ չեմ աշխարի... Ես որ իմանայի ամուսնանալուց հետո էլ պիտի աշխարեմ, 30 տարի պիտի աշխարեմ, կգնայի, կշարունակեի՝ բժիշկ կդառնայի»: (միջին մասնագիտական կրթությամբ կին)

Հարցազրույցները նաև ինչ-որ չափով դուրս բերեցին մասնագիտական կրթությունը շարունակելու ցանկության նկատմամբ ճնշումը, ինչն ուներ կնոջ կյանքի և առաքելության վերաբերյալ առկա գեղերային կարծրատիպերով հիմնավորումների տեսք: «Գոհ եմ կրթությունից, բայց հետո գոհ չեմ լինում, երբ որ տեսնում ես չես կարողանում աշխարանք գրանել: Հետո նաև սրացա երկրորդ մասնագիտություն՝ ժուռնալիստ, կարմիր դիպլոմով ավարտեցի, ու ասեմ, որ էդ ժամանակ արդեն երեխա ունեի: Ուզում էի պաշտպանեի դեսերտացիա, բայց արդեն ղեկավարս չթողեց: Սկզբից ինքը շար քաջալերեց ինձ, հետո, որ իմացավ արդեն ամուսնացել եմ, հղի եմ, ասեց. «...Ամեն ինչ արել ես, հասել ես վերջին...»: Հիմա չեմ փոշմանել, որ չպաշտպանեցի»: (բարձրագույն կրթությամբ կին)

2.3. ԱՇԽԱՏԱՆԲ ԵՎ ԿԱՐԻԵՐԱ

Անգամ բարձրագույն կրթություն ունենալու դեպքում կանայք նշում են, որ միշտ փորձել են ստանալ ամուսնու «թույլտվությունը» հատկապես աշխատանքի անցնելու/վերադառնալու պարագայում: «Ամուսնուս կողմից գնահատվելու մասին չգիտեմ ոնց պատմեմ... Շատ երկար բանակ-

ցություններից հետո ես սկսել եմ աշխատել, հետո շատ խանդոտ էր ինքը, երեխեքից հետո էլի գոռով համոզում, գնում էի հետ էլի... Տունն էլ, որ ասել էի, որ կարամ դիմեմ՝ չէր թողնում, ասում էր. «Ես շար գոհ եմ դու աշխատում ես, հիմա էլ փուն փան՝ սաղ կյանքդ պրփի աշխատես...», ու ես թարուն եմ գրանցվել փան համար, թարուն եմ սրացել... Հետո արդեն բանալին փվեցի՝ ասեցի գնա փես մեր փունը... Թե չէ ինքը ըրեց բաներ չէր սիրում...»: (բարձրագույն կրթությամբ կին)

Միջին մասնագիտական կրթությամբ կանայք նույնպես նշում են կրթություն ստանալուց հետո աշխատելու սահմանափակումների մասին՝ հիմնականում ամուսնու կողմից արգելքների ձևով: Սակայն որոշ դեպքերում այդ սահմանափակումները հնարավոր է եղել շրջանցել կամ հաղթահարել: «Սկզբից ամուսինս չէր հարմարվում, ինքը սովոր էր, որ գա փուն պերերիվ՝ ես պերք ա փանը լինեմ, դնեմ, հավաքեմ, մաքրեմ, հետո արդեն կամաց-կամաց, կովելով, բարիշելով, համոզելով... արդեն հիմա էլ չի պատկերացնում, որ չաշխատեմ...»: (միջին մասնագիտական կրթությամբ կին)

«Ես շար ուզել եմ, ուղղակի, որ իմ ամուսնուն խոսքից դուրս չգամ, որ իրա ցանկությունը, սենց ասած, չփորոքեմ-անցնեմ: Հաշվի եմ առել իրա ցանկությունը, իրա կարծիքը՝ չեմ աշխատել, փնային փնտեսուհի եմ: Մինչև առ էսօր ես փնային փնտեսուհի եմ ու մինչև հիմա էլ իմ ամուսինս ասում ա. «Ոչ մի աշխատանք: Դու կնարես, մեր փան մեջ սաղ քո համար հոգս ու աշխատանք ա՝ դու հագիվ հասցնես»»: (միջին մասնագիտական կրթությամբ կին)

Աշխատանքային գործունեության տեսանկյունից գնահատվելը հիմնականում ընկալվում է դրա ընթացքում և դրանից հետո վերաբերմունքի ձևով՝ մասնավորապես պարզևատրման համատեքստում: «Ես որ սկզբից ասեցի վաստակաշար, դա հո եմ չեմ ասում՝ դա իմ մասին իմ աշակերտներն են ասում, իրենց ծոողներն են ասում... Մինչև հիմա, Նոր փարուն էս փարի եկել էին, արդեն էնքան վաղուց էին ավարտել՝ դժվարացա հիշել...»: (բարձրագույն կրթությամբ կին)

Մտերիմների՝ հիմնականում ընտանիքի անդամների կողմից գնահատվելու մասին պատմելիս անդրադարձներ են կատարվում կնոջ և իր սկեսրոջ հարաբերություններին ևս: «Ամուսինս որ շար-շար, կեսարարս՝ շար-շար, կեսուրս մի քիչ ուրիշ փեսակ էր... ոնց ասեմ՝ ավելի որ վերցնեմ, մի քիչ ուզում էր ինչ-որ բան գրներ էլի: Ավելի սենց ասեմ, ինքը աշխատում էր որպես բանվորուհի, մի քիչ կրթություն էլ սրացած չէր, մի քիչ ուրիշ փեսակ էր նայում: Մի քիչ երևի մրածում էր՝ ոնց եմ հասցնում էդքանը... Ամուսինս պերք էլ եղել ա՝ օգնել ա, միջոցառումներ, բաներ կազմակերպել, ամեն ինչով պատրաստ էր, որ օգներ...»: (բարձրագույն կրթությամբ կին)

Խորին հարցազրույցներից ստացված տեղեկատվության վերլուծությունից պարզ է դառնում, որ կնոջ աշխատանքի գնահատումը ընտանիքի կողմից հիմնվում է նրա՝ ընտանիքին նյութապես օգնելու/աջակցելու տեսանկյունից: «Գնահատվել և բառնց, ո՞նց կարելի և չգնահատվի էս օրերում, երբ որ 20.000 դրամ կողմնակի փողն էլ ամենկան ընտանիքին շարունակ օգուտ աս: Երեխեքը մեծանում են, փառք Աստուծո, փողն լավ գործի աս, ամուսինս աշխատում աս, բայց էլի ես ինձ լավ եմ զգում, մի բան եմ անում թոռներին համար, աղջկաս համար: Հեղո ըրե՞նց ծանր, բարդ գործ չեմ անում, որ ասեմ փանջվում եմ...»: (միջին մասնագիտական կրթությամբ կին)

«Հաս, գնահատվում էր, իհարկե: Ա.-ն (ամուսինը) ամուսնասարյուց հեղո դեմ աս եղել իմ հերթապահություններին, ես կիսորիս շնորհիվ եմ աշխատել: Մենակ դա, թե չէ հաս, գնահատվել աս, և աշխատավարձս էր լավ, և կողմնակի դե գիրես բաներ կան... Մի հարց դեպք պարմեմ, կիսորս հիվանդացավ, որ վիրահատեցին, դե բոքսում էր մնում, փեսեյ էր ընդդեմ ամեն ինչը, պատկած էր, ասեց. «Ես որ դուրս եկա, դու էլ չես աշխատի ըրելդ. ուրեմն դու սենց փող ես աշխատել՝ ես չեմ իմացել...»: Բայց դե, ցավոք սրտի, ինքը մահացավ»: (միջին մասնագիտական կրթությամբ կին)

«Հաս, բա ո՞նց չգնահատվե՞ր, եթե էփ աշխատանքով եմ ես իմ երեխեքին կրթության փվել, հագրել, ուրացրել: Հիմա հարսներս ու թոռներս են, որ չեն գնահատում, ասում են. «Մեզ ինչ պետք աս, որ դու ամեն փարի գնացել ես ծով, երկու փարի չգնացիր՝ փուն առնեիր, որ 10 հոգով մի փան մեջ չապրեիրք հիմա...»: (միջնակարգ կրթությամբ կին)

Այն դեպքում, երբ կանայք նշում են, որ գնահատվել է իրենց աշխատանքը, իրենց զբաղեցրած ամենաբարձր պաշտոնը համարում են «առաստաղ»: «Ես միշտ առաջատար եմ եղել աշխատանքի մեջ, միշտ ավագ աշխատող եմ եղել, 1 անգամ 1 աս իմ համար էս աշխատանքը»: (բարձրագույն կրթությամբ կին)

Որոշ դեպքերում կանայք նշում են, որ իրենց ամուսինները չեն գնահատել իրենց աշխատանքը, բայց ներքուստ հպարտության զգացում են ունեցել իրենց կարծիքով: «Մենակ գիրեմ, որ ամուսինս շար լավ էր զգում, երբ որ ինձ գովում էին՝ շար ավելի լավ, քան ես»: (բարձրագույն կրթությամբ կին)

Հետազոտությանը մասնակցած կանայք նշում են, որ գնահատված են զգում նաև, երբ կարողանում են «ուրիշի» համար որևէ բան անել՝ դրանով իսկ իրացնելով իրենց պատկերացմամբ հիմնական դերը կյանքի տվյալ փուլում: «Ուրիշ»-ի դերում հիմնականում հանդես է գալիս ընտանիքի անդամը՝ մտերիմ մարդ: «Բամ հիմնական դերը փարիկի դերն աս հի-

մնա, քայքայ իմ հիմնական նպատակն է բարություն անել, ես միշտ չստուգանք պատրաստանում եմ բարությունով: հիմնական դերը տարիկությունն է, որ ես իմ թոռների համար մի լավ բան եմ անում, նվեր եմ անում, իրանք ասում են. «.Տարի էս եմ ուզում, տարի էն եմ ուզում...», ու ես կարողանում եմ սրտեղծել, առնեն, նվիրեմ իրանց, անեմ իրանց ուզածը, որ զանգեն ասեն էսինչ խմորեղենը թիֆ բեր, իմ հիմնական դերը էր տարիկությունն ու ես էր դերի մեջ»: (միջին մասնագիտական կրթությամբ կին)

Երանց մի մասը նաև չի էլ մտածել, որ ընտանիքի անդամները չզնահատեն իրենց գործը: «Կարծում եմ, որ այո, և ես երբեք չեմ մտածել հակառակը, որ հնարավոր է, որ իմ ընտանիքի անդամներից որևէ մեկը չզնահարի»: (բարձրագույն կրթությամբ կին)

Բարձրագույն կրթությամբ կանայք շեշտում են, որ իրենց՝ որպես կնոջ նկատմամբ խտրականությունն աշխատավայրում ըստ էության արդարացված է, քանի որ այդպիսին է անփոփոխելի «դրվածքը», ինչի հիման վրա ամրապնդվում են ավանդական մշակութային կարծրատիպերը կնոջ նշանակության վերաբերյալ: «Դե միշտ էլ եղել և ու միշտ էլ կլինի: Դե կինը առաջին հերթին սրտեղծված և ընտանիքի համար, եթե ինչ որ շանս էլ լինի՝ պարզ չի, որ պետք և մի բան զոհի կինը»: (բարձրագույն կրթությամբ կին)

Աշխատանքային առաջընթացը հիմնականում միջնակարգ և միջին մասնագիտական կրթություն ունեցող կանանց կարծիքով բացատրվում է, քանի որ չունեն բարձրագույն կրթություն: «Դե գիրեւ ոնց, բարձրագույն կրթություն երբ որ չունես, էլ ինչ առաջընթաց»: (միջնակարգ կրթությամբ կին)

Բացի այդ աշխատանքային առաջընթացի մասին խոսելիս բացահայտվում են նաև աշխատանքի գենդերային բաժանման մասին պատկերացումները: «Չէ, բա ես ընենց գործի էի աշխատում, որտեղ կին պրի լիներ, կարող և տղամարդը գար աշխատեր մանկապարտեզում սանիտարական էր գործերը աներ, երեխեքի տակը փոխեր»: [ուղեկցվում է ծիծաղով] (միջին մասնագիտական կրթությամբ կին)

Հոր բացակայության պարագայում կանայք ըստ իրենց ավելի ազատ են եղել և կարողացել համեմատաբար ավելի բարձր եկամուտ ունենալ: Իրենք իրենց իսկ դիտարկել են որպես ինքնուրույն վաստակող մեկը: «Իմանալով հանդերձ, որ ես պատշաճ չունեմ, ես պետք է անել էսպես, որ ես ոչ մեկից կախման մեջ չլինեմ: Դրանով ես հավաքել եմ, շատ լավ հագնվել, շատ լավ ապրել եմ, մոդայիկ»: (բարձրագույն կրթությամբ կին)

Ինչպես կրթության, այնպես էլ աշխատանքի պարագայում այս կանայք թերաբժեքորեն են վերաբերվել իրենց իսկ ունակություններին և հաջողությունների հասնելու ու առաջընթացի հնարավորություններին: «Հա, գործերս որ փվեցի, մի քանի օր հետո էր գրադարանի փնտրենք զանգեց արդեն, գնացի, սկզբից վարիչ առաջարկեց, վախեցա, ասեցի՝ չէ, նշանակեց դե գրադարանավար (վախենում էի դե գրադարանավար

միանգամից): Գնացի որ գրադարանավարի հրամանսս սրանսամ, նշանակել էլ հրամանով արդեն վարիչ: Ու միշտ ժողովներին ասում էր, որ շատ բաներում ես միակ մարդն եմ: Ես էլ իմ վրա շատ աշխատում էի, որ չհիասթափեցնեմ, հեշտ չէր. քեզանից մեծ կանայք նստած են, դու գնում ես ու վարիչ»: (բարձրագույն կրթությամբ կին)

2.4. ԻՆՔՆԸՆԿԱԼՈՒՄ, ՀԱԶՈՂՈՒԹՅՈՒՆ, ԵՐԶԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության նպատակներից մեկն էր նաև պարզել, թե ինչպիսի ինքնընկալում և արժեքներ ունեն հարցվող կանայք: Այդպես, փորձ է արվել պարզել, թե ինչպես են պատկերացնում վերջիններս իրենց դերը կյանքում:

Հարցվող կանանց կողմից որպես հիմնական նշվում էին ծնողի, մոր (մասնավորապես ընտանիքի մայր), սկեսուրի, տատիկի դերերը, ինչպես նաև ընտանիքին ծառայելը:

«Как мать, как хозяйка, как управилка и так, էդ 3 դերը ունեմ հիմա, արդեն փոքր չեմ՝ 65 տարեկան եմ»: (միջին մասնագիտական կրթությամբ կին)

«Կյանքում իմ հիմնական դերն է իմ ընտանիքի անունը բարձր պահելը, օգնելը ընտանիքի անդամներին՝ ինչով որ կարող եմ, իմ հնարավորության սահմաններում»: (միջին մասնագիտական կրթությամբ կին)

«Հիմնական դերն ա իմ լավ մայր լինելը իմ երեխաների համար ու լավ տնային իմ թոռների համար... »: (միջին մասնագիտական կրթությամբ կին)

«Կյանքում իմ հիմնական դերն է լավ կին լինելը իմ ամուսնու կողքին՝ սիրված, հարգված, ինչպես նաև իմ տղաների ու թոռներին կողմից»: (բարձրագույն կրթությամբ կին)

«Իմ թոռներին լավ պահելը, որովհետև տղերքին արդեն հասցրել եմ մի բանի, ամեն մեկին ապահովել եմ տուն, ավտո, հիմա մնում ա թոռներին էլ մի բան կողք դնեմ»: (միջնակարգ կրթությամբ կին)

Բացի նշված դերերից կանայք իրենց դերը տեսնում են ավելի գլոբալ արժեքների սերմանման առումով: *«Միայն հասարակության մեջ բարություն սերմանելը, դա է իմ դերը»:* (բարձրագույն կրթությամբ կին)

«Կարելի ա սսել, անկախ ամեն ինչից, ինձ թվում ա՝ մարդկանց օգնելը, որովհետև փարքեր բնագավառներում լինելով ես հասկացա, որ ինձ դուր ա գալիս, որ ես մարդկանց օգնում եմ, երբ որ իրանց պեղք ա» (բարձրագույն կրթությամբ կին)

Երջանկությունն ու հաջողությունը հարաբերական ընկալվող եզրույթներ են, ըստ էության դրանց նկատմամբ հստակություն չի դրսևորվում: Հետաքրքրական է, որ երջանկությունն ու հաջողությունները անձնական կտրվածքում չեն դիտարկվում, այլ կապված են կամ երեխայի, կամ ծնողների կամ ընտանիք/ների այլ անդամի հետ: Մյուս կողմից սկեարոջ/կնոջ երջանկությունը կապված է երեխաների ընտանիքներում հարաբերություններով և տեղի ունեցող իրադարձություններով: *«Իմ կարծիքով լիարժեք էրպես երջանիկ իրեն ոչ մեկը չի գնահատում, որովհետև, դե մանր-մունր խնդիրներ ամենքի հետ էլ պատահում է... Տղաներիս մասով կարամ սսեմ երջանիկ եմ, բայց ա՛յ իրանց ընտանիքներում մի քիչ խնդիրներ կան, որ չեն թողնում ես լիարժեք երջանիկ լինեմ...»:* (բարձրագույն կրթությամբ կին)

«Նույն ձև էլ հաջողություններն են, մի բան կարա լինի՝ դու մտածես, որ հաջողակ ես, մի բան էլ լինի՝ մտածես, որ անհաջողի մեկն ես: Դրա համար, երևի չես կարա կոնկրետ սսես, որ հաջողակ ես կամ անհաջող»: (բարձրագույն կրթությամբ կին)

Թե՛ երջանկությունը, թե՛ հաջողությունը անմիջականորեն կապված են գենդերային դերերին և դրանցից պասսելիքներին համապատասխանելու հետ: *«Հա, լավ կին եմ, լավ մայր եմ, լավ փայտիկ եմ, երջանիկ կին եմ...»:* (միջնակարգ կրթությամբ կին)

Երջանկության և հաջողության մասին խոսելիս այն դեպքում, երբ նշում են, որ հաջողակ չեն, իրենց կարծիքով բնականաբար նաև երջանիկ լինել չեն կարող: Այս միտքը տարածված է մասնակից կանանց մեծամասնության մոտ: *«Դե անհաջողակ մարդը ո՞նց երջանիկ կլինի...»:* (միջին մասնագիտական կրթությամբ կին)

Միջին մասնագիտական կրթություն ունեցող կանանցից շատերը անկեղծորեն շեշտում են, որ անհաջողակ են, սակայն դա կոմպենսացվում է մտերիմների՝ ընտանիքի մյուս անդամների (երեխաների, թոռների, ամուսնու) հաջողություններով: *«Այո, ես ինքս, որ սսեմ իմ անձնական հաջողակ եմ, բայց իմ երեխեքս ամեն մեկը իրա փեղը գրել ա կյանքում, թոռներս լավ կյանք են փեսնում, էլ ինչ ամնում ինձ, որ սսեմ անհաջողակ եմ ես»:*

«Հաջողակն էլ՝ նայած ինչի համար հաջողակ՝ որպես մայր՝ բախփայտի եմ, որ սենց փղեք ունեմ, լավ շրջապատ ունեմ, բայց էր իմ կյանքս հաջողակի կյանք չի էլի...»:

Երջանկության և հաջողության համատեքստում քիչ նշանակություն չունի նաև ֆինանսական ապահովվածությունը: *«Իհարկե ես հաջողակ*

մարդ եւ՝ լավ ընտանիք ունեն, լավ ամուսին, լավ շրջապատ, շատ լավ երեխաներ... Բայց ֆինանսական... Ես երբեք էր համեմատությունը չեմ արել, բայց մեկ-մեկ ասում եմ. «Ինչի չէ որ... Ես էլ կուզեի շատ շքեղ փան մեջ ապրելի, ճոխ... Ինչի՞ նստեմ աչք քոռացնեմ, որ մի 5000 դրամ ավել պիտի փուն փանեմ... Ինչի՞ չէ՝ արձակուրդիս գնայի ման գալու. ես ժամանակին շատ լավ հայրական փանը ման եմ եկել...»: Էս առումով կարամ ասեմ, որ երեխեքս սիրված են, որ կարամ իրանց հետ պարզ ճակատով փողոց դուրս գամ՝ էր առումով կարամ ասեմ, որ հաջողակ եմ»: (բարձրագույն կրթությամբ կին)

Հետազոտության արդյունքում պարզ դարձավ, որ հաջողակ և երջանիկ լինելը անմիջականորեն կապված է նաև ընտանիքի մյուս անդամների ֆիզիկական ներկայությամբ. այսինքն կանայք հիմնականում նշում են, որ երբ ամուսին չունեն (հիմնականում մահացել է) և երեխաները առանձին են ապրում, այդ դեպքում իրենք իրենց ավելի քիչ երջանիկ են համարում: «Այ, եթե հիմն մենակ չապրեի, կասեի՝ որ հ՝ամ երջանիկ եմ, հա՛մ՝ հաջողակ... Սկզբից մի փրաս առանձնացավ, կամաց-կամաց ես համարեցի, որ դա կյանքի օրինաչափությունն ա դե, հետո մեծս էլ եկան վերև՝ մեծ փունը, ես մենակ իջա ներքև արեղ, ու արդեն մոտ 10 փարի ա լրիվ մենակ եմ, ամուսինս էլ մահացավ...»: (բարձրագույն կրթությամբ կին)

Հաջողակ լինելը նաև կապված է չիրականացած երազանքների հետ: «... Ծանապարհորդել, շրջել, աշխարհ փեսնել, էս էլ ամուսնացա՝ երեխա, փուն, հնարավորություն չեղավ: Ես էր հույսով էի ընդունվեցի Բրյուսով, լեզու սովորեցի, որ գիտեի՝ մի բանի ինձ պետք կգա»: (բարձրագույն կրթությամբ կին)

Հարցազրույցներին մասնակից կանայք հիմնականում նշում են, որ կյանքում ամենակարևորը մտերիմների առողջությունը, երջանկությունը, կայունությունն է: Սա անմիջականորեն կապված է երեխաների և ընտանիքի անդամների հետ: «Երեխեքս... Էլի ամեն ինչը ես կապում եմ ընտանիքիս հետ: Ամենակարևորը՝ ընտանիքս, երեխեքս, հետո՝ Հայաստան, հետո՝ երկիր, բաց առաջինը, կենտրոնացված եմ երեխեքիս և մերձավորներիս վրա»: (բարձրագույն կրթությամբ կին)

Կարևորությամբ չեն զիջում նաև սերը, հարգանքը, հավատարմությունը հատկապես բարձրագույն կրթությամբ կանանց համար: «Իմ համար էս պահի դրությամբ ամենակարևորը իմ երեխաների երջանկությունն ա, որովհետև ես կյանքում էլ սպասելիք չունեմ, ամուսինս արդեն փասը փարի ա մահացած ա, ես երկրորդ կյանք չեմ կառուցել իմ համար՝ մինչև հիմն կեսուրիս հետ եմ: Իմ երեխաների երջանկությունից էս կողմ ոչ մի բան չունեմ սպասելիք»:

«Կարևորը Ձեր ասած երջանկությունն է, որ մարդիկ փարբեր ձևով են դա հասկանում, փարբեր ձևով են ընկալում: Կար-

ևոր է շարք փոխադարձ հասկացվածությունը՝ միջանձնային հարաբերություններում և ընտանիքում»:

«Այրել կյանքի ամեն մի օրը այնպես՝ ինչպես վերջին օրը»:

«Ամենակարևորը՝ կյանքն է, ամբողջությամբ»:

0-10 բալանոց սանդղակում կյանքը գնահատելիս բարձրագույն կրթությամբ երկու սեռի թոռներ ունեցող կանայք նշում են 5-9 միջակայքը՝ վստահեցնելով, որ 10-ը չի կարող լինել, քանի որ այն չի համապատասխանում մի շարք չափանիշների՝ երազանքներ, հիասթափություններ, նյութական անապահովվածություն կյանքի վաղ տարիներին և ներկայիս կյանքում, ինչպես նաև միայնակություն: Սանդղակով գնահատելիս հիմնական չափանիշ է հանդիսանում ֆինանսական բարեկեցությունը, այս կամ այն նյութական իր գնելու հնարավորությունը: Նույն միջակայքը նաև ընտրել են միջնակարգ կրթությամբ կանայք: Միջին մասնագիտական կրթությամբ կանայք ևս իրենց կյանքը հիմնականում գնահատում են 6-9 միջակայքում, միայն մեկ կին է բոլոր հարցվածներից նշել.՝ *«Կգնահատեմ 9, որ էս փղես էլ ամուսնանա՝ արդեն 10, բայց իրա ամուսնությունը լուրջ ա արդեն, ինքը չի հավանում ոչ մեկին: Ես ամուսնուցս էլ դժգոհ չեմ՝ չի ծխում, չի խմում, կանանց հեղրից չի գնում, ընտանիքին նվիրված»:*

Որոշ դեպքերում հարցվող կանայք ամուսնությունը դիտարկում են իրենց հաջողություններից մեկը այն առումով, որ հակառակ դեպքում իրենց կյանքն այլ կերպ կդասավորվեր: Կյանքի վերաբերյալ դժվարությամբ ձեռքբերված մանրամասները ևս հետաքրքրական են և հաճախ ցուցադրում են ինչ-որ տեղ նաև հրաժարումը սեփական ցանկություններն իրականացնելու մտքից: *«Ես կյիների ամենաբախտավոր մարդը աշխարհում՝ կճանապարհորդների, աշխարհ կրեանների ու վերջ...Մի երեխա էլ ունենայի՝ հերիք էր ինձ...»* (2 տղա, 1 աղջիկ երեխաներ ունեցող բարձրագույն կրթությամբ կին)

Որոշ դեպքերում ամուսնությունը և մասնավորապես՝ դրանից բխող կնոջ՝ կենցաղավարմանը տրամադրվող ժամանակը, նաև հստակ դիտարկվում է որպես սխալ որոշում: Ամուսնությունը այս պարագայում ևս հանդես է գալիս որպես երազանքների և նպատակների իրականացման սահմանափակում: *«Հասա, շարք հնարավոր ա... Սրտեղծագործելու երևի շարք բան կունենայի, որովհետև կենցաղը սահմանափակում ա ամեն դեպքում: Չգիտեմ պե՞տք ա սա, որ ասեմ թե՛ չէ, բայց ես երազներ էլ տեսնում էի շարք շարք... Ու ես շարք ու՛շ հասկացա, որ երևի չպիտի ամուսնանայի, ես ավելի սրտեղծագործող մարդ կդառնայի: Ինձ էդ պատկերները գալիս էր ու ինձ թվում ա, որ ես դեմ գնացի դրան»:* (բարձրագույն կրթությամբ կին)

Նորից ամուսնության մասին խոսելով հատկանշական է այն միտքը, որ հարցվողների մեծ մասի կողմից այն դիտարկվում է որպես անխուսա-

փեղի իրողություն: «Մտածել եմ, որ ինչքան լավ եղավ, որ ամուսնացաւ ու մնացի էստեղ, էլ գյուղ չվերադարձաւ... Որովհետեւ էր դեպքում իրոք ամեն ինչ ուրիշ կերպ կդասավորուէր... Բայց չամուսնանալ, հասկապես գյուղի ընտանիքում, ինձ դժվար թէ կհաջողվէր... Որովհետեւ արդեն սովորելու փարհներին, երբ որ Ա.-ը կար, մորաքույրս (իրենց փանն էի սպրում) շատ հաճախ հարցնում էր. «Բա երբ եք ամուսնանալու...», «Ավարտես հետո՞ կամուսնանաք...» ու էսպես...»: (բարձրագույն կրթությամբ կին)

«Չամուսնանալ՝ բացառված էր մեր դաստիարակության պարագայում, որովհետեւ պատաս միշտ ասում էր. «Տղա չունեցա, գոնէ փեսեքս 3-3 լավը դուրս գան...», այսինքն, մեր ականջին օղ էր ոնց որ, որ մեր պատան պեղք ա երեք հար փեսա ունենար...»: (բարձրագույն կրթությամբ կին)

«Մտածել եմ, ու փոշմանել եմ, որ ամուսնացել եմ...Որովհետեւ մարդ գոնէ մի քիչ իրան հարմար մարդու հետ պեղք ա ամուսնանա...Ես Թիֆլիս մեծացած աղջիկ, ամուսնացաւ Երևանի մի հար սովորական ընտանիքի տղայի հետ, ով ուներ 4 քույր ու ում էր 4 քրերը ամբողջ կյանքում ինձ նեղություն են փալու: Մենակ երեխեքիս համար ա, որ չեմ փոշմանել»: (միջին մասնագիտական կրթությամբ կին)

«Հա, մտածել եմ, որ ասենք կարար ուրիշ ձև լինէր: Ուզողներ շատ-շատ կային, օրինակ հենց էր նույն օրը, մինչև ամուսնուս գալը, էլի եկել էին ինձ ուզելու: Իգոր էր անունը՝ բոյով տղա էր: Չամուսնանալ չեմ մտածել, բայց մտածում էի, եթե Իգորի հետ ամուսնանայի, կարող ա գնայի Ռուսաստան, կյանքս կարող ա լրիվ ուրիշ ձև դասավորվէր, էս դժվարությունները չլուսնէի, էս պահերը չլինէր...Օրինակ էր Իգորի մաման շատ ուրախ կին էր, որ համեմատել կեսուրիս հետ չէր էլ լինի...Բայց մտածում էի, ասում էի. «Ինչ իմանամ, կարող ա նրանց թերություններն ավելի շատ էր...»»: (միջին մասնագիտական կրթությամբ կին)

Որոշ դեպքերում կանայք անկեղծ նշում են, որ այլ կյանքում գուցե չլինէր ամուսնությունը: «Հիմիկվա իտեքս որ էն վախար լինէր, չէի էլ ամուսնանա... ասա ինչի... Ինչ կա որ՝ գործունյա, աժեղութի, տեղը տեղին կգնար էլի կյանքս...Ոնց էլ ըլնի, մի հացի կտոր էլ կվասարակեի, բայց ոչ ըրենց էլի, սենց փանջված...Շատ եմ փանջվել, շատ-շատ, քեսամ ձև եմ փանջվել, էրի որ պարմեմ, որ մանրանամ...Էրի պեղք չի, լուշն թող ոչ մեկը ըրենց օրեր չքաշի...Դաժե թշնամուս չեմ ցանկանա այ էդ կյանքը, որը ես սարել եմ, թող ոչ մի հարս այ տենց չեթա...»

Հիմա ինչ եմ ուզում ասել... Էս մեր ջահել երիտասարդներին խորհուրդ կրամ, որ իրանք լավ տնտես, ջոկեն որը որից հետո ա՝ նոր գնացեք... Մի՛ վրազեք, կհասցնեք ամեն ինչ, բայց

վայելեք ձեր ջահելությունը... Վայելեք, չեմ ասում՝ ասիո-ցիո՝ մարդավարի... Որովհետև էլ ջահելություն հետ չի գա, էր էլ ոչ մեկին չի մնա, բայց սպրեմք...

Հիմա որ րեանում եմ հարսանիք, անկախ ինձնից ես հուզվում, լացում եմ... Մեղկը չեմ, գնում ընկնում եմ դռի փակ... Ես մեղկում եմ, շար եմ խղճում... Ոչ էն ա՝ իմանա ինչ անի, ինքն էլ ա ջահել, ինքն էլ ա ուզում իրա կյանքը անի, բայց ոնց ա գնում ա ուրիշի համար ծառայում ա... Էն էլ՝ մեկը չի, երկուսը չի, ընդհանրում 3 հոգի կա, 4 հոգի կա, 5-ը կա... Բա էդքանին գնա ծառայի... Ես ծառայել եմ, չեմ ուզում էլ ոչ մեկ ըրենց ըլնի... Բա ես ինքնասիրություն չունեի խի... Ինչի՞ չունեի... Մեկը չկար էն վահար, ասեր աչքիդ վերևը ոնք կա, բայց դրա հետ ես մի ձեն չէի հանում: Ուղղակի ինքս գիրակցելով՝ եթե ես հարս եմ՝ ես պրի լռեմ, չպրի պարասխանեմ...»: (միջին մասնագիտական կրթությամբ, 3 տղաներ ունեցող կին)

Մյուս կողմից անգամ այլ կյանքի մասին մտածելիս, կանայք ունեն այն կարծիքը, որ կյանքը պետք է լիներ այնպես, ինչպես ներկայումս է: Այլ կյանքի մասին պատկերացումները բավական աղոտ են, հստակ չեն: «Մրածել եմ, ու չեմ պարկերացրել առանց երեխեքիս... Մի պահ գալիս ա, որ միշտ էլ չեմ հասնում վերջին էր մրքիս... Չեմ պարկերացնում էլի ասեմք թե ինչ կարայի անեի, ու՞ր կլինեի, ո՞նց կլինեի... Էր երևի մեր որոշելիքը չի...» (բարձրագույն կրթությամբ կին)

«Չէ, մեկ-մեկ որ հիշում ենք անցյալը, ամուսինս ասում ա. «...Թե դու որտեղի՞ց եկար ինձ գրար...», ես էլ ասում եմ. «Մի՛ մոռացի, թե ով ա ում գրել...», 14 փարեկան երեխա էի՝ ուշք ու միտքս խաղը, եկան ինսանսիտո: Չնայած էր հիմիկվա համար ա չէ՞ շուր, էն ժամանակ րենց էր, հարկապես՝ գյուղում» (միջնակարգ կրթությամբ կին)

Կանայք նաև այլ կյանք չլինելու դեպքում նշում են, որ միշտ սպասել են մեծանալ և մայրանալ: Սակայն միևնույն ժամանակ իրենց խոսքում հերքում են այն տարածված միտքը, որ կնոջ հիմնական դերը մայր լինելն է: «Հիմա, երբ որ ահագին սպրեղ եմ արդեն՝ մրածում եմ, բայց էն ժամանակ՝ չէ: Որովհետև դու չգիրես ինչ ա մոսնությունը ու երեխան, որ իմանաս՝ ուզում ես, թե չէ: Թե չէ միշտ լսում ենք մայր, երեխա, ընդհանր, որ դրանք են ամենակարևոր բաները կյանքում: Բայց ես ճանաչում եմ շար մարդկանց՝ կին էլ, փղամարդ էլ, որոնք ընդհանր չունեն բայց բոլորից էլ լավ ու երջանիկ սպրում են»: (բարձրագույն կրթությամբ կին)

Բարձրագույն կրթություն ունեցող կանանց պարագայում հատկանշական է, որ նրանք ունեն ֆատալիստական բնույթի դիրքորոշումներ

իրենց կյանքի վերաբերյալ: «Չէ, ես մտածում եմ, որ էդպես էլ պետքս լիներ, մանավանդ, որ ես ամուսնուս չէի սիրում, միգուցե էր իմ ճակատագիրն էր...»

«Ես հավատում եմ ճակատագրին, ու հավատում եմ, որ ինչ-որ նախատեսված է ի վերուստ՝ այնպես էլ լինում է՝ անկախ մեր կամքից»: Հիմնականում կյանքը փոխելու մասին մտածում են, բայց այս պահին նման մտադրություն անգամ չունեն, չի անցնում մտքներով:

Նման բնույթի պատկերացումները այլ կյանք ունենալու մասին առկա են նաև միջին մասնագիտական կրթությամբ կանանց շրջանում: «Ե՛վ լավ, և՛ վատ... Որովհետև, դու չգիտես, Աստուծո գործերը անքննելի են, Աստված ասորոշում, որը ոնց պետք աս լինի... Ես ո՛վ եմ, որ ես տեսնեմ ինչ կարար լիներ»

«Եթե... չգիտեմ ոնց կլինեի, մտածել եմ բայց, կարող աս լավ ըլներ, կարող աս վատ ըլներ, էրի որոշողը ես չեմ էլի, Աստված աս»

«Եթե չամուսնանայի... Հիմա ես ուրախ եմ որ ազատություն աս, բայց համ էլ պայմաններից բերեց նրան, որ էդ ազատությունը մի քիչ ուրիշ ձև ընկալեցին շարերը, ես էլ մտածում եմ, որ ազատությունը եղավ էն, որ չեն ամուսնանում: Մեր ժամանակ օրինակ, եկան ինձ ուզեցին, մերոնք փվեցին: Իհարկե ես ունեի առաջին սեր, շատ լավ, ինձ համապարասիան, իսկ իմ ամուսինը համ հիվանդ էր, համ խմող էր, իհարկե անընդհատ մտածել եմ, որ եթե ես ամուսնանայի իմ սիրու հետ, շատ լավ կլիներ, չեմ կասկածում: Երեխեք չունենալու մասին չեմ էլ մտածում, չգիտեմ թե ինչ ձև կապրեի, բայց ես հանդուրժող եմ»:

Ճնշումը որոշումներ կայացնելու ընթացքում որպես այդպիսին դրսևորվել է ընտանիք(ներ)ի բոլոր սերունդների կողմից: Վաղ տարիքում ճնշումը ավելի շատ հոր, մոր, եղբոր, իսկ ամուսնությունից հետո՝ ամուսնու և նրա ծնողների կողմից է մատնանշվում, երեխաներ ունենալուց հետո՝ նաև երեխաների: «Միայնակ չեմ եղել երբեք... Չեմ որոշել մի քան մենակ, առանց սկզբում ծնողներիս, հետո՝ ամուսնու... Հիմա էլ՝ երեխաներիս կարծիքը հաշվի չառնել չեմ կարող»: (բարձրագույն կրթությամբ կին)

Որոշումներ կայացնելիս իրենց նկատմամբ ճնշումների մասին պատկերացումները զանազան են: Անկախ կրթական մակարդակից կանայք ենթարկվել են ճնշումների, սակայն դա ընկալել են որպես սովորական երևույթ, ոչ ճնշում: «Ճնշում՝ չէ, բայց մենակ էլ չեմ կայացնում ես, փան անդամների հետ քննարկում եմ ամեն քան: Եթե տեղ ես գնում, ասում ես, որ ուշ կգաս, զգուշացնում ես, որ էսօր երկար ես մնալու գործի տեղը: Եթե մի քան աս՝ գիտեմ, որ ամուսնուս դուրը չի գա, ասում եմ, որ «պետք աս», դրա համար եմ անելու, բայց ճնշում՝ չէ»: (բարձրագույն կրթությամբ կին)

Միջին մասնագիտական կրթություն ունեցող կանանց մեծամասնությունը նույնպես վստահ է, որ ինքնություն է կատարում որոշումները: «Իմ կյանքի վերաբերյալ որոշումները ես ինքս եմ կայացնում՝ իհարկե տղուս հետ խորհրդակցելուց հետո»:

Խոսելով որոշումների կայացման մասին կանայք հիմնականում նշում են, որ ճշում իրենց և իրենց որոշումների նկատմամբ չկա: «Մեր տան համար ես ավելորդ եմ համարում ըրենց բանի մասին խոսելը, որովհետև մենք ամեն մեկս իրար հարգում ենք, լսում ենք: Օրինակ, ես ու ամուսինս անցյալ տարի գնացինք ծով երկուսով, էս հարևանս տեսավ, ասում ա. «Դու ինչ ես կորցրել ծովում, թողեք ջահելները գնան...» սենց մի միտք... Մտածում ես, ասում ես, ուրեմն որ ես արդեն ասենք թե 50 անց եմ, ուրեմն ես վերջ, իմ կյանքը վերջացավ: (միջին մասնագիտական կրթությամբ կին)

Բայց երբ խոսում են ազատ ժամանակի մասին, փաստում են ըստ էության հակառակը: Ազատ ժամանակ ունենում եմ հիմնականում օրվա վերջին, երբ որ մի քիչ նստում եմ հեռուստացույցի առաջ: Ես ինտերնետ, ֆեյսբուկ տենց բաներից հեռու եմ, չեմ հասկանում, չեմ էլ ձգտում... Ամուսինս ասում ա. «Քեզ մենակ էր էր մտում...», հա, գիտեմ, որ թույլ չի տա, երևի որանից ա, որ չի էլ ձգում ինձ»: (միջին մասնագիտական կրթությամբ կին)

Միևնույն ժամանակ ոչ բոլոր կանանց շրջանում է առկա անորոշություն ճշման վերաբերյալ: Որոշ դեպքերում կանայք նաև հատակ մատնանշում են այն: «Հաճախ եմ զգացել, ոչ թե երբևէ... Բանի կար՝ ես ոչ մի տեղ գնալու իրավունք չունեի տարիկի համար, հիմա էլ հարսիս համար՝ ասում եմ շուր գնամ րուն, հանկարծ չկույն...»: (բարձրագույն կրթությամբ կին)

«Եթե որոշեի չամուսնանալ, ծնողներիս համար էր շատ մեծ տրագեդիա կլիներ, որովհետև իրանք տենց էին մտածում, որ աղջիկ ես՝ պիտի ամուսնանաս ու պապաս էլ հենց տենց ասեց: Ես որ ասում էի՝ չէ... էս... էս... ասում էր. «...Քեզ ո՞վ ա խանգարում... քաղաքում են, էս տեսակ մարդիկ են...»: Բայց պարզվեց, որ խանգարում ա...»: (բարձրագույն կրթությամբ կին)

2.5. ԱԶԱՏ ԺԱՄԱՆԱԿ

Ազատ ժամանակի անցկացումը ունի մի շարք դրսևորումներ, որոնք հիմնականում սահմանափակվում են տան տարածքում գտնվելով: Դրանց թվին են պատկանում՝ տնային գործերով զբաղվելը, հեռուստացույցով և/կամ համացանցում ինչ-որ բաներ դիտելը, մտտիկ և հեռու հարազատներին այցելություններ անելը, կար ու ձև անելը, գործելը: Հազվադեպ նաև՝ ընկերների և մտերիմների հետ տարբեր վայրեր այցելելը, եկեղեցի գնալը:

«Ազապ ժամանակիս հիմնականում կարգի եմ քերում արեղ պարսպելու սենյակը, որովհետև հաջորդ օրը էլի երեխեք կան գայու, հետո հեռուստացոյց եմ շար եմ նայում, ինտերնետից չեմ օգտվում, բայց հեռուստացոյց շար նայում եմ, բոլոր լուրերին հետևում եմ: Էսպես հիմնականում... Շարաթ կիրակի էլ երեխեքն են գայիս, կամ մի րեղ հավաքվում ենք մեկի րանը բոլրով...» (բարձրագոյն կրթությամբ կին)

Բարձրագոյն կրթությամբ կանանց շրջանում ազատ ժամանակի անցկացման մասին սպասելիքների վրա հիմնված պատկերացումները նման են, բայց տարբեր են դրանց իրական ձևերը՝ բացի տնային գործերով զբաղվելու հատվածից: Ազապ ժամանակս, հա, ես եմ պլանավորում լրիվ, բայց դե ինչ... Մեկ ա նոյն ձև են անցնում օրերը, երբ որ րանն ես ամբողջ օրը, միշտ, որ սկսում էի մաքրություն անեի, հարսս զանգում իմանում էր, ձեռ էր առնում ինձ, ասում էր՝ «Ման, պարերը մաշվեց...»:

«Դե հիմն չեմ աշխարում, հիմնականում րանն եմ, երեխու հետ, հետո ինտերնետը հիմն փրկել ա պարսպ մարդկանց, օրինակ՝ ինձ, մրնում եմ ու ժամերով կարդում եմ, նորություններ եմ իմանում, բժշկական բաներ եմ կարդում: Լավ ա, էս ժամանակ գիրելիքն էր դիֆիցիտ էր, հիմն բացում ես ու առաջդ սաղ գիրելիք ա...»

Սրեղծագործ մտքի իրացումը ազապ ժամանակ ունենալու դեպքում ասիմանսիակվում է հիմնականում րանը և խոհանոցում: «Խոհանոցում... Շար եմ սիրում խոհանոցը, եթե ազապ եմ խոհանոցում եմ լինում, պիտի մի բան արեղծեմ, հնարեմ, սարքեմ» (բարձրագոյն կրթությամբ կին)

«Էրեխեքի հետ եմ ես հիմնականում, բայց րանն էլ, ինչ կարողանում եմ, ինչ մտքովս անցնում ա՝ անում եմ: Հիմնականում՝ րանը...» (միջին մասնագիտական կրթությամբ կին)

«Հա, ես պլանավորում եմ, արեղ արդեն իմ ամուսինս կապ չունի, ինքը իրա գործով, ես եմ անում րան գործեր բան, էս մի րդուս հետ եմ ժամանակ անցկացնում, որ ամուսնացած չի»: (միջին մասնագիտական կրթությամբ կին)

Երբեմն միջին մասնագիտական կրթությամբ կանանց խոսքերից պարզ է դառնում, որ նրանք զոհում են ազատ ժամանակը իրենց պատկերացումներին համապատասխան անցկացնելու ցանկությունը, որպեսզի “նեղություն չտան” իրենց երեխաներին և մյուս հարգատներին: «Կուզենայի շար ինչ-որ մի րեղ դուրս գալ, գնալ-գալ, բայց հիմն հասարակ մի րեղ գնալն էլ արդեն գումարի հետ ա կապված, դու չես ուզում քո երեխուց կորեւս, վերցնես գնաս արեղ»:

Որոշ կանայք նշում են, որ կցանկանային փոխել կյանքը, բայց միևնույնն է անել նույն բանը ավելի մեծ մասշտաբներով: «Կուզենայի, ինչի ոչ: Բայց գիտեք, հիմն ժամանակներն են էսպիսին, որ դու հաշվարկով ես անում ամեն ինչ, դու չես կարող քեզ թույլ տալ, ենթադրենք, ամեն կիրակի թոռնիկներիդ հավաքես փանեա մի ինչ-որ մանկական զվարճանքի կենտրոն, ասենք թե: Դա թանկ հաճույք է, դու պետք է կտրես քեզանից մի որևէ բան, որ դա անես: Հնարավորություն է պակասում երևի թե անելու էն, ինչ իսկապես ուզում ես»: (բարձրագույն կրթությամբ կին)

2.6. ԴԻԲՔՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԳԵՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ըստ էության հետազոտությունը ցույց տվեց, որ բարձրագույն կրթությունն ընդհանուր առմամբ չափորոշիչ չի հանդիսանում գենդերային հավասարության կողմնակից լինելու հարցում, շատ հաճախ իրենց խոսքում հենց կանայք են շարունակում խորացնել կարծրատիպերը և դրանցից բխող ու ակնկալվող ծայրահեղ կարծրատիպացված վարքը: «Հաղթահարել տենց հայրուկ հարկավոր չի, որովհետև էլ լինում ա ինքնըստիներքյան, երբ որ մարդիկ գնում են դուրս, տեսնում են ընդեղ սենց ա, գալիս են ու միանգամից ուզում են իրանք էլ տենց անեն, կամ հեռուստացույցով են տեսնում մի բան, երևի մտածում են դրա մասին: Իսկ հայրուկ, որ դնես տղամարդկանց ասես՝ պետք ա հավասար լինեք, պարզ ա՝ կասեն չէ... Առյուծը կուզի՞, որ ինքը էլ չլինի կենդանիների թագավոր՝ չէ...Ու, էս էլ ասեմ ու վերջ, մենք էլ՝ կուզենք տեսնել առյուծին որպես նապաստակ...» (բարձրագույն կրթությամբ կին)

«Էս թեման շատ վիճելի թեմա ա, բայց ես գտնում եմ, որ ինչ պարտադիր ա, որ կինն էլ տղամարդուն հավասար լինի...Մեկ ա, ինչքան էլ հավասար լինի, ուզում ա՝ անց լինի, մեկ ա էլ դարերից եկել ա, որ տղամարդն ա փան գլխին կանգնած (այսպես ասած): Ես երկու տղա եմ դաստիարակել, ու չեմ պարկերացնում, որ հանկարծ հարսը կարա գա ու ասի՝ էս փան իշխանությունը իմն ա ու վայր: Չէ, մեր տունը տենց բան չի կարա լինի: Հիմն էսքան տարին, որ արդեն չեմ աշխատում, լավ եմ զգում ինձ, ու միշտ մտածում եմ, որ կինը ամեն դեպքում փանն ավելի շատ ա պետք. լավ եմ զգում ինձ, որ գալիս են երեխեքը գործից, տեսնում են ես տունն եմ: Իրանք էլ էին ասում, որ անսովոր ա, որ տունն եմ, բայց լավ ա...»: (բարձրագույն կրթությամբ կին)

«Հիմա, օրինակ էս օրը տղուս տանն ենք, ինքը ունի աղջիկ և տղա...Ու ես իրան ասում եմ. «Տղուն չխեղճացնես հանկարծ...»: Մեկ-մեկ լսում եմ՝ դուրս չի թողնում իջնի, ասում ա, որ դաս անի...Ասում եմ. «Ապեր ջան, չի կարելի, տղուն պետք չի մեկուսացնել, վրեն կծօծաղեն թաղի երեխեքը, կասեն Կոնկրետ դուրս չեն թողնում...», ըհրն, իսկ էս աղջկա համար չենք մտածում չէ՛»:
(միջին մասնագիտական կրթությամբ կին)

Գեղեցիկ դերերի փոփոխություններին միավաճություն հիմնականում չի նկատվում, կանայք ավելի շատ հիմնվում են առկա ավանդույթների և կարծրատիպերի վրա: «Մեր ընտանիքում՝ հարցեր ու պարագաներ կան, որ այո, բաներ էլ կան՝ որ չէ... Բայց, երևի նորմալ ա դաս, նորմալ ա, որ ամեն ինչի մեջ չմտնես, թողես տղամարդկանց էլ էն, ինչ ի սկզբանե իրանք պրի անեն: Օրինակ, իմ սկեսուրը, շատ երկար տարիներ աշխատել ա, ու համարյա իրա երեք երեխաներին ինքն ա պահել, բայց ես չեմ աշխատել երբեք, չգիտեմ, սրեղ հարցը արդեն ընտանիքի տեսակն ա, ամուսնու բնավորությունն ա և այլ հարցեր: Օրինակ, ես կյանքում չեմ խառնվի, իմ ամուսնուն ասեմ՝ ուր գնա, ուր չգնա, ում հետ գնա...Ինքը ինձ ոչ մի անգամ չի ասել՝ մի ասա դու ինձ, բայց ես գիտեմ, որ պետք ա չասեմ»:
(բարձրագույն կրթությամբ կին)

«Մեր ընտանիքում հայրական եղել ա շատ համերաշխություն, մենք չենք ինացել էր ինչ բան ա՝ կինը ասի, տղամարդը ասի... Հետո ամուսնացա, եկա արդեն սրեղ իրանց տանը մայրիշխանություն էր, լրիվ որոշում էր կեսուրս, կեսուրս էլ նենց հանգիստ մարդ էր, ինքը բնավորությամբ տենց էր մի քիչ երևի, հետո էլ Վանի կողմերից գաղթած են, էր էլ երևի իրա հետքերն էր թողել էր խեղճության համար: Այ էր ժամանակ նոր ես տեսա՝ էր ինչ ա... Հետո հիմա, արդեն մեր ընտանիքում, ամուսինս ունի տենց բաներ, որ ասենք ինքը որոշի, բայց նաև տան հետ կապված հարցերը ինքը երբեք մենակ չի որոշի, միշտ հարցնում ա՝ կամ ինձ, կամ երեխեքին: Մենք տենց բաներ չունենք՝ հարսին ասենք սրեղ մի գնա, աղջկաս հետ մի քիչ տղերքս են ավելի շատ «աշխատում», որ չեմ ասում գրկում են ամեն բանից, ոնց որ շատ մարդկանցից լսում ենք, բայց դե չեն էլ ուզում, որ հետո իրանք մի տղա լեզուները կարձ լինի»:
(բարձրագույն կրթությամբ կին)

Բարձրագույն և միջին մասնագիտական կրթությամբ կանանց շրջանում նաև կա այն կարծիքը, որ գեղեցիկ հավասարություն պետք է լինի: «Բարկե, պետք է ունենան: Մարդ արարած է՝ հետո ինչ, որ տղամարդ ա, կամ կին ա... Չէ որ ամբողջ ընտանիկան հոգաք, երեխաների հոգաք կնոջ վրա է: Ես մտածում եմ, որ կինը պարտադիր ավելի լավ լի-

դեր է, քան տղամարդը: Կինը ավելի կոփված է շատ հարցերում, քան տղամարդը, կինը նաև կարող է լավ քաղաքականություն վարել, որովհետև ընտանիքում էլ մենք օգտագործում ենք քաղաքական հնարքներ...» [ուղեկցվում է ծիծաղով]: (բարձրագույն կրթությամբ կին)

«Օրինակ վերցնենք ընտանեկան իրավիճակը, վերցնենք ընտանեկան մակարդակը, ես վերցնեմ հենց մեր ընտանիքը. Ես հավասար եմ իմ ամուսնուն, որոշումներ կայացնելուց քննարկում ենք, ամեն մեկս մեր կարծիքը ասում ենք ու որոշում ենք: Երբևէ ես չեմ նկատել տղամարդու առավելություն, ես զգացել եմ, որ հավասար ենք»: (բարձրագույն կրթությամբ կին)

«Եթե ամբողջ հասարակության համար չեմ կարա ես խոսք տրամ, բայց իմ ընտանիքում կա, որովհետև ես իմ խոսքը ունեմ, իմ աղջիկը իրա խոսքը ունի, իմ տղեն իրա խոսքը ունի, հարսն էլ, գրկված չի ոչ մեկ, ամեն մեկն էլ իրա կարծիքը ունի, չկա մեկը առանց կարծիքի»: (միջին մասնագիտական կրթությամբ կին)

«Ես քաղաքականությամբ եմ շատ հետաքրքրվում, հետևում, քաղաքականության մեջ էլ կան կանայք, բանց քանի որ սուրա, փրածա մեր քաղաքականությունը, ընդել մի քանի Հերմինե Նաղդալյաններ կան, էդ ամեն ինչ ոնց որ սուր լինի, ես կուզեի որ Զարուհի Փարանջյանի նման դեպուտատներ ունենայինք, Անահիտ Բահշյանի նման»: (միջին մասնագիտական կրթությամբ կին)

Հավասար իրավունքներ պետք է լինեն նաև միջին մասնագիտական կրթություն ունեցող կանանց կարծիքով, բայց հետաքրքիր է դրա առանձնահատկությունների ուսումնասիրությունը: «Գտնում եմ ես, որ իրավունքները նույնը պետք ա լինեն, բա ոնց, ուղղակի էր իրավունքները չպետք ա դառնան շատ ու շատ վատ քաների հիմք: Էսօր երիտասարդները հավասարությունը ուրիշ ու ավելի վատ ձևով են հավասար լինում: Օրինակ, ինձ դուր չի գալիս, որ ես փողոցում տեսնում եմ կնոջից ոչ մի քանով չտարբերվող տղայի ու տղամարդուց ոչ մի քանով չտարբերվող կնոջ: Էր հավասարության ամենավատ ձևն ա, որ յուրացնում են նոր սերունդները»:

«Մեր տանը ես եղել եմ միշտ ներսի պատ, ամուսինս՝ դրսի: Ես իմ երեխեքի համար եղել են մայրական օրինակ, ամուսինս՝ հայրական... Հա... Ես չեմ ուզել ու չեմ էլ աշխատել երեք... Բւմ երեխեքին էլ դաստիարակել եմ տղային՝ որպես տղա, աղջկան՝ աղջիկ»:

«Աղջիկը պետք ա դաստիարակված լինի, չեմ ասում՝ տղան չէ, բայց աղջկան ուրիշ ձև պետք ա մեծացնես, սովորացնես, ուրիշ կողեր պետք ա դու դնես աղջկա մեջ... Մենք մի անգամ արդեն բախվեցինք նրա հետ, որ աղջկան չափից դուրս ազատութ-

յուն էին Կրկել ու Էր աղջիկը արդեն սահմաններ չէր ճանաչում... Ու, հիմա մեր թողնիկներին էլ, ես միշտ հեղինակում եմ, որ որպես աղջիկ մի քիչ չսպիտից դուրս համեստ մեծացնեն, մեկ ա ինքը մեծացավ մի քիչ համեստությունը թողնելու ա...»:

Խորին հարցազրույցների արդյունքում պարզվեց նաև, որ որոշ կասայք վստահ են, որ հասարակությունում կա անհավասարություն: «Լիքը... Ամենակարևոր անհավասարությունը, որ ընդհանրապես երբեք մեր կինը իրա տեղը չի գտնում՝ մեծամասամբ, հիմնականում հրամանատարները փրամադրիկ են, երբեք չեն ուզում իրանց դերը զիջել, բայց համեստաբար, հիմա փոփոխություն կա»: (բարձրագույն կրթությամբ կին)

«Իսկ անհավասարություններ, առհասարակ, հասարակության մեջ շատ կա: Օրինակ, վերցնենք մեր կոլեկտիվները փարբեր ժամանակների, ավարտական երեկո էր ուզում գար ուսուցիչներից մեկը՝ ամուսինը արգելում էր, թափրոն էինք ուզում գնայինք կոլեկտիվով՝ ամուսինը արգելում էր: Մի քանի հոգի կային, որ արդեն բոլորը գիտեին, որ իրանց ամուսինները թույլ չեն տալիս գան»: (բարձրագույն կրթությամբ կին)

«Օրինակ Էնթան բաներ ա կատարվում, էդ բանը կակ թո, կիսարացները, Էրի տեսնողը, կասի, որ կա հավասարություն: Չէի սաի, որ կա հավասարություն: Օրինակ սոցոժո որ տեսնում եմ տենց ամուսինը խիստ ա, ծեծել ա, բան ա, ստում եմ. «Ասայ ես մի հատ ընդեղ ըլնեի, հըր տես դրան ինչ կանեի...»: Մտածում եմ, խի դու մարդ ես, ինքը մարդ չի, քեզ մայր ա բերել, նրան ուրիշ ա բերել: Պիտի լինի հավասարություն»: (միջին մասնագիտական կրթությամբ կին)

«Ասեմ, դա շատ ակտուալ թեմա ա: Ի սկզբանե, փրամարդու դերը միշտ էլ ավելի բարձր ա եղել, նուն սովետական փարիներին դա շատ խիստ ա զգացվել, որ փրամարդն ա ընդհանրի դեկավարը, հիմքն ա, գլուխն ա, ամեն ինչն ա: Կոնց դերը միշտ փորձել են ցույց չտալ: Կինը միշտ ցածր ա եղել՝ թե խոսքի առումով, թե որոշումների կայացման, ցանկացած առումով կինն ավելի ցածր ա եղել: Երկրիսկ ես ասեմ, որ ես փորձում եմ պատեհ-անպատեհ ցույց տալ, ասել, որ ոչ մի բանով էլ փրամարդն առավել չի, թեկուզ ես իմ ամուսնուն եմ ստում, փրամարդը ոչինչով առավել չի՝ նույնիսկ ինքրով: Փոխվել է ինչ-որ բան, բայց որ ասենք հա, կա հավասարությունը, տենց չի: Կանանց դերը մի քիչ-մի քիչ ոնց-որ բարձրացել ա, բայց էն սատիճան չի, առայժմ, հուսանք, որ փարիներ հեղո էն երազած կամ ձգտած հավասարությունը կունենանք»: (բարձրագույն կրթությամբ կին)

«Ես ասեմ, ամուսնուս մտք զգացի, որ ինչ-որ փեղ կա նաև սենց խանդ ասեմ, եթե փղաս հանրահաշիվը դպրոցական փրփներին իրան էր ասում օգներ, իսկ երկրաչափությունը՝ ինձ, էդ ժամանակ ինքը ասում էր. «Ինչի՞ երկրաչափությունը ինձ չես ասում...», փղաս էլ ասում էր. «Դե մամայի մտք ավելի արագ աս էդ պահը...»: Կամ ասենք ինչ-որ մի հար խնդիր լիներ մաթեմատիկական, ես կլուծեի, ինքը սրանդարուններից դուրս կլուծեր, որ փարբերվեր, ասեր, որ փես, մենք փղամարդիկս ուրիշ ձև ենք միաձուլ»։ (բարձրագույն կրթությամբ կին)

«Վասյ, ինչ փեղին էր...հա: Ինձ ամուսինս ասում աս. «Հա դե բա ոնց... բա դու փղամարդ ես...»: Ես գրնում եմ, որ իհարկե պետք է ունենան էր հավասարությունը: Ես նեղվում եմ շար-շար մի բանից, որ հարսանիք աս լինում, ու վերցնում օրինակ հաջորդ օրը գնում են հարսի փուն, ասում են. «Ապրեք, ասրեք...Շնորհավոր...»: Էր ինչ աս...Նախ ես սիրում եմ մաքրություն՝ առաջին հերթին, մաքրությունն իմ համար ամենակարևոր բանն աս ամեն հարցում՝ մանավանդ՝ բարոյական հարցերում: Բայց ես չեմ սիրում, որ փարբերություն են դնում: Էր փղային հարցրել են, որ երբեկիցե չի՞ գնացել ուրիշ փեղ...Ոնց կարելի աս...Հեթո ես շար վիրավորական եմ գրնում, ես էլ եմ արել, բայց գրնում եմ սիավոր սիավ...Չի կարելի...Երկրորդն էլ, իմ համար պետք աս հավասար լինեն 100 փոկոս: Էր ոնց աս՝ ընտրելուց չեն ասում. «.դու կին ես՝ մի գնա ընտրի...»: (միջնակարգ կրթությամբ կին)

Կանայք հարցազրույցների ընթացքում խոսում էին նաև գենդերային հավասարության համաշխարհային տենդենցների մասին, սակայն մնայուն առնական իշխանության գիտակցումը չէր զիջում ժամանակակից պատկերացումներին: «Հիմա ես Ձեզ մի բան ասեմ, աշխարհով մեկ հիմա կա կանանց՝ փղամարդ դատալու փենդենց և հակառակը՝ փղամարդիկ որպես կին են դարձել: Հիմա, չեմ հասկանում, սրեղ ինչ-որ պարադոքս աս արացվում: Շար դեպքերում փղամարդիկ փունն են նաբում, կանայք և՛ վասարակում են, և՛ լուծում են բոլոր հարցերը: Բայց, միևնույն ժամանակ, մեկ աս իրանք ասում են, որ խելացի են, որ իրենք են թելադրելու, իրենք են ուղղորդելու, իրենք են որոշելու ընտանիքին վերաբերող հարցերը: Ինչ-որ պարադոքսալ բան աս»։ (բարձրագույն կրթությամբ կին)

«Նայած ինչ հավասար հնարավորությունների մասին աս խոսքը... Ոչ էնքան, որ փղամարդը ընտանիքում կորցնի իրա դերը, բայց դե պետք աս կինն էլ լինի ինքնուրույն, կարողանա մի բան սրեղծել, անել... Օրինակ ես, իմ ամուսնուս մահից հետո, էնքան դժվար էր... Ես ոչ մի բանի ձև ու փեղ չգիտեի, որ շար էլ ուզենայի՝ շար դժվար էր... Կինը պետք աս նաև ինքնուրույն լինի, կարծում եմ...»: (բարձրագույն կրթությամբ կին)

Քննարկման առարկա են հանդիսանում նաև անհավասարության դրսևորումները, միգրացիան և դրա դրական հետևանքները կնոջ ինքնությունություն ունենալու վրա: «Ինքնությունության բանով որ նայում ենք՝ շար կան, որովհետև էսօր րենց շենք չկա, որտեղ գոնե մի րուն րդամարդը դրսում չլինի... Էս արդեն նրա մասին ա, որ էր րան կինը ինքնություն ա՝ Էրեխեթի դասրիարակության հարցում, րան առերրի հարցում, րողերի հարցում... Էր լավ ա, րայց նաև ընրանիքներ են շար րանդում էր դրսի պարճառով...Տղամարդը գնում րեսնում ա ընդեղ «իդեալական ա ամեն ինչ», էլ չի էլ ուզում հետ գա, հետ գա իրա րուն, իրա կնոջ մոր...»: (բարձրագույն կրթությանը կին)

Անհավասարության պատճառների մասին խոսելիս դուրս են բերվում հետաքրքիր պատկերացումներ արևմտյան մշակույթների ազդեցության և սերնդեսերունդ րոխանցվող արժեքների մասին: «Անհավասարության առաջին պարճառը իմ կարծիքով մեր գաղափարն են հավասարության մասին...Այսինքն, մենք միշտ լսում ենք, որ Եվրոպայում սենց ա, Ամերիկայում սենց ա, ու դա կոչվում ա հավասարություն, րայց մեր ազգային գծերը թույլ չեն րալիս մեզ էր հավասարությունը...Էս ա պարճառը... Մենք լսում ենք, որ Ամերիկայում երեխան կարա ծնողներին միլիցիա կանչի, դու պարկերացնում էս մի հայ ընրանիք, որտեղ երեխան միլիցիա րա ծնողներին՝ իհարկե չես պարկերացնում, ու նույն ձևով էլ կին-րդամարդ անհավասարությունը...»: (բարձրագույն կրթությանը կին)

«Անհավասարությունը ամեն րեղ ա ախր, ամեն րեղ, էր րենց հեշտ չի, որ հաղթահարես, անցնի գնա: Ամեն րեղ կա անհավասար վիճակ...Ու դա կյանքը րարդացնում ա, որովհետև իտեղված դեպքեր էլ կան, երբ որ շար ծայրահեղ վիճակ ա անհավասարության: Էր մի հոգով՝ իմ, քո պայքարելով չի, դրա համար պեք ա ամեն ուժեր մոքիլիզացնել, որ հաղթահարել էր անհավասարությունը: Մի քիչ ավանդական եկած րաներն ա, որ շար դժվարությամբ ա ժողովրդը մի կողմ դնում, մյուս կողմից էլ Եվրոպական նորություններն են, որ գալիս ու գալիս են: Ու րդամարդիկ, վախենալով, որ իրենց կանայք, երեխաներն էլ չմրնեն դրա րակ, սրիպված, ավելի խիստ են սկսում պահել...»: (միջին մասնագիտական կրթությանը կին)

«Ամենաառաջին պարճառն, ըստ իս, մեր գեներով ու հիշողությունով եկող սովորույթներն ու ավանդույթներն են...Իմ կարծիքով, մեր արյունն էլ, միտքն էլ հիշողություն ունեն, որը չի կարելի ջնջել, մոռանալ...Կամ, մի ուրիշ րան, եթե մենք գնում ենք մանկապարտեզ, ու անընդհատ լսում ենք, որ աղջիկները թույլ են, րդաները չեն լացում, որովհետև աղջիկ չեն...Մենք դա ենք սովորում...ու կիրառում ենք էր, որ աղջիկները թույլ են...»: (բարձրագույն կրթությանը կին)

Պատճառների շարքում է նաև տղամարդանց կողմից իրենց դերերը և իշխանությունը վայր չդնելու փաստարկը: «Պետք է ունենան, բայց չունեն և չեն էլ ունենա... Չկասկածես, որ հանկարծ կունենան... Միշտ էլ փղամարդը մտածում աս, որ ինչ-որ բան պիտի իրանք առավել լինեն... Պիտի որ լինեն, հիարկե, ինչի պիտի հավասարություն չլինի... Բայց տեսնում ենք, որ առաջընթաց կա, բայց էլի նույն բանն աս: Առաջ հլր ավելի քիչ աշխատարեղեր կար կանանց համար, հիմա մի քիչ հլր շարացել աս»: (բարձրագույն կրթությամբ կին)

«Գենդերային անհավասարության պարճատները առավել շար մեր փղամարդկանց դաստիարակությունն է, որովհետև դեռ մեր աղաթները, ասենք շար բան են: Շար բարոյական նորմեր կան, ըստ որոնց հայ փղամարդու համար շար անհարիր է, որ կինը կարող է իրեն հավասար լինել: Մենք փղաներին փոքրուց կրթում ենք տենց, որ պետք աս աղջիկը քեզանից մեծ չլինի, բարձր չլինի, իսկացի չլինի...» (բարձրագույն կրթությամբ կին)

«Ավանդական դաստիարակությունը ու ընտանիքներում կոնկրետ մեծերի ճշումները փղամարդկանց նկատմամբ, մեծերի պահանջկոտությունը, թե ինչպիսին պետք է լինի իսկական փղամարդը, հայրը: Ընտանիքներում կոնկրետ հավասարության հասնելու համար անհրաճեշտ են առանճին աստող ընտանիքներ, ես գտնում եմ, որ միակ ելքը էտ աս, որ նորաստեղծ ընտանիքը պետք աս առանճին աստի»: (բարձրագույն կրթությամբ կին)

Որպես անհավասարության պատճատ միջնակարգ կրթությամբ կասայք նշում են թե կանանց, թե տղամարդկանց դիրքորոշումները: «Պատճառներից մեկը ժամանակների փոփոխությունն է, այսինքն դա հավասարության պատատն աս, իսկ անհավասարության պատճատը երևի էն աս, որ մարդիկ չեն հարմարվում էտ փոփոխության հետ, որ փղամարդիկ չեն հարմարվում, որ կանայք էլ կարող են, կանայք էլ պետք է անեն, ետիմ՝ շար խորը, բայց շար ավելի նտրր ու բարդ բան աս: Ո՛՛ց ուզում են թող հասնեն՝ մենակ ոչ անբարո ճանաստրիներով...»: (միջնակարգ կրթությամբ կին)

«Երկուսն էլ՝ համ կինը, համ փղամարդը մեղավոր են անհավասարության համար. փղամարդ կա ազատություն չի տալիս կնոջը, կին էլ կա՝ ազատությունը սիալ աս ընկալում... Էն մնացածն էլ նայում են, ասում են՝ ավելի լավ աս չտամ, ասեն՝ չի տալիս, քան թե ասեն՝ էշ աս...»: (միջնակարգ կրթությամբ կին)

Գենդերային անհավասարության մասին պատճառաբանությունները երբեմն հիմնվում են նաև կանանց և տղամարդկանց հավասարության մասին Աստվածաշնչյան մեջբերումների վրա: Ընդհանուր առմամբ

նկատվում է գենդերային անհավասարությունները արդարացնելու միտում: «Այ էս թեման, հիմն շար և խոսվում, չգիտեմ, կարող և ես հիմն սխալ եմ ասում, կամ սխալ եմ մտածում, բայց մենք, երբ որ Աստվածաշունչը կարդում ենք, ընդեղ պարզ գրած և, որ Աստված կնոջը սրեղծել և տղամարդու կողակերից... Հիմն տես, կինը տղամարդու կողակիցն և, միշտ պեք և տղամարդու կողքը լին, ոչ թե իրանից առաջ, իրանից վերև...»: (միջին մասնագիտական կրթությամբ կին)

«Մեր ընտանիքում... Ուրեմն իմ ամուսինը շար հանգիստ մարդ և, շար բարի, հանդուրժող... Ես իրան միշտ կարամ ասեմ էսի սենց, էսի նենց, բայց ես էտի ցույց չեմ տալիս, ոչ մեկը կողքից չի իմանա երեք, որ ես եմ որոշել էր բանը, կամ Արոն խոսում և՛ ես մեջ ընկնեմ, խառնվեմ... Չէ... Բայց ինքը միշտ իմ կարծիքը հարցնում և, ոչ մի բան մենակ չի անի, ինչ որ փանն և վերաբերվում, երեխեքին և վերաբերվում»։ (միջին մասնագիտական կրթությամբ կին)

«Է թող ըլնեն... Բայց չէ էլի, պտի փարբերություն ըլնի էլի, վայր փակի... Ես տենց եմ կարծում՝ համ հա եմ, համ չէ հավասարությանը, բայց թող մի քիչ փարբերվեն... Եթե թույլ տղամարդ եղավ, ինքը իրա ես-ը չկարողացավ առաջ փանել՝ ինքը ենթակա և՛ պաղկարլուչնիկ... Ինքը չի կարա ընտանիքում ճայն ունենա, արեղ որոշում և կինը: Մարդը հելավ, գնաց գործի, որշում և կինը՝ կուզի փուն կհավաքի, կուզի գործ կանի, կուզի՝ չէ: Հիմն մարդը եկավ գործից, ոչ ճաշն և եփած, ոչ փնեքն և հավաքած... Ու իրա ընկերոջ հեք և եկել... Ո՞նց կլնի տենց՝ գա տենա սեղանի վրա մենակ իրանք չկան, օրը կեսօր և՛ տեղերը հավաքած չի... Ու ըրեղ ղեկավարում ակնիկը... Դա ճիշտ և՛ ոչ: Դա նշանակում և, որ ինքը թույլ և, իրա ես-ը ինքը չի կարացել փանի առաջ: Բայց սեքոջ ոչ իրա ծնողն և կարացել խոսքը անցկացնի, ոչ իրա հերը, ոչ մերը: Այ կնկա իշխանությունը տենց և»։ (միջին մասնագիտական կրթությամբ կին)

«Մի քիչ պտի փարբերվի, չեմ ասում՝ չերեզնոր, մի որոշ բան... Կամ էլ թե չէ՝ տենց ձևական, աչքկապոցի ըլնի, բայց գոնյա երևա, որ հա էլի, մարդուդ ասածով ես անում ամեն ինչ, ինքն և էլի լիդերը փանը...» (միջին մասնագիտական կրթությամբ կին)

«Իմ կարծիքով, իհարկե շար լավ և, որ ունենան էր նույն հնարավորությունները, բայց մյուս կողմից էլ կինը ոնց որ թե իրա դեմքը կորցնում և տենց, հիմն նայում ես՝ կանայք ոնց որ տղամարդ լինեն, ոնց որ իրանք ուզեն տղամարդու նմանվեն... Մի տեսակ, ես զգացել եմ էր քեռը, գիտեմ էր ինչ և, երբ որ

ամեն ինչ քո վրա ա, էր հեշտ քան չի, ու ինչքն են ուզում իրանք վերցնեն իրանց վրա ամեն ինչը՝ ես զարմանում եմ...»։ (միջին մասնագիտական կրթությամբ կին)

«Էրի անհավասարություն չի, էր մեր ազգի մրաօելակերպն ա, որը հազար տարի ա՝ տենց ա։ Հինս սաղ ըտենց են դաստիարակվում, էր են տենում, ինչ սովորեն։ Էս աղջիկ թոռու մի անգամ ասում եմ, ես երեխուս պահեմ, Սյուզի ջան դու գնա աշխատի, Մոնոլու ասում ա. «Մամաները չեն ախարում...», էս երեխես ծնված օրից տեսել ա, որ պապան ա աշխատում, տարին չի աշխատում, հորոխար կնիկը չի աշխատում...»։ (միջնակարգ կրթությամբ կին)

Հարցազրույցների մասնակիցների շարքում կային կանայք, ովքեր գտնում են, որ հավասարություն պետք չէ, սակայն դրա մասին մտորումներ են անում։ «Չէ... Ես կարծում եմ, որ հեշ պարտադիր չի, որ հավասար լինեն, վերջապես տղամարդու ձայնը պիտի առաջնայինը լինի։ Ես չեմ ասում լրիվ կինը պիտի ձայնագուրկ լինի, բայց զիջող պիտի լինի, պիտի իր խորհուրդը տղամարդուն էսպես ձևակերպի, որ կարողանա հասնել իրա ուզած արդյունքին։ Այլ ոչ թե էս բանով, որ ես էլ քո հետ հավասար իրավունք ունեմ՝ պրի հասնեմ. Էրպես չէ, ուրիշ կերպ։ Հավասար չէ, բայց պիտի ձայն ունենա, մանավանդ, որ այդ ձայնը շար խելացի է լինում։ Կամ պիտի տղամարդը էքրան խելացի լինի, որ կարողանա հասկանալ՝ «...էս մարդը ճիշտ բան ա ասում՝ լսենք իրան, թե չէ...»։ (բարձրագույն կրթությամբ կին)

Հետազոտության արդյունքում պարզ դարձավ, որ եթե անգամ կանայք և աղջիկները արժեք են իրենցից ներկայացնում, միևնույնն է կա ինչ-որ իշխանության տակ գտնվելու մասին պատկերացում, որը նորմալ է դիտարկվում։ «Չէ, իհարկե հավասար չեն։ Էր անհավասարությունն էլ ա գալիս կանանցից, ես քեզ ասեմ, եթե դու չես կարող քո դիրքը դնես և չես կարող քեզ պաշտպանես՝ ոչ մեկը քեզ չի պաշտպանի։ Դե դա մակարդակից ա գալիս, թե դու ում հետ ես գործ բռնում։ Եթե դու, կներես, բայց հենց կոնկրետ դու, քեզից ցածր մակարդակի մարդու հետ շփվես, ամուսնանաս, դու իրանից ոչ մի բան չունես սրանալու, իսկ ինքը, որպես տղեք մարդ, կկարծի, որ իրա տգիտությամբ ինքը ավելի բարձր ա, քան դու ու քեզ կճնչի։ Պարզ չի... Ես չեմ մեղադրում... Կան սաղիստ տղամարդիկ, կան եսիմ ինչեր, բայց ես լրիվ իրանց չեմ կարող մեղադրել, ոտոմս ասո մենք՝ կանայք, մեր գինը չգիտենք»։ (բարձրագույն կրթությամբ կին)

«Հետո մեր հայկական բանը, հարկապես ուայուներում դա մնացել ա... «Վայ, 25 տարեկան ա՝ մնացել ա տանը... Ինչ որ մեկը լինի մենակ թե գնա, բա երեխա չունենա...»։ Բայց իմ աղջիկս 40 տարեկան ա, ես չեմ մտածում, որ նա տանն ա մնացել, կամ երեխա չունի... Եթե պիտի դերիլ մարդ առնի և ինքը դաս-

տրհարակի, ավելի լավ և չառնի, ավելի լավ և վարժե երեխա չունենա՝ քան էս դեքիլից ինչ-որ մի բան պիտի ունենա, որ ամբողջ կյանքում ինքը տուժիլի... Ես գրնում եմ, որ մեր հայկական մենտալիտետը պիտի փոխվի էստեղ՝ գլխում, եթե էստեղ չկա, ոչ մի բան չես կարա անես՝ և՛ քո աղջկանը կծեծեն, և՛ կտանեն կրմիսացնեն, և՛ շերտիք կտան ձեռքը՝ էս լավ չես արել, էս լավ չես արել... Այ էր մակարդակը դա ուրիշ աս... Դա ուսյուններում և շար լինում... Հիմա քաղաքում չգիտեմ, օրինակ իմ շրջապատում ըրենց մարդիկ չկան: Ես չեմ տեսել ըրենց մարդիկ, որ կա՝ մ՛կիստությունը խառնվեն, կամ հարսները... Իմ ընկերուհիները խտր են, բայց ես չունեմ ըրենց, որ կիստությունը խառնվեն իրանց երեխեքի, կամ զոնքաչները... Նախ, փեսաները զոքանչներին կկանգնացնեն իրանց տեղը, որ ինքը կհասկանա, որ ինքը կապ չունի ընդհանրապես: Ինքը կարող և ազդի իրա փեսու վրա՝ աղջկա միջոցով, նույն ձևով, ոնց որ կեսուրը կարող և ազդի՝ տղու միջոցով»: (բարձրագույն կրթությամբ կին)

Ընտանիքում ճնշման և բռնության արտահայտումները՝ «Օրինակ թեկուզ լրացուցիչ մի տեղ ուզենայի գնալու՝ ոչ, ինքը էդ չէր թողնում: Ինչու՞: Չէր թողնում, ասում էր՝ մենք իրար հետ կգնանք... Կոլեկտիվի հետ ռեստորան գնալ չէր թողնում, առիթներ եղել և, և ինստիտուտը ավարտելուց, շատերն էին ամուսնացած, որ գնացին, բայց ինքը չթողեց: Որովհետև ամուսինների ու կանանց հետ չպիտի գնային, այլ մենակ կուրսով ու չթողեց» (բարձրագույն կրթությամբ կին)

Գենդերային դիրքորոշումների մասին քննարկումները անմասն չէին հարևանների մասին հիշատակումներից: Այս պարագայում հարևանը հանդես է գալիս որպես մեկը, ով փորձում է «պահպանել» կամ «պաշտպանել» ընտանիքի «պատիվը» ավանդական գենդերային դերերի մասին պարբերաբար հիշեցնելով:

«Իմ հարսներս իմ տղաներիս հետ միշտ հավասար եմ տեսել ես, փոքր տղես շար ազատ մտածելակերպ ունի՝ հարսիս էլ, երեխեքին էլ շար ազատ և պահում, մի հար շոր չի ասի՝ մի՛ հագի, կարճ մի՛ հագի, մի՛ գնա... Հարևաններ կան, մեկ-մեկ ասում են, էս Ասուլիկս շար սիրուն ֆիգուրա ունի, կարճ էլ հագնում և, ասում են. «Խի՛ եք թողում...»:» (միջնակարգ կրթությամբ կին)

2.7. ԿՆՈՋ ԻԴԵԱԼ

Հետաքրքրական է, որ կնոջ իդեալի մասին խոսելիս բարձրագույն կրթություն ունեցող կանայք ավելի հստակ անուններ և կերպարներ են նշում:

«Այլա Պուգաշովային եւ շար սիրում: Դե, որովհետքն մենք համարյա թե մի րարիքի ենք, բայց նայում եմ իրան ու նայում եմ ինձ՝ հսկատակ, ես ավելի մեծ եմ երևում»:

«Կնոջ իդեալ իմ համար եղել ա իմ դասուկեր»:

«Իմ մասնին իմ համար կնոջ մոդել ա եղել՝ համեստ, գրագետ, խելացի ու շար բարի, որը որ էսօր մեզանից պակասում ա բարոյթյունը... Ինքը ամեն մեկին հասկանում էր, ամեն մեկի դրության մեջ մտնում էր, մի անգամ բարձր ձայնը չենք լսել մենք իրա»:

«Սոֆի Լորենը, ընդհանուր իրա կերպարը ամեն ինչ վերցրած»:

«Կնոջ ամենսիրելիական օրինակը Մարիամ Ասրվաձա՝ ծինն ա, թե չէ ոչ մի կնոջ ու փղամարդու Ասրվաձ իդեալական չի արեղծել... Ես ո՛վ եմ, որ իդեալ ընտրեմ»:

«Մի դասախոս ունեիր՝ Գասպարյան, ով մեր կուրսի դեկավարն էր: Ամեն օր, էր կնոջ դասից հետո ես իրան իդեալականացնելով գնում էի փուն էր մտքերով: Հիմն չկա երևի ինքը, էն ժամանակ էլ մեծ էր արդեն... Իր փեսակը՝ գրագետ, կարդացած, մասնագիտական ասպարեզում փայլում էր, միշտ ուզում էի ճիշտ իրան նմանվել: Անգամ հիմն, ամեն անգամ լսարանի առաջ կանգնելուց հիշում եմ, թե ոնց էր կանգնում ինքը, ոնց էր խոսում ինքը...»:

«Կնոջ իդեալ... չէի մտածել էր ուղղությամբ... բայց կարծես թե ունեմ, մի քիչ մտածեմ՝ ասեմ... Մարգարիտ Թեյրզեր... Էր րարիներին, երբ ինքը պրեմյեր էր, ոչ մեկ դեռ երևի չէր էլ մտածում դրա մասին, որ կա րենց հավասարություն-անհավասարություն, որ կիրը չէր կարող լինել բարձր պաշտոնում... Էս ամենի արդարացումն է նա, այսպես ասած»:

«Սոսե մայրիկի կերպարն է օրինակելի, ըստ իս... Որովհետքն շար եմ լսել իր խիզախությունների մասին պարմություններ...»:

Կնոջ իդեալի մասին խոսելիս միջնակարգ և միջին մասնագիտական կրթություն ունեցող կանայք հիմնականում նշում են, որ իդեալական մարդ չկա, իսկ այն դեպքում, երբ որևէ մեկին երկրպագում են, դա անհասանելի են համարում՝ «Շար կան հայրնի մարդիկ, աստղեր, որոնց սիրում եմ հետևել ֆեյբուքում, միշտ մտնեմ-նայեմ՝ ինչ են արել, ոնց են արել... բայց րենց, որ ասեմ մեկը իմ իդեալն ա՝ սուր կլինի... Որովհետքն, հա՛, ասենք թե իդեալս ա՝ ինչ անեմ ես, որ հասնեմ ասենք թե Թրամփի կնոջը...»: (միջին մասնագիտական կրթությամբ կին)

Առանձին դեպքերում միջնակարգ կրթությամբ կանայք նշում են ավելի ընդհանուր, ինչ-որ տեղ նաև անհաս իղեպ: «Մարիամ Աստվածածինը ու բոլոր էն կանայք, ովքեր իրանց կյանքը նվիրեցին Աստծուն ու եկեղեցուն, ոչ թե աշխարհիկ մեղքերով սպրեցին...»: (բարձրագույն կրթությամբ կին)

2.8. ԱՄՈՒՄՆԱԿԱՆ ԿՅԱՆՔ

Հետազոտության նպատակներից մեկն էր նաև պարզել սկետուրների պատկերացումները իրենց ամուսնական կյանքի, ամուսնու ընտանիքում հարմարվելու ռամգավարությունների, սկետուրի հետ հարաբերությունների մասին:

2.8.1 Ապագա ամուսնուն ծանոթանալու գործընթացը

Հարցվողների մեծամասնությունը ամուսնացել է բարեկամների, ծախթների միջամտությամբ: Այնուամենայնիվ, միջնակարգ և միջին մասնագիտական կրթություն ունեցող կանանց շրջանում միջնորդությամբ ամուսնանալը առավել տարածված երևույթ էր, քան բարձրագույն կրթություն ունեցող կանանց շրջանում:

«Չեմք ճանաչել մենք իրար, իմ հորաքույրն ա ճանաչել ամուսնուս ծնողներին, ու իրանք աղջիկ են ման եկել ամուսնուս համար: Որպես լավ աղջիկ, լավ ընտանիքի աղջիկ, հորքույրս ինձ ա ասել: Թե չէ ես չէի ուզում ամուսնանալի հըր, ես նպատակ ունեի աշխատելի մի քիչ, հեքո ընդունվելի բարձրագույն սովորելի: ...Ես էլ աշխատում էի դպրոցում, հորքույրս ասեց, որ գալու են ինձ րեսնեն: Ես էլ իբր թե չգիտեմ, որ պիտի գան: Սկզբից եկել ա իմ սկետուրս: Եկավ, դե ես գիտեմ, բայց ասեմք ինձ նենց եմ պահում, որ չգիտեմ...»: (միջին մասնագիտական կրթությամբ կին)

«Ամուսնացել եմ 18 տարեկանում, բարեկամներ ունեիք երկկողմանի, որոնք մեզ ծանոթացրեցին»: (միջին մասնագիտական կրթությամբ կին)

«Դե էն ժամանակ հիմիկվա նման չէր, որ իրանք ման գան, հավանեն, հեքո արդեն ընտանիքներով ծանոթանան, էն ժամանակ լրիվ ուրիշ բարքեր էին, որտեղից որտեղ գալիս էին աղջիկ ուզելու՝ առանց էր աղջկան նույնիսկ րեսած լինելու: Մեզ էլ ընդհանուր ինչ-որ ծանոթներ են եղել, որ, որպես լավ ընտանիքի աղջիկ, լավ երեխա, ցույց են րվել ամուսնուս ընտանիքին»: (միջնակարգ կրթությամբ կին)

«Ես ամուսնուս մի քանի անգամ էի տեսել, հեղու եկան ինձ ուզեցին, հեղու մի քանի ամիս հեղու ամուսնացանք արդեն... Դե ոչ սիրել եմ, ոչ մի քան... Էն ժամանակվա 18 տարեկանը հիմիկվա երևի 10 տարեկանի խելքն ա ունեցել... Ու տենց խելքով էլ մեզ ղնց են ամուսնացրել... Չնայած, տարիների ընթացքում ես սիրում եմ արդեն ամուսնուս, կապված ենք շատ, լավ հարաբերություններ ունենք...»։ (միջին մասնագիտական կրթությամբ կին)

«Ամուսնացրեցին ինձ իմ ծնողները... Ես էն ժամանակ ինչ էի հասկանում՝ ինչ ա սերը, ես իրան սիրում՝ մ եմ... Կամ որ պետք ա սիրես, որ ամուսնանաս... Գնում էի մեր գյուղից մեկի տանը ասրելու... Բայց հիմա, արդեն 45 տարվա ամուսիններ ենք ու ես իրոք ինքը դատել ա իմ կյանքի կետը, որովհետև մենք անցել ենք և՛ ամենայալ, և՛ ամենավատ օրերը իրար հեղու: Ու քեզ էլ, խորհուրդ եմ տալիս, որ կյանքում ամեն մեկն էլ իրա տեղը ունի, բայց քո ամուսնուդ առանձնահատուկ տեղ տուր, որովհետև վերջում էլի մնում եք երկուսով՝ ղնց որ սկզբում»։ (միջին մասնագիտական կրթությամբ կին)

Քիչ չեն սակ այնպիսի դեպքեր, երբ կանայք ստիպված են եղել ենթարկվել իրենց ծնողների որոշումներին՝ մի կողմ դնելով սեփական զգացմունքները: «Ամուսնացել եմ 18 տարեկանում... Ամուսնուս մորաքույրը Թիֆլիսում մեր հարևանն էր, ու ես հլը երեխա էի, ինքը ասում էր, որ ինձ ամուսնացնելու ա իրա Նորիկի հեղու, ինքը երեխեք չունեք, քրոջ երեխեքին իրանի տեղ էր սիրում: Ու տենց մի ամառ տանք ամբողջ ընտանիքով եկան Թիֆլիս, եկան մեր տուն... Ես ուրիշ սիրած ունեի, ընկերություն էի անում, պապաս չգիրեր, բայց մամաս գիրեր: Մամաս ասեց դե էլ ինչ, վայր, մոռացի... Ես ես մոռացա... Հիմա մտածում եմ, որ երևի էս իմ դժվար կյանքով տեղը հասնեցի...»։ (միջին մասնագիտական կրթությամբ կին)

«Ամուսնացել եմ 23 տարեկանում, չէ, ծնողներս էին որոշել, որ պետք ա ամուսնանամ, որովհետև արդեն եկել էին ինձանից փոքր քրոջս ուզելու ու տենց տարու էր, որ ես մեծն եմ, ես պետք ա առաջինը ամուսնանամ... Օրինակ, հորեղբայրս ասում էր. «Դու պիտի աղջկան տենց հնարավորություն չտաս, պիտի դու ում ուզես՝ նրան էլ տաս, ամուսնացնես»։ (բարձրագույն կրթությամբ կին)

«Ամուսնացել եմ 17 տարեկանս իրանց տանն էի արդեն, դպրոցը ավարտեցի, մամաս արդեն հիվանդ էր, շատ չէին տալիս բժիշկները ժամանակ ասրելու, դրա համար ուզեց, որ ինձ էլ տեսնի տեղավորված, դրա համար ես մուսնացա Մամվելի հեղու, չսպասեցի իմ սիրած մարդուն: Բայց հեղու, որ էր տղեն եկավ քանակից ու մամաս դեռ ասրում էր, մամաս մի օր ասեց. «Որ իմանայի չեմ մեռնի, չէի սպիսի, որ ամուսնանաս, կապասեիր,

մինչև քանակից գա...»: Բայց դե ամեն մարդու ճակատագիրը իրա հետը ա երևի, երևի ուրեմն րենց էր պետք»: (միջնակարգ կրթությանը կին)

Հետաքրքրական է, որ հաճախ մինչև ամուսնուն տեսնելը ապագա հարսի հետ ծանոթանում էին ամուսնու ընտանիքի այլ անդամները: «Կեսրարս սսել էր հորքուրիս, որ ինձ կանչի մոտը՝ իբր զարդ-մարդ ա ցույց տալու, որ գա րեսնի: Հետո մինչև կեսրարիս րեսնելը եկավ րեքրս, եկավ, մրավ, դպրոցի հենց դռան մոտ ինձ ապաստում էր, որ րեսնի: Հետո կեսրարիս հերթն էր՝ քացի ամուսնուց: Տենց հետո գնացի հորքուրիս մոտ, եկավ կեսրարս, ուրախ-ուրախ նայեց, ասում ա. «...Էս ինչ սիրուն աղջիկ ա...», րենց քաներ էր ասում: Հիմա սաղ սսել են ամուսնու, որ շար լավ աղջիկ ա, հարմար ա՝ գնա րես: Էս ամուսինս մի հար ծանոթ րդամարդու հետ գալիս ա դպրոցի մոտ, որ րեսնի ինձ: Վերջը, ինքն էլ հավանեց ու եկան ինձ ուզելու արդեն: Ու րենց...»: (միջին մասնագիտական կրթությանը կին)

Բարձրագույն կրթություն ունեցող կանանց շրջանում համեմատաբար ավելի շատ էին սեփական կամքով և առանց միջամտության ամուսնանալու դեպքերը, սակայն միևնույնն է նույնիսկ այս դեպքերում աղջկա ծնողները մեծ ազդեցություն են ունեցել վերջնական որոշման վրա: «Ամուսնու հետ, հա, ուսանողական րարիներից ենք ծանոթացել, ես եմ ընրել: Բայց, կոնկրետ ամուսնանալու պահը ես չեմ որոշել: Մի անգամ, մենք վիճել էինք, դե էս ժամանակ էլ բջջային հեռախոս չկար, որ խոսալիք անընդհար, մեկ էլ րեսնեմ ծնողներին վերցրել-եկել ա մեր րուն՝ ինձ ուզելու: Ես էլ սսեցի, որ հիմա չեմ ուզում, պապաս շար մեծ հարգող մարդ էր, սսեց. «Որ չուզեիր, էս րդեն հորն ու մորը չէր վերցնի զար... Համ էլ էս մարդիկ եկել-հասել են սրեղ, ես իրանց չեմ սսի չէ...»: Ու րենց արդեն մի քանի ամիս հետո ամուսնացանք»: (բարձրագույն կրթությանը կին)

2.8.2. Ակնկալիքներ ամուսնական կյանքից և հարաբերությունները ամուսինների հետ

Հարցմանը մասնակցած սկեսուրների մեծամասնությունը ամուսնությունից առաջ չեն ունեցել որևէ հստակ սպասելիքներ և չեն պատկերացրել ինչ է իրենից ներկայացնում ամուսնական կյանքը:

«Դե զգացմունքները րենց եսիմ...Իսկ սպասելիքները, գիտես ոնց, էս ժամանակ րենց հիմիկվա նման չի եղել, որ սսենք դու ծրագրես, պլանավորես, կամ իմանաս ուր ես գնում, ինչ ես անելու...Դրա համար, որ արդեն սպասելիքներ չես ունենում, դժվար ա դե սսել, թե ինչը ձախողվեց, ինչը՝ չէ...»: (միջին մասնագիտական կրթությանը կին)

«Ինչ սպասելիքներ: Ես կվարդիրայում ակուրապրնի մեծագած, եկա Ջեյթուն, սեփական րուն, որպեղ մի հայաթի մեջ ապրում էին 100 հոգի՝ 10 ընտանիք: Կեսրայրս իրա քուր-սիսպերնեքին բերել էր իրա հայաթում րներ էր սարքել, րվել էր ամեն մեկին մի սեյակ, ու ես գնացել եմ, էրքանի մեջ հարանություն եմ արել: Դե հաշիվդ վերցրու...»: (միջնակարգ կրթությամբ կին)

Հետազոտության արդյունքների համաձայն կանանց մեծամասնությունը գնահատում է իր ամուսնական կյանքը որպես միջին կամ միջինից ցածր: Ինչպես ցույց տվեց հետազոտությունը, կանանց կյանքը կտրուկ փոփոխություն է ապրել ամուսինների մահից հետո. մինչ այդ ամուսինները գրեթե միայնակ են հոգացել ընտանիքների նյութական կարիքները, սակայն նրանց մահից հետո ընտանիքը պահելու հոգսը լիովին ընկել է կանանց ուսերին: *«Շատ երկրասարդ րարիքում մահացավ ինքը, դրանից հետո մեր կյանքը գլխիվայր շուտ եկավ...Որովհետև ինքը ամեն ինչ վերցրել էր իրա վրա, շար հարգանք, սեր վայելող մարդ էր, մենք ոչ մի բանի ձև ու րեղ չգիտեինք...Ու հանկարծ սող մնաց իմ վրա»:* (բարձրագույն կրթությամբ կին)

Հարցվողներից գրեթե բոլորը համեմատում էին իրենց ամուսնական կյանքը հայրական ընտանիքում կյանքի հետ՝ համարելով, որ իրենք մեծացել են շատ ավելի առաջադեմ ընտանիքներում, շատ ավելի բարյացակամ մթնոլորտում, ունեցել են իրենց սեփական անկյունը և վայելել ծնողների սերը, իսկ ամուսնանալուն պես հայտնվել են ընդհանուր առմամբ ավելի վատ պայմաններում:

«...իմ կիսուրս չի սիրել հումորներ, ժպիտ չի սիրել, շար դժվարությամբ էինք իրան ծիծաղացնում: ...Ամեն մեկին չէր թողնում հյուրասիրեհիք: Իսկ մեր հայրական րան մեջ նման բան ընդունված չի եղել, ես սովոր չէի դրան, ինձ համար շար դժվար էր րենց ընդունել մարդկանց: Դա իմ համար դժվարություն էր»: (միջին մասնագիտական կրթությամբ կին)

Ամուսինների հետ հարաբերությունները հարցվողների կողմից գնահատվում են որպես միջին՝ անկախ նրանից ամուսնացել են իրենց ցանկությամբ, թե միջնորդությամբ: Մեծ մասի համոզմամբ կնոջից է կախված ընտանիքում համերաշխությունը, և որքան ավելի լավ հարմարվի կինը ամուսնուն և ամուսնու ընտանիքին, այդքան ավելի քիչ կոնֆլիկտներ և լարվածություն կառաջանա ընտանիքներում: Հետաքրքրական է, որ հարմարվել հաճախ նշանակում է նաև բազմաթիվ ճնշումների և նույնիսկ ֆիզիկական բռնության ենթարկվելը ոչ միայն ամուսնու, այլ նաև ամուսնու ողջ ընտանիքի կողմից:

«Շատ լավ էինք մենք իրար հետ...Իրավունք չունեիր դու խոսալիր (ինքը), եթե ինքը ասել ա մի բան, ես ընդունել եմ, բայց, եթե ես եմ ասել մի բան սենց պետք ա լինի, ինքը չի լսել...Է ինքն ա րդամարդը՝ ինչ ակեմ, հո չեմ հակաճառի իրան...Էայց հետր

ինքը զգացել ւ, որ ինքը սխալ ւ, բայց եւ հո երեսով չեմ րա իրան, որ ինքը վար զգա իրան...Ջոզիբ ինչ եմ ասում...Միայ րան ւ դա...Կնգա կողմից էրի շար մեծ սխալ ւ ամեն ինչը ասել մարդու երեսին...Գիրես էրի լավ րան ւ բերում...Ո՛հ, դա վար զիծ ւ կնոջ մեջ, որ մաջալ չի րալիս, որ իրա մարդը մի րան ասի, մի րան որոջի...»: (բարձրագույն կրթությամբ կին)

«...Ու էդ իստությունը, դե աղքատ, էդ չունևորությունը, էդ չարությունը, էդ ամեն ինչը րան մեջ, ամուսինս էլ իմող, բայց 2 երեխա: Ու միշտ մրածել եմ, որ րաժանվեմ, որովհեպև միշտ վար հարաբերություններ են եղել ամուսնուս, ինչպես նաև կիսուրիս և կողքինների հեպ, որովհեպև ինձ դրել էին փոքրի րեղ, րարձրագույն ավարտ չէի, անընդհատ ձեռ էին առնում, չգիպեմ ինչ էին անում: Հա, ու ես ընրանիքում րենց լավ ընրանիք եմ ունեցել, իսկ իրանց րունը...»: (միջնակարգ կրթությամբ կին)

2.8.3. Հարաբերություններ սկեսուրների հետ

Հարցվողների մեծամասնությունը ապրել է իրենց սկեսուրների հետ և, հիշելով իրենց կյանքը, նրանցից շատերը հիմնականում համարում են, որ մեծ սխալ են գործել:

«Այո, րա իհարկե, իմ ամուսինը փոքր րդեն էր ու րենց չգրված օրենք կա, որ փոքրերն են մնում հայրական րանը ապրելու: Ու կիսուրս միշտ ասում էր, որ էս րան հարսը Գ.՝ն ւ... Կեսրարս անունս չէր հիշում, մեծ էր էլի, ասում էր քեզ ասելու եմ Աննա, որ հիշեմ, էր հեշտ ւ...Հարաբերությունները լավն էին, մինչև որ րեքրս էլ ամուսնացալ ու արդեն հայաթի մեջ րներ րաժանելու ինդիր կար, ու րեքրս կինը իրա ասածի րերն ւ, ինքը պահանջում էր, ու մեկ էլ աչքս րացեցինք ու րեսանք, որ մեզ մնացել ւ ապրելու մի հար զալ ու մի հար ննջարան: Հիմա զոռով, մեզանից կրրելով իմ րդերքն են ասրել սաղ, ավելացրել սենյակներ, որ մարդու նման ապրում ենք: Ու ես հասկացա, որ ես էլ պեքք ւ զոռքա լինեի, որ ես էլ րան րեր լինեի...»: (միջին մասնագիտական կրթությամբ կին)

«...ինչքան էլ լավ լինեն հարաբերությունները, մեկ ւ՝ կեսուրը մնում ւ կեսուր, կեսուրը մամա չի դատնա»: (բարձրագույն կրթությամբ կին)

Հաճախ էլ սկեսուրները արտահայտում էին իրենց գոհունակությունը կամ դժգոհությունը ոչ վերբալ վարքի միջոցով և այդ վարքը հասկանալու պարտականությունը ևս ընկած էր հարսների ուտերին:

«...Ու հեպո, ինքը հյուրասեր չէր... Իրա տունը մենք պիտի նայեինք իրա հայացքին, դեմքին, որ տեսնեինք ինքը թույլ տալիս էր, կարելի էր սուրճ դնել, թե՛ չէ՛»։ (միջին մասնագիտական կրթությանը կին)

Հարցվողները պատմում էին նաև սկեսուրների կողմից իրենց կյանքին միջամտելու, ակնհայտ ճնշումների և հավաճանքների արժանանալու մասին։

«Ես հիմա նայում եմ իմ հարսին, հիշում եմ իմ էպ օրերը... Ես կտորն ու ավելը ձեռքից գցելու իրավունք չունեի՝ բառի բուն իմաստով... Ամեն շաբաթ մերելը դադարակում էին, սաղ շուշեղենը լվանում էի, նորից տեղավորում էի... Հիմա հիշում եմ՝ չես պարկերացնի ինչ եմ լինում... Բնջի համար... Որովհետև ես իրավունք չունեի չանելու, մի օր չանեի՝ անընդհատ մոթմոթում էր. «Սաղ տունը փոշի ա, սաղ կեղտ ա...»։ Ես էլ եմ մաքրասեր, բայց հիմա, որ մի քիչ հոգեբանական բաներ եմ կարդում, կարամ ասեմ՝ ինքը մաքրության հիվանդ էր...»։ (բարձրագույն կրթությանը կին)

«Սաղ ուզում էին ինձ «չլեին», փանջեին... Առաջ թաշտեր կային, փանը ցուրտ էր, կիսուրս դնում էր միջանցքում ջուրը լցնում լողանում էր, հեպո ասում էին դու պեքքա ջուրը վեղորովեղոր տանես դրսի զուգարանը թափես։ Ես ասում էի՝ ինչի՞... ասում էր՝ «...Որովհետև դու փոքրն ես...» Ու տենց ես զզվում էի...»։ (միջնակարգ կրթությանը կին)

«Օրինակ, ես եթե ուզենայի ամուսնուս ասեի՝ «Ես էլ եմ գալիս...», ես դրա իրավունքը չունեի ասելու, կիսուրս պեքք ա որոշեր, կարծիքը ինքն էր կազմում՝ ես գնամ, թե չգնամ»։ (միջին մասնագիտական կրթությանը կին)

«Տենց չեն խառնվել, մենակ անունների համար, մեծ տղայիս անունը սրիպեց կեսուրս, որ դենեք կեսարարիս անունը... Հեպո աղջկանս... Բայց էլ չդրեցինք էպ, ինքը միշտ ասում էր. «Ես սաղ ազգի անունները դրեցի...», իմ թոռիս իմ անունը չեն դնում...»։ (բարձրագույն կրթությանը կին)

«Ա.-ի օրոք (սկեսարարիս) հարսը ո՞վ էր, որ մի բան ասեր փանը... Երկու հարսն էլ... Միջամտում էր, բոլոր հարցերին...»։ (միջին մասնագիտական կրթությանը կին)

«Ձեր միջամտում, այլ կատավարում էր մեր ընտանիքը։ Մի տեքքս տենց էլ չամուսնացավ, ինքն էլ մեր հեպ էր ասարում ժամանակին, կիսուրս ինձ սրիպում էր, որ ես իրա հոգսերն էլ հոգամ լվամ, հարդուկեմ, մաքրեմ»։ (միջին մասնագիտական կրթությանը կին)

«Մամաս արդեն հիվանդ էր, անկողնային էր արդեն, քուրս ծանր հղիություն էր փանում՝ պատկած, ես էլ, ինձ բարս-յագեն չթողեց գնամ մամայիս պահեմ...Ու էր խեղձ կնիկը աչքը մի բաժակ ջուր բերողի կարուր մնաց...»: (միջին մասնագիտական կրթությամբ կին)

«Ամեն-ամեն փեսակի հարցերին միջամտում էր, մեկ-մեկ կեսրարս ասում էր. «Ինքը արդեն 40 փարեկանս ա...»: էն ժամանակ ամուսնուս ասում էր՝ ինչ ու ոնց անի, ուր գնա...Մեր փունը առիթ էր լինում՝ ինքը պետք ա որոշեր, թե մենք ում կանչենք, մենք գնայինք մի փեղ, ինքը պետք ա ասեր, թե ինչ ենք փանելու, երեխեքին փանենք, թե չէ...»: (բարձրագույն կրթությամբ կին)

Որոշ տարբերություններ արձանագրվեցին նաև գյուղական և քաղաքային համայնքներից Երևան տեղափոխված սկեստորների միջև՝ իրենց նկատմամբ ճնշման և, նույնիսկ, ֆիզիկական բռնության ընկալման առումով: Այսպես, օրինակ, ըստ գյուղում ապրած և մեծացած սկեստորներից մեկի, իր սկեստորի կողմից նույնիսկ կոպիտ ձևով ինչ-որ բան հասկացնելը կամ սովորեցնելը ավելի մեծ ազդեցություն է ունեցել, քան մեղմ ձևով պարզապես ասված նկատողությունը:

«Կարող ա և եղել ա, բայց ես դրան վերաբերվել եմ դասարիարակության մի մաս, որ իրա երեխուս պես, ոնց որ իրա երեխուն կրասրիարակի՝ փենց էլ ինձ: Մի անգամ ամենասկզբից, ես փենց սովորություն ունեի՝ ճաշի մեջից ձեռով մի բան հանեի ուրեի, մի անգամ փեսավ կեստուրս՝ խիեց ձեռքիս, խիեց, որ էլ չանեմ, որը որ իմ մաման ասում էր անընդհար, բայց չէր խիում, բայց չէր ազդում՝ ծեծը ազդեց...»: (միջին մասնագիտական կրթությամբ կին)

Նույնիսկ տարիներ անց կանայք, պատմելով իրենց անցյալ կյանքը, հիշում էին մանրամասներ, որոնք իրենց շատ վիրավորել են և ազդել են սկեստորների հետ հետագա հարաբերությունների վրա:

«Կիտուրս նոր հղի էի, անանասի սուկը բերեց բացեց, մենասկով խեց թոռների հետ, ինձ չփվեց»: (միջնակարգ կրթությամբ կին)

Առավել ակնհայտ ճնշումներ եղել են երեխաներ ունենալու նկատմամբ ընդհանրապես և այդ ճնշումները եղել են ինչպես ուղղակի՝ անպայման որոշ քանակությամբ երեխա ունենալու տեսքով, այնպես էլ անուղղակի՝ օրինակ, չորրորդ երեխայի համար նվերներ կամ բնակարան ավիրաբերելու խոստումների միջոցով:

«Մենց մի բան ասեմ...Դու մարդուն կարաս նկարագրես իրա քայլով չէ՛...5 փարի ես երեխա չեմ ունեցել...Եկել եմ փուն հարս, առաջինը 5 ու կես ամսական վիժել եմ զույգ երեխա...Ու ես եկել եմ հիվանդանոցից զոզս դասարկված, որ դա սփց բեթար բան ա...»

Գամ րուն րենամ իմ մահճակայի մորը կայլասկա ա դրած...Բնչ ա դա նշանակում... Էն մյուս թոռանը, րայլիս աղջկա կայլասկեն քերել-դրել էին իմ կառավայթի մոր՝ ցավ պարճառելու համար... Եննց աղի արցունքներ եմ թափել էդքան 5 րարվա մեջ, որ ես երեխա չեմ ունեցել, որ էդքան ջուրը որ լցվի իրանց վրա, իրանք կխեղդվեն ազգովի...»: (միջին մասնագիտական կրթությամբ կին)

«Մի րարի չէի հղիանում...Ու էր մի րարին, շան օյին էին դնում գլխիս կիսուրս ու րալերս, կիսուրս ստում էր. «Թոռ չեմ րենա երևի, կլենունեմ...», որովհեարս րալերս հլը ոչ մեկ երեխա չէր ունեցել, իմ հույսին էր մնացել...Առաջինը ծուլեց մեծ աղջիկս, իրա անունը դնել րվեց»։ (միջին մասնագիտական կրթությամբ կին)

«Կեսուրս ստում էր. «Ուլ չորրորդը քերի՝ մի հար լավ քրիլիանր եմ առնելու...», քայց ըրենց էլ ոչ մեկս ոչ քերեց չորրորդը, ոչ էլ ինքը քրիլիանր առավ»։ (միջին մասնագիտական կրթությամբ կին)

«Չէ, ինքը ունեցել էր 3 րդա և մի աղջիկ՝ ամենավերջում: Ինքը ստում էր, որ Հասմիկին էլ քերել ա որպես րդա, որ 4 րդա ունենար...Ես էլ, որ երկրորդն էլ րդա ծուլեց, միշտ ստում էր. «Ըհըն, դու էլ ես որոշել երեք րդա ունենաս...», Էս ժամանակ էլ 90-ականներն էր, մարդիկ սենց ոգևորված զինվորներ էին ունենում, որ հեար վերցնեն էր զինվորներին ու փախնեին էս երկրից...»: (միջնակարգ կրթությամբ կին)

«Հիշում եմ, որ առաջինը ծուլեց րդա, ինչպիսի ուրախություն ու քեֆ էր, դե էն ժամանակ րանն էին ծննդաքերում...Դե իրանք էլ շար երեխեք ունեին, ուզում էին մենք էլ շար ունենայինք...Կս սենց մի քան, հիմա մեկ-մեկ որ հեար եմ նայում. եթե գյուղում մնայինք, կունենայինք, որովհեարս ընդեղ ինչ ունեիր մրածելու, դու չես աշխատում, պահողը ունես, իսկ սրեղ արդեն հեշտ չէր նույնիսկ 3 երեխա պահել: Կեսուրս էլ, սկզբից ունեցել ա 3 րդա, հեար 4 աղջիկ...Ես վախենում էի, որ երրորդ րդայից հեար կասեն. «Դե հիմա աղջիկների հերթն ա...», քայց չասեցին...»: (միջին մասնագիտական կրթությամբ կին)

Հետաքրքրական է, որ երեխա ունենալ/չունենալու հարցը հիմնականում քննարկվել է սկեսուրի և հարսի միջև, այլ ոչ ամուսինների, իսկ ամուսնու կողմից միջամտությունը ևս հաճախ կրել է պարտադրողական բնույթ:

«Սկեսուրս ունեցել ա մի երեխա, միշտ ստում էր. «Ինչ ուզում ես արա, մենակ մի երեխա չունենաս...», ինքը ստում էր, որ ամենասիսայ քանն ա, ես էլ առաջինն ունեցա աղջիկ, հեար երկրորդը րդես ծուլեց, քայց ոչ մի անգամ չենք խոսացել՝ րդա, աղջիկ...Իսկ

երրորդին էլ լրիվ պատահական, մեծ շաքարում, իմացա արդեն, որ հղի եմ... Ես չէի ուզում ունենալի, որովհետև աղջիկս արդեն դպրոցական էր, փղեա նոր քայլում էր՝ ամենաչար փարիքը, ֆիզիկապես չէի կարա պահելի նորածին երեխա, բայց Ա.-ն կրթուկ ասեց, որ ունենալու եմ...»: (միջին մասնագիտական կրթությամբ կին)

«Հա, սկզբից ունեցա փղերքիս, հեղո առողջական մի քիչ բաներ կար, բայց պարտադիր որոշել էի, որ աղջիկ էլ պետք ա ունենամ: Հեղո էլ կեսուրս արդեն ասում էր, բա աղջիկ... Ես էլ շար էի ուզում, ու մի քիչ ուշ, բայց ունեցա...»: (միջին մասնագիտական կրթությամբ կին)

2.8.4. Տղա ունենալու ճնշում

Հարցվող սկետուրների ոչ մեծ, բայց այնուամենայնիվ որոշ մասի նկատմամբ, կիրառվել է որոշակի ճնշում տղա երեխա ունենալու հետ կապված: «Բերում ա ինչ անի, էնա փղեն ունի»: (միջնակարգ կրթությամբ կին)

Ընդհանրապես տղա ունենալու ցանկությունը դրսևորվում է թե՛ հարցված սկետուրների, թե՛ իրենց սկետուրների, և թե՛ ըստ հարցվող սկետուրների ներկայումս էլ արդեն իրենց հարսների մոտ: Ամենատարածված մոտեցումը, որը բազմիցս հնչեցվել է տարբեր հարցազրույցներում, կարելի է ամփոփել հետևյալ կերպ. «Հեղո, երևի, որ առաջինը փղա ա լինում, արդեն արխային ես ընում, երկրորդը՝ ինչ կլինի, կլինի: Կարող ա ասենք մի երեք հար աղջիկ լիներ, Ասրված կանչեր, որ մի հար էլ գոնե փղա լիներ, բայց մեր մոտ փղենց չի եղել»:

Մեջբերենք ևս մեկ հատված հարցազրույցից.

«Առաջինը փղա էի ուզում պարտադիր...»

Ինչո՞վ էր դա պայմանավորված:

Ոնց որ արդեն արխային ես եղում էլի՝ արդեն ժառանգ ես ունենում, փան ծուխը... Էր պահով ոնց որ խիղճի հանգիստ ա եղում: Հիմա երկրորդը, երրորդը՝ ինչ որ ա, աղջիկ էլ լինի, արդեն գիտես, որ փղեղ ունես: Դե էն ժամանակ փղենց բաներ հաշվի էին առնում էլի: Հեղո, ես կոնկրետ, փղա երեխա սիրում էի, սիրել եմ առաջինը փղա, ու մինչև ամուսնանալս էլ ես փղենց խոսում էի, ասում էի. «...առաջինը պիտի փղա ունենամ...»: Իմ սրտով, ոնց ուզեցել եմ, եղել ա»:

«...հլը Մ.-ն պիտի ծավեր (փղերս ամենամեծ աղջիկը փան մեծ թողը), ես հիշում եմ Ա.-ն (ամուսինս) գալիս էր ինձ ասում էր. «Հեսա Պ.-ն ծավում ա (իր հոր անունը՝ Պավլիկ)...»: Իրենց երազանքը՝ բոլորի, էն էր, որ փղա ունենա ու անունը դնեն Պավլիկ.,

որովհետև իրենց պատան 40 տարեկանում մահացել էր: Ու րենց էլ, մեծ տեքրու ուներ արդեն երկու աղջիկ, երբ որ ես ամուսնացա ու արդեն էր փոստի սպասելիքները ինձ անցան... Ու ես որ հղիացել էի, ամուսինս ասում էր՝ փրկա՛ս: Դե էս վախար էի, բան չկար, բայց ասղ սպասում էին փրկա՛ս ու իրոք, փրկա էլ ծնվեց: Օրինակ կիսուրս, ինքը չէր սիրում... Ինքը որ իմացել էր, որ աղջկանովս հղի եմ (երկրորդով), մեր քեռու կնոջ մոտ ասել էր. «Բերում ա ինչ անի, էսա փրկեն ունի...»: Էր կինն էլ ինձ խաբար էր փվել, ես էլ, ոնց որ րենց ինսո՞ղ արած, գնացել էի, որ հանեմ: Առավոտը հերթապահությունից հետո գնացի, որ հանեմ, բժիշկը չհանեց, դու մի ասա, մեր ավագ քույրը գանգել բժշկին ասել էր, որ Կարինեն գա, հանկարծ չանես, ասել էր, որ փաթ գլխով եմ ոնց որ որոշել դա: Ու աղջիկս ծնվեց էր մեր ավագ քրոջ շնորհիվ ծնվեց»: (միջին մասնագիտական կրթությամբ կին)

«Բայց հարսս, ասեց. «Ես չեմ գնա էի՞ն նայեմ սեռը, որովհետև փրամադրություններս կրնկնի, որ իմանանք փրկա՛ս չի, դրա համար ավելի լավ ա չիմանանք՝ անհամբեր սպասենք...»: (միջնակարգ կրթությամբ կին)

«Առաջինը ես ունեցա աղջիկ, որը նաև առաջին թոռն էր ընփանիքում: Հետո տեքրու ունեցավ աղջիկ, կիսուրս զգում էի արդեն, որ անընդհար խոսում էր. «քանիսը ուզում եք ունեցեք, մի հար փողոց հետո...», ինքը փրկա շար սիրում էր երեխեք, ու շար գոհ էր, որ ուներ երեք փրկա, մի աղջիկ: Էս ա եղել խոսակցությունը, ոչ թե հարուկ ասել ա...»: (բարձրագույն կրթությամբ կին)

Ընդարձակ և ավելի ավանդական ընտանիքներում տղա ունենալը վերահսկվում է ոչ միայն սկեսորի, այլ նաև տան տարիքով ավելի մեծ անդամների, մասնավորապես ամուսինների տատիկների /սկեսորների սկեսորների/ կողմից:

«Իմ պատավ կիսուրը դաժե հիմա մի հարսիս, որ մի հար աղջիկ ունի, երբ գալիս ա մեր փուն, հարցնում ա. «Հղի չե՞ս...», փրկա ա ուզում, որ ունենաս իրանք: Դրա դարդից հարսս ասել ա, որ հենց հղի լինի, նոր կգա մեր փուն»: (միջնակարգ կրթությամբ կին)

Տղա ունենալու ցանկությունը նույնիսկ որոշ ազդեցություն է ունեցել տղաների փոխարեն ծնված աղջիկների վրա: Ինչպես նշեց հարցվողներից մեկը. «Ամուսինս իրա մամային էր քաշել՝ փրկա էր սիրում, ուզում... Երրորդ աղջիկս որ պեքք ա ծնվեր, ինքը սպասում էր փրկա, փրկա չորեր, խաղալիքներ էր առել, էս փողոս ասում էր. «Հեսա ախպեր ենք բերում քեզ...», ու րենց փողո ոգով ծնվեց աղջիկս, մինչև հիմա էլ րենց փողո ոգով ա...»: (միջին մասնագիտական կրթությամբ կին)

«Պապաս ունեցել էր դե 4 աղջիկ, ու ինքը տղայի կարող էր, ոնց որ: Ինքը միշտ ասում էր, որ մեր 3-րդ ու 4-րդ աղջկան սպասել և ու ունեցել են՝ որպես տղա, բայց դե չի սրացվել: Հետո, արդեն դե իրանց ժամանակը անցել էր, մեզ վրա էր հույս դրել, ասում էր. «Ես պետք և 7 տղա թող ունենամ, որ դազաղս բռնած տասնն թողներս...», ու տենց էլ եղել և»: (բարձրագույն կրթությամբ կին)

«Հարուկ, որ ասեմ՝ միջամրեցին, չէ, կեսրարս ուներ 4 ախպեր, որոնցից ոչ մեկ տղա չուներ, մենակ ինքը ուներ երկու տղա (մեկը ուրիշ կնոջից՝ ոչ կեսուրիցս), ու իրա էն մյուս տղեն տղա չունի, ոնց որ իրանց ցեղի շարունակության հարցը իմ վրա էր դրված, հիմա անընդհար ինձ հիշացնում էին, որ մի տղայով ցեղը չի շարունակվի՝ հարկապես ամուսնուս հորաքույրները, հորեղբայրները... Էնքան՝ մինչև երրորդը հաշվարկով տրից տղա ունեցա»: (բարձրագույն կրթությամբ կին)

Հետաքրքիր է նաև այն, որ հաճախ ամուսինը ևս դեմ է եղել երրորդ կամ չորրորդ երեխային, սակայն ևս ենթարկվել է իր ծնողների, հատկապես մոր՝ տղա ունենալու պահանջին:

«...ամուսինս հակառակ՝ ասում էր մի ունեցի էլ տղա, որ մեծին սիրեն նենց, ոնց որ իրան են սիրել, դե ինքն էլ՝ որպես մի տղա ընտանիքում, շատ են սիրել»: (բարձրագույն կրթությամբ կին)

Հարցվողների շրջանում կային իհարկե և այնպիսիք, ովքեր կտրականապես դեմ էին որդու ընտանիքների մեջ խառնվելուն և, առավել ևս, ասելու՝ քանի և որ սեռի երեխա նրանք պետք է ունենան. «Ես բայց ո՛վ եմ, որ ասեմ, թե քանի երեխա ունենան...Ճիշտ և, իրանք պլաններ չունեն, բայց ասենք թե հիմա հղի լինի, ես ո՛նց կարամ ասեմ. «Երրորդը մի ունեցի...», իրանք առանձին տուն, առանձին ընտանիք...»: (միջին մասնագիտական կրթությամբ կին)

2.8.5. Ամուսնու ընտանիքում հարմարվելու ռազմավարությունը

Բոլոր հարցազրույցներում նշվում էր ամուսնու ընտանիքում հարմարվելու մասին: Ըստ հետազոտության արդյունքների՝ ամուսնու ընտանիքում հարմարվելու ռազմավարությունները շատ տարբեր չեն եղել: Հիմնական, իսկ շատ դեպքերում միակ ռազմավարությունը, ըստ հարցվողների եղել է հարմարվել իրավիճակին՝ հիմնականում ի վնաս իրենց սեփական անձի, ցանկությունների, և, հաճախ, արժանապատվության:

«Ո՛չ, ո՛չ, ոչ թե պարտադրել և, ես իմ կամքով, ես գիտակցել եմ, որ ես պարտավոր եմ: Եթե ես հարսն եմ, ուրեմն ես պարտա-

վոր եւմ անել իրանց համար, թեկուզ իրանց հորաքույրները կային մեր փան մեջ: Տայս ամուսնացած մեր փանն էր սայրում ամուսնու հետ, ծանր էր բեռը եւ կրել եւմ: Բայց հիմա որ վերցնեմ, 3 հարս հիմա եւ ունեմ, ոչ մեկը չէր հանդուրժի, ոչ մեկը չի դիմանա: Որ հիմա եւ հետ եւմ սայրում ինձ՝ սաղովի վրովս անցել են, բաղի բուն իմաստով: Ես ենթակա մարդ եւմ եղել հասկանում եւս, ինձ չեն պարտադրել, որ դու պոփի անես, եւ իմացել եւմ, որ պոփի անեմ»: (բարձրագույն կրթությամբ կին)

«... Դրանից հետո, եւ հասկացա, որ եթե իմ ամուսինս սրեղ սրդեն չի կարում իրա մոր վրա, իմ հետ ս կովում, եւ էլ ավելի լավ ս շարժվեմ իրանց ձևով, որ փանս միջի խաղաղությունը պահպանեմ»: (միջին մասնագիտական կրթությամբ կին)

«Բայց դե էլի որ դու ամուսնուդ հետ լավ եւս, քո երեխեքիդ խաթեր, բաներ կան, որ պոփի հարմարվես: Ես էլ եւմ հարմարվել, ինձ էր են մարտցել, եւ էլ դրանով բավարարվել եւմ: Իմ կիսուրս, խաւաքարո ասեմ երևի, փենց կին էր: Չէր սիրում շար շփումը, որ եւս դուրս գայի, գնայի-գայի, բայց եւս ամուսնուս խաթեր ամեն ինչին հարմարվում էի ու երևի հաղթողը դու եւս գայիս, որ հարմարվում եւս: Թե չէ, որ դու քեզ ցույց փաս, ինքը իրան ցույց փաս, ընդհանիք չի լինի»: (միջին մասնագիտական կրթությամբ կին)

«Բնականաբար եւս, ինչ-որ իրանք ասում էին, ենթարկվում էի, ասում էի՝ թող լինի իրանց ուզածը: Իրանց փան մեջ մայրական իշխանություն էր: Վայ, ինքը միշտ էր խանգարում ու միջամրում»: (միջին մասնագիտական կրթությամբ կին)

Հետադարձ հայացք նետելով, սակայն, հարցվողները ամուսնու ընտանիքում հարմարվելը չեն համարում դրական երևույթ, ավելին իրենց ներկա առողջական խնդիրները կապում են հենց հարմարվելու, «լավ հարսի տպավորություն թողնելու» և ավելորդ բամբասանքներից խուսափելու հետ:

«Որովհետեւ եւս որ մրածում էի էր մարդիկ վերջը մի հար փղա ունեցել են, էր էլ թողնի գնա առանձին սայրի՝ կգժվեն... Ոնց որ սյ փենց, եւ ինքս ինձ միշտ կմեղադրեի, բայց հիմա, որ հետ եւմ սայրում, էս առողջական, ներվային խնդիրները սաղ դրանից ս, հիմա եւս 50 փարեկան եւմ, բայց էքան ինդիր ունեմ, որ կեսուրս 70-ում չունեք...»: (բարձրագույն կրթությամբ կին)

«Սաղ իմ ներվերի հաշվին, որ էր կնիկը չնեղվի, լավ գգա, եւս լավ հարսի տպավորություն թողնեմ... Ես շար եւմ ինձի խեղձ պահել՝ ինչ ս թե իրանք լավ գգան, ինչ ս թե ասել եւմ, հանկարծ երեխեքս չգան փուն փեանեն էլի վիճված ենք, ամուսինս... Տենց էլի...»: (միջին մասնագիտական կրթությամբ կին)

Ամուսնու ընտանիքում հարմարվելը հաճախ կապված է եղել նաև հայրական ընտանիքին նեղություն չպատճառելու և «ավելորդ խոսակցությունների առիթ չտալու» պատճառաբանությամբ: «*Էդ կինը /սկեսուրը/ 4 աղջիկ ուներ, բայց իմ հարսի վրա թողեցին, պարճառաբանելով, որ ինքն և Վարդանին պահել մեծացրել (ամուսնուն)՝ դու էլ պիտի իրան պահես: Ես էլ բնավորությամբ մի քիչ ավելի մեղմ էի՝ ավանդական գյուրեղեցի ընտանիքից, ու, եթե հանկարծ պապյան իմանար մի որևէ բան, ինքը ինձ էր մեղադրելու, ոչ թե մեծին, որովհետև ինքը մեծին հարգող էր, ասում էր. «... Ով մեծ չի հարգի, թող չմենձնա...»: Էդպես, շար բաներ պահում էի, չէի ասում, գիրեի, որ ընդեղ հույս չունեմ, որևէ թիկունք, կամ, էսպես ասած, ոսկորաբաժան չունեմ, դրա համար լռում էի»:* (բարձրագույն կրթությամբ կին)

Որոշ դեպքերում էլ հայրական ընտանիքը հստակ ցույց է տվել, որ չի ընդունելու ետ վերադարձած աղջկան: «*Ու մի անգամ, գնացել էի նեղացել էի մեր փուն, մամաս ասեց. «Եթե դու նեղացել ես, թող ինքը դուրս գա, կնիկը իրավունք չունի փնից դուրս գալու երեխաներով...», այ դա իմ ականջիս մեջ կա ու հիմա ես եմ խորհուրդ տալիս բոլորին»:* (բարձրագույն կրթությամբ կին)

Հարմարվողական վարքագիծը նույնիսկ շարունակվում է մինչ օրս: «*Իրավունք չունեի...իրավունք չունեի...Ես ինչ եմ ուզում ասեմ. եթե նամուսի մեռած մարդ ես, դու սիրելով գնացել ես, դու ես ընտրել քո ճանապարհը, ո՞վ ա քեզ ստիպել, որ դու գնաս, չգնայիր...Ուրեմն եթե մրել ես, ուրեմն պրի դիմանաս...Որ հետ գնամ, ո՞վ կընդունի, էդ մեկ: Կամ, գնացի, լավ, ասենք թե, ո՞վ պրի բերի լավը քո ինձի: Ճակարագիր ա՝ էս ա... պրի ուրեմն դու գնաս, դիմանաս ամեն ինչին...Այ էրի լոզունգ անելով, ես սարեցի արդեն 40 փարի ա...Հիմա դե կիսուրս չե, քալս չի ամուսնացել, հետք ա: Տալս 66 փարեկան ա, կիսուր ա էլի, ու մինչև հիմա էլ ես էդ դորը զգում եմ, որ ես մինչև հիմա ծառայում եմ: Ես իրավունք չունեմ, իմ մարդու դարելով էլի, ես իրավունք չունեմ ինչ-որ մի բան ես ասեմ»:* (միջին մասնագիտական կրթությամբ կին)

Հարմարվելու ունակությունը որոշ առումով փոխանցվում է նաև սկեսուրներից հարսներին՝ խորհուրդների և հորդորանքների տեսքով. «*Հիմա իմ հարսս ասում ա. «Ես չէի դիմանա...», ես էլ ասում եմ. «...որ չդիմանաս՝ ընտանիք չես ունենա»:* (բարձրագույն կրթությամբ կին)

Հարմարվելը հարցմանը մասնակցած սկեսուրների կողմից ընկալվում է որպես սոցիալ-մշակութային կոնստրուկտ և մի երևույթ, որը փոխանցվում է սերնդեսերունդ: Հարմարվողական դիրքորոշումը ընդհանրապես ընկալվում է նաև որպես անխուսափելի և անքննելի մի բան:

«Սպասելիքներ չեմ ասի ունեի, որովհետև երբ որ նոր փուն ես գնում, արդեն սպասելիքներ չես ունենում, հակառակը՝ մրածում ես ընդունես էդ մարդկանց նիստուկացը, իրանց ավանդույթները, իրանց հարգես, այ էր քո քիսի: Բայց մեր դասարիս»

բակյութունը, էդ ժամանակ պապաս էլ էր խառնվում, պապայիս մամայիս դասարիարակությունը րենց ա եղել, որ դու ուր գնում ես, էդ ընտանիքը նոր ա ու դու ես գնում, ոչ թե իրանք են գալիս... Երբ որ գալիս ա նոր մեկը քո ընտանիք, դու մտածում ես, որ ինքը պեպք ա քո ընտանիքի նիստուկացը վերցնի, երբ որ դու ես գնացել, արդեն պարտավոր ես դու հարմարվես, մերվես, սիրես»։ (բարձրագույն կրթությամբ կին)

«Ապրել ենք, այո՛, սկեսորիս հետ։ Իրանք, իմիջիայլոց, ունեն հառանձին բնակարան ես, սակայն մեզ չթողեցին գնանք առանձին ապրելու, որովհետև կեսուրս կարծում էր, որ ձիշտը միասինն ա։ Ու րենց, մենք մինչև հիմա ապրում ենք միասին... Հարաբերություններ, որ ասեմ րենց գերազանց՝ չէ, որ ասեմ վար էլ՝ չէ... Ուղղակի ինքը լիդեր կին ա եղել իրա ամբողջ կյանքում, երեք երեխաներին կարելի ա ասել, որ մենակ ա դասարիարակել, ու ուզում էր, որ իմ վրա էլ իրա լիդերությունը տարածեր։ Պետք ա ցավով ասեմ, որ սրացվել ա, որովհետև ես այլ տարբերակ չունեի՝ հարմարվելուց բացի...»։ (բարձրագույն կրթությամբ կին)

Միևնույն ժամանակ հարցվողների մոտ կա նաև այն գիտակցումը, որ իրենց հարմարվողական վարքը ենթադրում է նաև որոշակի նահանջ, ենթակայի դիրքի վերահաստատում և որպես հետևանք՝ «լուրջ չընդունվելու» հեռանկար։

«Կոնֆլիկտներ չէ երևի, որովհետև ես արդեն ընտրել էի հարմարվողի կարգավիճակը... Հիմա եմ մտածում, որ եթե էն ժամանակ դրած լինեի իմ դրվածքը՝ միգուցե րենց չլինեք... Իրանք գիտեին, որ ես հարմարվելու եմ, դրա համար էլ էլ «լուրջ չէի վերաբերում ինձ», այսինքն գիտեին՝ դե ես եմ էլի... Ես մեջս կուրեի ինձ, բայց չէի գնա ու ասեի, որ էս բանը սենց չի՝ նենց ա...»։ (բարձրագույն կրթությամբ կին)

«...Ու ես, դա իմ մեջ եղել ա վիրավորված, վիրավորանք։ Ես չեմ արտահայտվել, ես էտ ամեն ինչը կու եմ տվել՝ սխալվել եմ։ Հիմա մտածում եմ, որ հետ գնամ էտ կյանքը նորից, արդեն լրիվ ուրիշ ձև կանեմ։ Կանեմ նենց, ոնց անում էր րեքորս կինը, ինքը ոնց ուզում էր րեքորս ուղեղը լվացնում էր, ինքը անում էր, կարողանում էր։ Ես չէ, ես, ինչ ասել են, ենթարկվել եմ։ Այ դա ա սխալը եղել։ Ես իմ կարծիքս չեմ բան արել, որ հաշվի առնեն իմ կարծիքս, դրա համար պարտասխանը էտ ձև եմ սրացել»։ (միջին մասնագիտական կրթությամբ կին)

Ավելին, ինչպես նաև շատ այլ հարցերի դեպքում, ամուսնու բարեկամների հետ լավ հարաբերություններ ունենալու պարտականությունը

ևս ակնկալվում է հարսից: Եվ այդ դիրքորոշումը լիովին ներքնայնացվում է նաև հենց հարսների կողմից:

«Ես կարծում եմ, որ դաստիարակությունը հարսի, աղջկա շարք մեծ կապ ունի, կարևոր ա, թե քո ծնողը քո մեջ ինչ կող ա դրել: Տենց աղջիկներ կան, որ գնում ա ու ինքը արդեն պահանջներ ունի, իսկ ինձ ասում էին, որ որտեղ քո ամուսինն ա սպրում, ընդեղ դու պետք ա սպրես, առանձնանալու մասին խոսք չկար, հետո էդ ժամանակ ամոթ էր վարձով սպրելը»: (բարձրագույն կրթությամբ կին)

Որոշ չափով հայկական ընտանիքներում հարաբերությունները հակադրվում են նաև այլ մշակույթներին բնորոշ ընտանեկան հարաբերություններին:

«Իմ կեսուրս ոռու էր լրիվ, կեսուրս՝ կիսով: Ու ես միշտ տեսել եմ կեսուրս նստած ծխում էր ու խաչքառ էր լրացնում, իսկ կեսուրս ճաշ էր եփում: Կեսուրս միշտ շուկա էր ուղարկում էր խեղձ մարդուն, օրվա մեջ մի քանի անգամ: Հա, ես էս եմ տեսել, ես չեմ տեսել, որ ամուսինը կնոջը ճնշի, կինը ենթարկվի: Ու էր ընտանիքում ղնց կարելի ա վայր հարաբերություններ լինի: Չէ, շարք լավ հարաբերություններ ենք ունեցել: Հետո ես գրնում եմ, որ դա միակողմանի չի, դա չես կարող ասել՝ վայ կեսուրք լավ կին չի, հարսը՝ սուրբ ա: Չէ, տենց չի, երկկողմանի հարաբերություններ են էղել»: (բարձրագույն կրթությամբ կին)

2.9. ՄԿԵՍՈՒՐ – ՀԱՐՍ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.9.1. Բռնություն հարսի նկատմամբ

Հետազոտության խնդիրներից էր նաև պարզել սկեսուրների վերաբերմունքը հարսի նկատմամբ բռնության երևույթի վերաբերյալ և հասկանալ, թե որքանով է բռնությունը հարսի նկատմամբ արդարացվում և լեգիտիմացվում:

Հետաքրքիր է, որ հարցվողներից ոմանք համարում են, որ բռնությունը հարսի նկատմամբ ընդունելի է, սակայն ոչ իրենց կողմից: *«Բայց կիսուրք ղնվ ա, որ բռնություն գործադրի հարսին, իրա ամուսինը գրնում ա պետք ա՝ թող ինքը, բայց ոչ թե կիսուրք...»:* (միջին մասնագիտական կրթությամբ կին)

Հիմնականում ճշումների և բռնության մասին խոսելիս հարցվողները օրինակներ էին բերում իրենց հարևաններից կամ բարեկամներից:

«Է֛ր փա՛ն հարսը դպրոցում ա աշխատում ո՛նց որ, դե 8-ին պետք ա ընդեղ լինի, առավոտ գարթնում ենք իրա դիվանի շոր ու խալի թափ փաշու էր ձայնից: Մուտքում թափ ա փալիս դրանք, փները սաղ մաքրում ա, նոր ա գնում գործի: Հիմա ես չգիտեմ՝ էր ինչ ա՛՝ վերահսկողություն՞ն ա, թե իրանց փան դրվածքն ա փենց... Բայց մի անգամ չի էլի, պարբերաբար լսում եմ, որ առավոտ շուր գորգերն ա հանում թափ փալիս...»: (բարձրագույն կրթությամբ կին)

Որոշ դեպքերում վերահսկումը հարսի նկատմամբ տեղի է ունենում նաև սկեսորի սկեսրոջ կողմից, հատկապես երբ նրանք ապրում են միասին:

«...Էն ժամանակ հլը աղջիկս էլ ամուսնացած չէր, ամեն օր մեկը կոպում էր Ա.-ի (հարսի) հետ, ու ամեն օր փարբեր պարծառներով: Տարիի հետ՝ էլ չասեմ... Տարին իրան ա կեսուրոթյուն անում, ոչ թե ինձ: Չսայած իմ վրա էլ միշտ խոսում ա, ասում ա լավ չես անում, որ աչքաթող ես անում»: (միջին մասնագիտական կրթությամբ կին)

Ինչպես երևում է հետազոտության արդյունքների վերլուծությունից, ընդհանրապես հարսի ընկալումը որպես ծառայող, բոլորի պահանջմունքները հոգացող, բավականին ընդունված երևույթ է: Ավելին, շատերի կարծիքով ամուսնու ընտանիքին ծառայելը պետք է գոնե փոխհատուցվի նույն ձևի ծառայող հարս ունենալով: «Ես միշտ ասում էի. «Աստված ջան, սաղի դեմը սաղ կյանքս ծառայել եմ, մի օր կլինի՞ մի հայր հարս էլ իմ համար ծառայի, կոֆե դնի, ես խմեմ»»: (միջին մասնագիտական կրթությամբ կին)

Հետազոտությունը թույլ տվեց բացահայտել նաև հետաքրքիր օրինակափություն. մոր և կնոջ կոնֆլիկտներում որդին/ամուսինը դրսևորում են փախուստի ռազմավարություն՝ գերադասելով չխառնվել կոնֆլիկտների: Այս առումով տիպիկ է հարցազրույցներից մեկից հետևյալ մեջբերումը. «...հիմա փենց հարցերի շուրջ ա լինում վեճեր, որ օրինակ ասում եմ. «Դուրը մի բաց ոչ մեկի դեմ...», գալիս եմ փուն, իմանում եմ, որ բացել ա, փենց վիճում ենք, ամուսինս փանն ա եղել, գիտի, որ բացել ա դուրը, բայց չի ասում, ասում ա. «ես էր ժամանակ բաղնիքում էի կամ չեմ լսել...»: (միջին մասնագիտական կրթությամբ կին)

Միայն մի քանի դեպքերում ամուսինները ակնհայտ ֆիզիկական բռնություն են կիրառել իրենց կանանց նկատմամբ՝ մորը չհնազանդվելու համար: Այսպես օրինակ, ըստ հարցվողներից մեկի. «...ամուսինս մոր կողմն էր բռնում, մորն էր պաշտպանում, եղել ա, որ մոր պարծառով ինձ ծեծել ա, էլ դրանից էն կողմ ինչ... Ես գիտեի, որ էս մարդը էնքան խելոք մարդ ա, որ ինքը դաժե իրա երեխերի վրա ձեռք չի բարձրացրել երեք, ուրեմն էր պատավը ինչքան էր հասցնում, որ ինձ նա խփում էր...»: (միջին մասնագիտական կրթությամբ կին)

Որոշ դեպքերում էլ ճնշումները տղայի ընտանիքի վրա եղել են ոչ թե ամուսնու ծնողների, այլ հենց ամուսինների կողմից: Օրինակ, ինչպես

նշեց հարցվողներից մեկը. «Ֆիզիկականի մասին չեմ խոսի, որովհետև չի եղել, իսկ հոգեբանական ու մտավոր դե միշտ էլ եղել ա, ամուսինս շատ խիստ ու կոպիտ մարդ էր, երբեք վրաս ձեռք չի բարձրացրել, բայց միշտ, որ կշոյասանար, շատ վատ ձևով էր խոսում իմ հետ, երեխեքի հետ: Երեխեքի հետ էր շատ խիստ, մենք էն ժամանակ ապրում էինք Մանտում, աղջիկս ընդունվել էր Մանկավարժական համալսարան, եկել էր սրեղ վարձով էր ապրում մենակ: Ամուսինս ամեն օր թաքուն գալիս էր, որ տեսնի ինչ ա անում աղջիկը, հո չի քսվել, փանն ա...Տունը վարձել էր Ռոսիայում, որ ժամ պահեր, որ 10 բուպեից զանգեր փուն դասից հետո, պեքք ա վերցնեք հեռախոսը երեխեն...Շատ խիստ ու կոպիտ մարդ էր...»: (բարձրագույն կրթությամբ կին)

«Ես չե, բայց ամուսինս. փղայիս ամուսնացրել ենք 20 փունեկան չկար դեռ, հարսս էլ 14, 15-ը մեր փանն ենք նշել: Իրանք դպրոցից հավանել, սիրում էին իրար, էր աղջկա մայրն էլ չէր ուզում. դե շուր էր, փոքր էր: Հեքո ամուսինս գնացել էր մի օր, գենքով բանով, մեկ էլ տեսնեմ հարսիս նստացրել կողքը բերել էր փուն: Ու տենց, հարսանիք բան էլ չենք արել, ուղղակի եկավ սկսեց մեր փունը ապրել: Հիմն ամուսնացած են արդեն համար-յա 21 փարի...»: (բարձրագույն կրթությամբ կին)

«Բռնություն չե, բայց վերահսկողությունը չափի մեջ նորմալ եմ նայում: Որովհետև, եթե հարսը իմ հարսի նման ա, պարտադիր ա դաժե վերահսկելը իրան...Ամուսինս էր լավ վերահսկում հարսին... Երեխեն մինչև հետևը ուներ երկար փարթամ մազեր... Ամեն օր, որ սանրում էր, հայելու մոտ կանգնում-հիանում էր իրանով, մի օր էս ամուսինս բռնեց-կտրեց, ու ասեց, որ էլ հայելու մոտ չկանգնի... Չէր թողում էր աղջիկը պարտիանից նայել... Չնայած էր ինձ էլ չէր թողում, չէր թողում հեռախոս վերցնեինք ո՛չ ես, ո՛չ ինքը...»: (միջնակարգ կրթությամբ կին)

Հարկ է նշել նաև, որ ամուսինների կողմից սահմանափակումները հաճախ նույնիսկ չեն գիտակցվել որպես այդպիսիք: Փոխարենը ամուսնու կողմից սահմանափակումները և ճնշումները ընկալվել են որպես սղամարդու և կնոջ միջև հարաբերությունների բնականոն դրսևորումներ: «Հիշում եմ մենակ, որ ուզում էի սովորեի, ամուսինս չթողեց: Մենք դե Շահումյանից պեքք ա գայինք Երևան, որ սովորեի, չթողեց: Ասում էր. «Միևնույնն ա, որ սովորես էլ՝ չես աշխատելու, որովհետև չեմ թողնի...»: Ամուսնացել եմ, մենք շատ լավ էինք ապրում, կարիքը չի էլ եղել, որ ես աշխատեմ»: (միջնակարգ կրթությամբ կին)

2.9.2. Սկեսուրների ինքնաընկալումը և դերը տղայի ընտանիքում

Հարցվողների զգալի մեծամասնությունը գտնում է, որ իրենք անհամեմատելի ավելի լավ սկեսուրներ են և շատ ավելի լավ են վերաբերվում իրենց հարսներին, քան իրենց վերաբերվել են իրենց սկեսուրները:

«Չէ, ես էդ ամեն ինչ տեսել եմ, ես ուրիշների նման չեմ չարացել, ինձ չարություն են անում, ես բարություն եմ պարասխանում: Ես չէ, հլը ինչով կարում եմ օգնում եմ... Թոռներիս, տղուս, հարսիս էլ...»: (միջին մասնագիտական կրթությամբ կին)

Հարցվող սկեսուրների մեծամասնությունը նշում է նաև, որ ներկա սերունդը շատ է փոխվել, և իրենք չեն էլ կարող պատկերացնել, որ կարող են նույն կերպ վարվել իրենց հարսների հետ ինչպես իրենց հետ ժամանակին վարվել են իրենց սկեսուրները և ամուսնու բարեկամները:

«Հիմիկվա սերունդը նենց չի, որ ասենք էն ժամանակվա նման, հիմա իրանք իրանց կարծիքն ունեն, իրանք ասում են սենց, պետք աս ես հաշվի առնեմ իմ հարսի կարծիքը, իմ տղու կարծիքը, ես չեմ կարա որոշեմ իմ հարսն ուր գնա, ուր չգնա, ոնց որ իմ հետք անում էր իմ կիսուրս... ես իմ կյանքս տեսել եմ, գիտեմ էր ինչ աս՝ միասին ապրելը, դժվարությունները, ու ես չեմ ուզում, որ հիմա իմ հարսն էլ կամ հարսներն էլ դա տեսնեն, իմ տղաներս ապրեն էր վիճակով: Ես ինքս իմ կաշվի վրա էր զգացել եմ, ես ոնց իրանց էլ նույնն ասեմ»: (միջին մասնագիտական կրթությամբ կին)

Սակայն միևնույն ժամանակ, հարցազրույցների առավել խորքային վերլուծությունը ցույց է տալիս, որ հիմնականում հարցվող սկեսուրները ցանկանում են ներկայացնել իրենց ավելի դրական լույսի ներքո, քան դա իրականում կա: Այսպես օրինակ, սկեսուրներից մեկի կարծիքով ինքը որևէ կերպ չի միջամտում իրա տղայի ընտանիքի գործերին, սակայն տղայի վաստակած գումարը, այնուամենայնիվ, ինքն է տնօրինում:

«Չէ, միջամտում եմ էսքանով, որ տղաս գումարը աշխատած բերում աս տղայիս աս ինձ, հիմա մի քիչ վարկ, պարտք ունենք, տղայիս աս ինձ ու գիտի, որ ես կազմակերպում եմ էր ամեն ինչը, հետո ես էլ ինքս աշխատում եմ, երեխա եմ խնամում, որ դա էլ դնեմ տղայիս աշխատածի վրան, օգնեմ իրան: Հետո ինքը գիտի, որ մենք ոչ մեկս Մ.-ին չենք ափսոսում ոչ մի բան, ինքն էլ Մ.-ն էլ, չի նեղվում, չի մտածում. «Տես, փողը արանում աս, բերում տղայիս աս մորը...», ինքն էլ գիտի, տեսնում աս, որ էս մի պահն աս, կանցսի ու ամեն ինչ կրնկսի իրա տեղը: Էնպես չի, որ իրան չի տղայիս, իրան էլ ձեռքի ծախս աս տղայիս՝ մանկապարտեզ տանել աս, դուրս գալ աս...»: (միջին մասնագիտական կրթությամբ կին)

Քիչ չեն նաև այնպիսի դեպքեր, երբ սկետուրները պնդում էին, որ հարսների հետ ունեն չափազանց սիրալիր հարաբերություններ և երբեք իրենց թույլ չեն տա խառնվել տղայի ընտանիքի գործերին, սակայն հարցազրույցում կարող էին թույլ տալ այնպիսի արտահայտություններ, ինչպիսիք են՝ «հարսը ո՞վ ա», «իրանք են իմ հարսները, ես չեմ կարողանում իրանց բան ասեմ», «ես ամեն ինչ էլ ասում եմ, եթե դուրս չի գալիս, նեղաւում են՝ նեղանան» և այլն:

«Չէ, իմ տղերքը ինձ պաշտում են, ես էլ իրանց, հարսը ո՞վ ա, որ իրա պարճատույ էս իմ տղու հետ փոխվեմ»: (միջին մասնագիտական կրթությամբ կին)

«Հիմա մի հարսս ունի մի տղա, մյուսը՝ մի աղջիկ: Իմ համար լրիվ մեկ ա, ես երկու թոռ էլ ունեմ, բայց ես գիտեմ, որ քրոջը քուր ա պեղք, ես գիտեմ՝ քուրը ինչ լավ բան ա, դրա համար էն հարսիս ասում եմ, որ աղջիկ ունենա մի հարս էլ, բայց ինքը արդեն ուզում ա հղիանա, ու ասում ա, որ տղա ա ուզում... Չնայած, ինքն էլ կրծքերի խնդիր ունի, կարող ա էլ երրորդը չկարողանա բերի, եսիմ...»: (միջնակարգ կրթությամբ կին)

«Վերջին կոնֆլիկտը էս ա եղել, թոռիս ծնունդն ա, կանչել են իրանց ընկեր-ընկերուհիներին, իմ քրոջս աղջկան չեն կանչել, նեղացա, ասում եմ. «Կանչեիք, էր մի հոգին ձեզ ինչ էր խանգարում...»: (բարձրագույն կրթությամբ կին)

«Չէ, առանձինի լավը էր ա էլի, որ իրար ձեռի չենք նայում: Բայց ես ասող եմ, իմ քնավորությունս էր ա, որ մի բան տեսնում եմ՝ պրի ասեմ, որ հանգստանամ: Որ գնում, տեսնում եմ մի բան սրտովս չի, ասում եմ, էն վախար ասում էի չնեղանան հանկարծ, բայց հիմա՝ էլ չէ: Ու հիմա ահագին սովորել ենք իրար, էլ չենք նեղանում, խոսում ենք, անցնում ա: Ետևանում էլ ենք, ես մոռանում եմ, մեկ էլ վերցնում, զանգում եմ»: (բարձրագույն կրթությամբ կին)

Թեև սկետուրները պնդում են, որ չեն միջամտում տղաների ընտանիքի գործերին և առավել ևս չեն խառնվում ապագա թոռների քանակի և սեռի մասին խոսակցություններին, այնուամենայնիվ, հատկանշական է տ. Կ-ի հետ հարցազրույցից հատվածը. «Բայց ես հենց իմացա, որ հղի ա, ասեցի. «Աղջիկ ա լինելու, էլ իզուր տեղը հոյսեր մի փայփայեք...»: Ու իրոք, որ էրոն ասեց աղջիկ, ես շար-շար ծանր տարա»:

(միջին մասնագիտական կրթությամբ կին)

Հաճախ էլ սկետուրների միջամտությունը սկսում է հենց ապագա հարս ընտրելուց:

«Երրորդ տղային հարսին ես եմ ընտրել, գնացի քրոջս տուն, իրանց հարևանի աղջիկն էր, տեսա, շատ հավանեցի: Էլի Նոր տարի էր, գնացի տուն ու շուտ տղուս ուղարկեցի... Քուրս կանչել էր, տեսել-հավանել էր Նորիկս, մի անգամ եկան մեր տուն հյուր, ուզում էի պահելի, չթողեի գնար... Չեղավ էր անգամ, բայց մեկ աս տեսնեղավ էլի՝ հարսանիք բան չարեցինք... Էս տղես աշխատում էր, մեքելի գործ էր անում, Էսքան փող էր աշխատում, որ ընտրանիք կարար պահեր, բայց չէր ամուսնանում... Դրա համար իրա համար արդեն ես էի ման գալիս աղջիկ, համ էլ գոնե մի հարսս որ իմ սրտով լիներ, որ «իմ կողմից լիներ»: (միջին մասնագիտական կին)

«Չէ, ես ասում էի. «Էս տարի մեկը պեքք աս ամուսնանաք... ինձ հարս աս պեքք... ես արդեն չեմ կարում մենակ...»: Էր կատարակ էի անում, որ ավելի, գոնե ինձ խղճային ու մի բան ձեռնարկեին: Ու տեսնե, մի տղուս խաբելով, համոզելով, ամուսնացրեցի»: (միջին մասնագիտական կրթությամբ կին)

Միջամտությունները տղայի և հարսի հարաբերությունների մեջ որոշ դեպքերում տեղի են ունենում անուղղակի ձևով, և այսպիսի անուղղակի միջամտությունները սկեսուրների կողմից ընդհանրապես չեն ընկալվում որպես ներխուժում տղայի ընտանիքի մեջ:

«Կա, որ մի բան ինձ դուր չի գալիս, կանչում եմ հարսիս, ասում եմ. «Գ., էս ինչ աս...», ասում եմ, տեսնում եմ, որ մեկ, երկու չի ուղղում սխալը, ասում եմ՝ «Ա.-ին (տղային) կասեմ...» ու ինքը արդեն զգաստանում աս... Ու ես Ա.-ին հո չեմ գնում ասում. «Վայ, գիտես ինչ՝ էս Գ.-ն էս բանն աս արել...», չէ, ասնեք Ա.-ը նստած աս, գնում եմ, ասում եմ. «Գ., էս ո՞վ աս արել... Քանի անգամ էի ասել չանես էս, կամ ինձ կհարցնես...», արդեն ինքը իրանը առնում աս... Ինքն էլ շատ լավ հասկանում աս, որ ես ուզում եմ էրի Ա.-ն լսի... Ինքը շատ հաստատարակամ աս, ասեն ինչ գիտի ասել, բայց ինչ էլ չգիտի, չի էլ ուզում սովորի: Մի քանի տարի տանը խմորեղենի դասեր էի տալիս, ինքը էր ժամանակ խոհանոց չէր մտնում, մինչև հիմա, ինքը խմոր տանել չի կարում, խմորով ոչ մի բան չի անում»: (միջին մասնագիտական կրթությամբ կին)

Հետաքրքիր է նաև այն, որ նույնիսկ այն սկեսուրների լեզվական դիսկուրսում, ովքեր գտնում են, որ իրենք շատ լավ սկեսուրներ են իրենց հարսների համար և երբեք իրենց թույլ չեն տա խառնվել հարսների գործերին, միևնույն է գերակշռում է այն դիրքորոշումը, որ սկեսուրը իրավունք ունի «մունաթ գալ» և ինչ- որ բաներ ստիպել և պարտադրել հարսներին:

«Գալիս էր, դուռը ծեծում էր սենյակի, ասում էր. «Վ. կներես էլի, գրուիս ցավում աս, էսօր դու կգնաս Անիի համար կաթ առնես...», այ էդ ձևի էր: Փոխանակ մի հար մունասթ գար, ասեր՝ քո երեխեն, դու էլ գնաս կաթ առ, տենց էր ասում»: (միջին մասնագիտական կրթությամբ կին)

Հարցազրույցներում ակնհայտորեն դրսևորվում է սոցիալական համեմատության երևույթը: Սոցիալական համեմատության գործընթացը առաջանում է, երբ կարծիքների և կարողությունների գնահատումը իրագործելի չէ միայն շրջապատում փորձարկումների շտրիիվ: Նման պայմաններում մարդիկ իրենց կարծիքները և կարողությունները գնահատում են համեմատվելով մյուսների հետ: Ընդհանրապես, մարդիկ իրենք իրենց տարբեր պատճառներով կարող են համեմատել մյուսների հետ: Հիմնականում դա արվում է սեփական ինքնագնահատականը և իքնաարդյունավետությունը բարձրացնելու նպատակով:²¹

Այս տեսության համաձայն օբյեկտիվ չափանիշների բացակայության դեպքում (որոնք անհրաժեշտ են անձնային գծերը գնահատելու համար) մարդիկ փնտրում են այլ մարդկանց, որպեսզի համեմատության միջոցով գնահատվեն: Սկզբում տարբերակների լայն ընտրության խնդրի առաջ են կանգնում. անձնային որակներ, արտաքին տեսք, նույնիսկ վերացական երևույթ՝ երջանկության գնահատում, էական չէ, կարևորն այն է, որ մարդիկ կենտրոնանում են դիմացինի անձնային հատկանիշների, արտաքին տեսքի և երջանկության վրա, այսինքն մեր սոցիալական միջավայրի վրա:

Պարբերաբար հարցազրույցների ընթացքում սկեսուրները համեմատում են իրենց այլ սկեսուրների հետ՝ հարևանուհիների, բարեկամների, ընկերուհիների՝ ի օգուտ իրենց, իսկ նրանք, ովքեր ունեն դուստրեր, համեմատում են իրենց աղջիկների սկեսուրների հետ:

«Իմ աղջիկս ամուսնացած աս մեծը, մյուսը՝ նշանված... Աղջկաս կիսուրը՝ այ կիսուր եմ ասել... Ոչ միայն ինքը, այլև՝ քուրը, ամեն ինչ իրանք են անում, որոշում... Չուսած, փեասս տենց թույլ չի, որ թողի, բայց աղջիկս պարմում աս, որ սաղ իրանք երկու քուր են ասում՝ որը ոնց անի... Էր էլ շտրիք չի էլի... Ասում աս, որ մի տեղ եմ գնում, կիսուրս գանգում աս քրոջը, ասում աս. «Վ.-ը (հարսը) ծունդ աս, ինչ փանի նվեր...»: Հարսս էլ, տենց բաները լսում աս, մի անգամ կարակով ասեց. «Իրա ֆոնի վրա ավելի շար եմ սկսել քեզ սիրել...»: (միջին մասնագիտական կրթությամբ կին)

²¹ Jerry Suls, Thomas Ashby Wills, Social Comparison: Contemporary theory and research//Lawrence Elbaum Associates, Inc; Hillsdale, New Jersey, 1991, P. 23

«Օրինակ իմ աղջիկը, բռնությունից և փախել՝ սկեսորի բռնությունից: Էր կնոջ Կրիստին մի անգամ ամուսնացել և, հարսը թողել-փախել և՛ բառի բուն իմաստով, հեղո աղջիկս: Իրանք Կրիստինը ծանր էին ասարում սկզբում եւ շար էի օգնում աղջկաս, ամեն ինչ փութի օժիտով, ասեցի երեխես հանկարծ չնեղվի: Հեղո մենք գնում էինք, միշտ բեռով-բարձով...Թոռնիկս ծախել էր, ինչս թե ինքը հարսի հեղ չէր խոսում, ասում և երեխեսն լացում-կապարում էր՝ չէր մոտիկանում, լվացք էր անում՝ երեխո շորերը չէր լվանում: Էս վերջում էլ, արդեն աղջկաս գալուց հեղո իմացանք, հարևանների մոտ ասել և. «...իրա մերն ու հեղը գիտեն, որ ինքը ինչքան և ուրում, դրա համար են բերում, որ իրանց աղջիկը ուրի...», հեղո ասել և՛ ինքը աղջիկ չի ամուսնացել, ես իմ Կրիստին խաթր ընդունել եմ...»: (միջին մասնագիտական կրթությամբ կին)

«Օրինակ, ես Կրիստին չեմ, բայց քուր օրինակ, որ մի բան ասում եմ, դե թող հարսը որոշի, ասում և. «Էր էր մնացել պակաս, հարսը գա իմ Կրիստին մեջ բաներ որոշի, թող գա, Կրիստին, հարմարվի...Երբ որ իրա Կրիստինը կդնի, ես կգնամ ընդեղ, ես էլ իրան կհարմարվեմ...», ու շար կան մեր հարևաններից, որ լսում ես, որ վլասարը կիսուրի ձեռին և, որ խեղճ հարսին չեն թողում բացվի, ինքնուրույն մի բան անի... Գնացել ենք կոֆե խմելու, արդեն երևի 2 Կրիստին հարս և, ամեն 2 բուլեն մեկ կանչում, կիսուրին մի բան հարցնում էր, դու զգում ես, որ ինքը ինքնուրույն կան չի կարող, կան թույլ չեն Կրիստին մի բան անել»: (միջին մասնագիտական կրթությամբ կին)

Հարցվող սկեսորների համար հարսների կողմից իրենց «մամա» ասելը համարվում է մտերմության նշան և հարս-սկեսոր կոնֆլիկտների սիմվոլիկ ավարտ: «Առաջ նույնիսկ (եւ հիմա Ձեզ ավելին ասեմ), մի քանի ամիս առաջ և, որ ինքը ինձ սկսելա «մամա» ասել, բայց ես դրան հասել եմ...Ու հեղ չի եղել, մամա բառը չէր ասում, միգուցե ինչ-որ մեկը իմ փոխարեն չխորանար, ուղղակի ասեր. «Հաս, ես քո համար օրար եմ, դրա համար չեմ ասում մամա...», բայց ես հասա նրան, որ ասեց, էն ժամանակ ուղղակի օրի մեջ էր խոսում»: (բարձրագույն կրթությամբ կին)